

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Դավիթ Զամալյան

Հայ - ադրբեջանական հակամարտության քարոզչական նկարագիրը

*Հայաստանի Հանրապետության և Արցախի
հոգեբանական անվճանգության խնդիրները
հայ-ադրբեջանական հակամարտության համաճեփում*

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2015

ՀՏԴ 323.232:327
ԳՄԴ 66.3+66.4
Ջ 240

*Հրատարակության է երաժիշակորել
ԵՊՀ ժուռնալիսիկայի ֆակուլտետի
գիտական խորհուրդը*

Խմբագիր՝ բան. գիտ. թեկնածու, դոցենտ Ն. Մարտիրոսյան

Ձանայան Դ. Վ.

Ջ 240 Հայ - ադրբեջանական հակամարտության քարոզչական նկարագիրը. Հայաստանի Հանրապետության և Արցախի հոգեբանական անվտանգության խնդիրները հայ - ադրբեջանական հակամարտության համատեքստում/Դ. Վ. Ձանայան. - Երևան, ԵՊՀ հրատ., 2015 թ. 164 էջ:

Գիրքը վերաբերում է հայ - ադրբեջանական հակամարտության քարոզչական նկարագրին: Գրքում խոսվում է Հայաստանի Հանրապետության դեմ պաշտոնական Բաքվի ծավալված քարոզչության ուղղությունների, այդ ուղղություններից յուրաքանչյուրի նպատակների, ռազմավարության ու թեզերի մասին: Առանձնահատուկ ուշադրություն է դարձված թշնամական քարոզչության «հայաստանյան ուղղությանը»՝ այն թեզերին, որոնք ադրբեջանական քարոզչամեքենան փորձում է զարգացնել մեզանում:

Գրքում անդրադարձ է արված ադրբեջանական քարոզչության խոցելի կողմերին, մանրամասնորեն ներկայացված են ադրբեջանական քարոզչական ագրեսիային դիմակայելու և հաջողությամբ հակազդելու ուղիները:

ՀՏԴ 323.232:327
ԳՄԴ 66.3+66.4

ISBN 978-5-8084-1952-0

© ԵՊՀ հրատ., 2015
© Ձանայան Դ. Վ., 2015

Հեղինակի կողմից

Ընթերցողի դատին է ներկայացվում «Հայ - ադրբեջանական հակամարտության քարոզչական ասպեկտները» աշխատությունը: Այն նվիրված է մեր երկրի համար հրատապ մի խնդրի՝ Հայաստանի դեմ տարվող թուրք - ադրբեջանական քարոզչությանը:

1994-ից առ այսօր՝ Ադրբեջանի հետ հայոց երկու պետությունների սահմանին հաստատվել է հրադադար: Արդեն քսան տարի է, ինչ ազատագրված է 11432 քառ. կմ հայրենիք, քսան տարի է, ինչ Արցախը հայապատկան է, սակայն հայ - ադրբեջանական հակամարտությունը կարգավորված չէ. կարգավորված չէ, քանզի Ադրբեջանը դեռևս հավակնում է Արցախի տարածքի հանդեպ: Եվ ահա երկու տասնամյակ է, ինչ այդ հակամարտությունը մոլեգնում է դիվանագիտական և տեղեկատվական հարթակներում: Մասնավորապես, տարիներ շարունակ Բաքվում և Անկարայում փորձում են Հայաստանի հանդեպ տնտեսական, դիվանագիտական և հոգեբանական ճնշումներ բանեցնելով՝ Հայաստանում հասունացնել Արցախն Ադրբեջանին հանձնելու դիրքորոշումներ:

Այսօր արդեն առավել քան ակնհայտ է, որ թուրք - ադրբեջանական քարոզչությունը վտանգում է մեր երկրի անվտանգությունը: Ավելին, այդ քարոզչությունը իրավամբ պետք է գնահատել որպես Հայաստանի անվտանգությանը սպառնացող արտաքին մարտահրավեր: Հետևաբար՝ Բաքվի քարոզչամեքենային հաջողությամբ դիմակայելն ու երկրում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ ապահովելը մեզ համար եղել և մնալու է որպես առաջնահերթություն:

Ի՞նչ է «հոգեբանական անվտանգություն»

ասվածը, ի՞նչ նպատակներ է հետապնդում ադրբեջանական քարոզչությունը, ի՞նչ թեզեր է օգտագործում թշնամին իր քարոզչական նպատակը ձեռք բերելու համար, որո՞նք են թշնամական քարոզչության առավելություններն ու խոցելի կողմերը: Եվ թերևս ամենակարևորը՝ ինչպե՞ս հակազդել թուրք - ադրբեջանական քարոզչական ագրեսիային, ինչպե՞ս չեզոքացնել նրանից բխող սպառնալիքները: Ահա հարցերի այն շրջանակը, որոնց անդրադարձ է արված աշխատությունում:

Հույս ունենք, որ աշխատությունը օգտակար կլինի Հայաստանի անվտանգության խնդիրներով զբաղվող մասնագետների լայն շրջանակների համար:

ԳԼՈՒԽ 1

Ի՞ՆՉ Է ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Պատկերացում հոգեբանական անվտանգության մասին

Հոգեբանական անվտանգությունը երկրի անվտանգության համակարգի բաղադրիչներից է, առանց որի այն լիարժեքորեն ապահովել հնարավոր չէ: Հոգեբանական անվտանգությունը հրադադարի պայմաններում ապրող մեր երկրի կենսունակության գրավականներից է:

Գաղտնիք չէ, որ սեփական շահերը կենսագործելու նպատակով պետությունները գտնվում են մշտական *հոգեբանական յայտարարի* մեջ: Վերջինս մի գործընթաց է՝ բաղկացած երկու բաղադրիչներից՝ հոգեբանական պատերազմից և հոգեբանական անվտանգության ապահովումից: Այսպես, եթե *հոգեբանական յատերազմը* հակառակորդի դեմ ուղղված մի շարք մասնավոր հոգեբանական դիվերսիաների ամբողջությունն է, հոգեբանական ազդեցության տարբեր ձևերի հանրագումար, ապա *հոգեբանական անվտանգության ապահովում* ասելով պետք է հասկանալ հակառակորդի համանման ազդեցություններին հակազդելու միջոցառումների ամբողջությունը, ըստ էության, անընդհատ մի գործընթաց¹:

¹ Այստեղ անհրաժեշտ է զանազանել միմյանցից «հոգեբանական պայքար», «հոգեբանական պատերազմ» և «հոգեբանական անվտանգություն» եզրույթները ընդհանուրի և մասնավորի տրամաբանությամբ: Բանն այն է, որ «պայքար» եզրը մենք տվյալ դեպքում դիտարկում ենք որպես մի ընդգրկուն հասկացություն, որտեղ առկա է և՛ հակառակորդի դեմ իրականացվող ակտիվությունը, և՛ հակառակորդի հա-

«Հոգեբանական պատերազմ» հասկացությունը մենք դիտարկում ենք իբրև հոգեբանական պայքարի, այսպես կոչված, «հարձակողական» կողմը, որի թիրախը հակառակորդ երկրի բնակչությունն է՝ առանձին խմբերի կամ էլ՝ ողջ հասարակության հանրային հոգեկանը: Հոգեբանական պատերազմն որևէ երկրի հատուկ մարմինների կողմից իրականացվող հոգեբանական հատուկ համալիր ազդեցություն է այլ երկրի քաղաքացիական բնակչության կամ զինված ուժերի անձնակազմի վրա՝ քաղաքական, զուտ ռազմական նպատակների իրականացման համար²: Տվյալ դեպքում «հատուկ համալիր ազդեցություն» ասելով մենք ի նկատի ունենք մարդկանց հոգեկանի վրա ներգործելու տարբեր ձևերի ամբողջություն:

Հոգեբանական պատերազմի նպատակն է ցանկալի ուղղությամբ փոփոխել այս կամ այն հարցի վերաբերյալ հակառակորդ երկրի ազգաբնակչության. ինչպես առանձին մարդկանց, այնպես էլ առանձին խմբերի, այդ թվում նաև ողջ հանրության դիրքորոշումները, խախտել մարդկանց հոգեկան հավասարակշռությունը, կազմալուծել խմբի նպատակաուղղված – կազմակերպված գործունեությունը՝ մարդկանց հնարավորինս կառավարելի դարձնելով:

Հոգեբանական պատերազմի նպատակն է ցանկալի ուղղությամբ փոփոխել այս կամ այն հարցի վերաբերյալ հակառակորդ երկրի ազգաբնակչության ինչպես առանձին մարդկանց, այնպես էլ առանձին խմբերի, այդ թվում նաև ողջ հանրության դիրքորոշումները, խախտել մարդկանց հոգեկան հավասարակշռությունը, կազմալուծել խմբի նպատակաուղղված – կազմակերպված գործունեությունը՝ մարդկանց հնարավորինս կառավարելի դարձնելով:

ժամանակակից հոգեբանության բնագավառում

մանման ազդեցություններից պաշտպանվելուն ուղղված ակտիվությունը:

² Крысько В. Г., Секреты психологической войны (цели, задачи, методы, формы, опыт), Минск, 1999, стр 5.

մանման ազդեցություններից պաշտպանվելուն ուղղված ակտիվությունը:

² Крысько В. Г., Секреты психологической войны (цели, задачи, методы, формы, опыт), Минск, 1999, стр 5.

դիրքորոշում ասելով հասկանում են համապատասխան կերպով գործելու ներհոգեկան պատրաստականության վիճակը: Դիրքորոշումը հոգեբանական կառույց է, համակարգ՝ բաղկացած երեք բաղադրիչներից: Դրանք են՝ իմացականը (կարծիք), հուզականը (տրամադրություն) և վարքայինը (գործողություններ): Ձևավորված դիրքորոշման շնորհիվ անձը ընկալում է ապագա իրադարձությունները որոշակի ուղղվածությամբ: Դիրքորոշումը նախորդում է գործունեությանը և պահպանում նրա ընթացքը հստակորեն նպատակաուղղված ձևով: Փոփոխել այս կամ այն խնդրի վերաբերյալ անձի, խմբի դիրքորոշումը կամ ձևավորել նորը՝ նշանակում է դրդել նրան հանդես բերել ցանկալի վարք, կառավարել, վերահսկել նրա գործունեությունը: Հենց այս հեռանկարի համար էլ մղվում է հոգեբանական պատերազմը:

Երկրի հոգեբանական անվտանգության ապահովման նպատակն է բացառել ողջ վերը նշվածը՝ *չեզոքացնել հակառակորդի հոգեբանական դիվերսիաները՝ երկրում ադահովելով կայունություն և առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ*: Իսկ վերջինս ենթադրում է մեծ թվով հոգեպես կայուն, իրավիճակին համարժեք գործելակերպի ունակ և թշնամուն հաղթելու վճռական դիրքորոշում կրող քաղաքացիների առկայություն:

«Հոգեբանական պատերազմ» եզրույթն ավանդաբար կիրառվել է «քարոզչություն» իմաստով: Այդուհանդերձ «հոգեբանական պատերազմ» եզրույթը լիարժեքորեն նույնական չէ «քարոզ-

Երկրի հոգեբանական անվտանգության ապահովման նպատակն է բացառել ողջ վերը նշվածը՝ չեզոքացնել հակառակորդի հոգեբանական դիվերսիաները՝ երկրում ապահովելով կայունություն և առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ: Իսկ վերջինս ենթադրում է մեծ թվով հոգեպես կայուն, իրավիճակին համարժեք գործելակերպի ունակ և թշնամուն հաղթելու վճռական դիրքորոշում կրող քաղաքացիների առկայություն:

չություն» եզրույթին, քանզի հոգեբանական պատերազմի զինանցում կան հոգեբանական ազդեցության մի շարք սպեցիֆիկ ձևեր, որոնք չեն տեղավորվում «քարոզչություն» եզրույթի դասական ըմբռնման շրջանակներում: Մանրամասները:

Հոգեբանական պատերազմը ենթադրում է հատուկ հոգեբանական ազդեցության բազմաթիվ ձևեր, որոնք բոլորն ունեն հոգեմետ բնույթ: «Հոգեմետ» տերմինը ժամանակակից հոգեբանության, հոգեբուժության ասպարեզում ընդունված է կիրառել հազեկանի վրա ազդող զանազան դեղամիջոցները նշելու համար: Այս դեպքում, հիմնվելով «հոգեմետ» տերմինի ծագումնաբանության (psycho- հոգի և tropos- ուղղություն՝ հոգուն ուղղված, փսիխոտրոպ) վրա, մենք ընդլայնում ենք հոգեբուժության և հոգեբանության ասպարեզում այդ հասկացությանը վերագրվող նշանակության սահմանները, դրանում ընդգրկելով նաև հոգեբանական պատերազմի զինանոցի բոլոր այն ազդեցության ձևերը, որոնք կոչված են ուղղակիորեն ազդելու հոգեկանի վրա՝ նրանում առաջացնելով հոգեծին փոփոխություններ: Վերջիններս, ըստ դրանցում խոսքային բաղադրիչի առկայության, նպատակահարմար է խմբավորել երկու հիմնական տեսակի մեջ՝ խոսքային և ոչ խոսքային:

Խոսքային ազդեցությունը նույնական է քարոզչությանը: Քարոզչությունը միտված է անձի դիրքորոշումների համակարգին և ենթադրում է խոսքային ազդեցություն: Այն կոչված է գրավոր կամ բանավոր տեղեկության հաղորդման միջոցով դոկտրինացիայի (գաղափարականացման) ենթարկել հակառակորդի զինված ուժերի անձնակազմը, խաղաղ բնակչությանը՝ ծրագրավորելով, ստերեոտիպացնելով նրանց վարքը և մտածողությունը: Ասվածը ենթադրում է մարդու, խմբի մոտ ձևա-

վորել որոշակի գաղափարներ, համոզմունքներ, կարծիքներ, դրական կամ բացասական հույզեր այս կամ այն իրադարձության, երևույթի, մարդու, խմբի վերաբերյալ:

Հոգեբանական պատերազմի հիմնական նպատակը մարդկանց կառավարելի դարձնելն է. քարոզչությունն այդ վերջնական նպատակին հասնելու հիմնական միջոցներից մեկն է միայն: Մինչդեռ հոգեբանական պատերազմի հիմնական նպատակին հասնելու համար հարկավոր է անձի մոտ առաջ բերել նաև հոգեֆիզիոլոգիական տարաբնույթ վիճակներ: Իսկ վերջինիս համար հարկավոր են մարդկանց հոգեկանին ուղղված հատուկ, ոչ խոսքային ազդեցության ձևեր: Ոչ խոսքային պետք է համարել մարդու հոգեկանի, խմբի վրա ֆիզիկական՝ լուսային, ձայնային, ջերմային, գույների, հոտերի, ինֆրակարմիր ճառագայթների, ցածր հաճախականության ռադիոալիքների, քիմիական զանազան նյութերի, դեղամիջոցների ազդեցությունը: Տվյալ դեպքում խոսքը միջավայրի տարաբնույթ ուժեղ սթրեսորների մասին է: Վերջիններս մարդու հոգեկանում առաջացնում են որոշակի ֆիզիոլոգիական գործընթացներ, որոնք հանգեցնում են նրա հոգեվիճակի, առհասարակ՝ հոգեկան ակտիվության որակական փոփոխության: Հոգեմետ ազդեցությունների հետևանքով մարդու հոգեկանում, խմբում առաջանում են հոգեծին՝ հոգեկանի վրա ազդելու հետևանքով առաջացած, զանազան դրսևորումներ: Օրինակ՝ հայտնի է, որ կարմիրի, ծիրանագույնի, մարմջագույնի և դեղինի ընկալման հետևանքով արագանում է շնչառությունը, հաճախանում է զարկերակը, բարձրանում է զարկերակային ճնշումը: Գույների այս խումբը զրգռում, ակտիվացնում է մարդկանց: Իսկ ահա կանաչը, երկնագույնը, կապույտը և մանուշա-

կազույնն ունենում են հակառակ՝ հանգստացնող ազդեցություն:

Քարոզչության համատեքստում հաճախ կիրառվում են նաև «տեղեկատվական պատերազմ» և «տեղեկատվական անվտանգություն» եզրույթները: Վերջիններս բովանդակային առումով ունեն ավելի տարողունակ, ընդգրկում բնույթ և կիրառվում են երկու նշանակությամբ՝ տեխնիկական և քարոզչական: Մանրամասները:

ա) Տեխնիկական կամ տեղեկատվական - տեխնոլոգիական նշանակություն: Տվյալ դեպքում խոսքը հակառակորդի տեխնիկական միջոցների, սպառազինությունների, կապի համակարգերի համակարգչային կառավարման ծրագրերը խափանելուն ուղղված տարաբնույթ տեխնոլոգիական ազդեցությունների մասին է՝ այսպես կոչված «կիրեռապատերազմներ», ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցներ (ՌԷՊ) և այլն³: Հատկանշական է, որ այս դեպքում հակառակորդին հասցված զուտ տեխնիկական, նյութական վնասը՝ տեխնիկական միջոցների անպիտան դառնալը, անուղղակիորեն հանգեցնում է նաև բարոյահոգեբանական վնասին՝ նրա անձնակազմի բարոյալքմանը:

բ) Տեղեկատվական – հոգեբանական (քարոզչական) կամ անձի, հանրույթի հոգեկանին միտ-

³ Տեղեկատվական – տեխնոլոգիական պայքարի միջոցների զինանոցը բազմազան է՝ տարաբնույթ համակարգչային վարակներ, հակառակորդի համակարգչային ցանցեր գաղտնի մուտք գործելու ծրագրեր, ինֆրակարմիր ճառագայթներով համակարգեր, դյուրակիր միկրոալիքային սպառազինություն, հզոր լազերային կայանքներ, հակառակորդի էլեկտրոնային սարքավորումների մեջ միկրոպրոցեսորների ներդրման միջոցներ, իմպուլսային խոցման միջոցներ՝ էլեկտրամագնիսական բաբախող զենքատորներ («էլեկտրոնային ռումբեր») և այլն: Առավել մանրամասն տես՝ **Чертополох А. А.**, Информационное обеспечение воспитательной работы в вооруженных силах Российской Федерации. М.: ВУ, 1998.

ված ազդեցության նշանակություն: Ահա այս՝ երկրորդ, իմաստով «տեղեկատվական պատերազմ», «տեղեկատվական անվտանգություն» եզրույթները նույնական են համապատասխանաբար «հոգեբանական պատերազմ» և «հոգեբանական անվտանգություն» եզրույթներին: Բանն այն է, որ այն օբյեկտը, որին ուղղված է տեղեկատվական ազդեցությունը մարդու հոգեկանն է, մինչդեռ տեղեկատվությունը այն միջոցն է, որով ազդում են այդ օբյեկտի՝ հոգեկանի վրա: Այլ կերպ ասած՝ «տեղեկատվական» մարդու հոգեկանին ուղղված ազդեցության բնույթն է: Բանն այն է, որ մարդու հոգեկանին ուղղված ցանկացած ազդեցություն ըստ էության նոր տեղեկությունների ստացում է: Տվյալ դեպքում «տեղեկություն» հասկացությունն օգտագործվում է լայն իմաստով՝ իր մեջ ընդգրկելով ցանկացած արտաքին գրգռիչ՝ լինի դա տեսողական պատկեր, գրավոր կամ բանավոր խոսք, ծայն, հոտ, այսինքն այն ամենը, ինչը արտացոլում են մեր զգայարանները: Այս համատեքստում «հոգեբանական» տերմինը ավարտուն, հստակ և տրամաբանորեն ճիշտ է արտահայտում մարդու հոգեկանին ուղղված ազդեցությունը:

Այսպիսով՝ «տեղեկատվական պատերազմ» կամ «տեղեկատվական անվտանգություն» եզրույթներով բնորոշվում է զանազան բնույթի տեղեկությունների միջոցով մարդու հոգեկանին ուղղված հոգեբանական ազդեցությունը⁴: Այլ կերպ ասած՝

⁴ Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել նաև «տեղեկատվական պայքար» եզրույթին: Բովանդակային առումով այն հիմնականում նույնպես կիրառվում է վերը նշված երկու իմաստներով՝ ա) որպես տեղեկատվական տեխնոլոգիական կամ տեխնիկական պայքար և՝ բ) տեղեկատվական – հոգեբանական կամ քարոզչական պայքար: Վերջին երկրորդ, իմաստով «տեղեկատվական պայքար» եզրը նույնական է «հոգեբանական պայքար» եզրին:

տվյալ դեպքում խոսքը քարոզչության մասին է:

Սույն աշխատության օբյեկտը «տեղեկատվական պատերազմ» և «տեղեկատվական անվտանգություն» եզրույթների երկրորդ՝ քարոզչական, ասպեկտն է: Այդ առումով թերևս առավել ճշգրիտ կլիներ կիրառել «հոգեբանական – տեղեկատվական պատերազմ» կամ «հոգեբանական – տեղեկատվական անվտանգություն» եզրույթները: Սակայն տեքստի դյուրըմբռնման նպատակով մենք այսուհետ կկիրառենք «հոգեբանական պատերազմ» և «հոգեբանական անվտանգություն» եզրույթները:

1.2. Քարոզչության հոգեբանական նկարագիրը

Քարոզչություն (լատիներեն՝ Propaganda) եզրույթը լատիներենից բառացի թարգմանվում է որպես *սարածման ենթակա*՝ (լատիներեն՝ *propago*, տարածում են):

Սովետական մեծ հանրագիտարանում քարոզչությունը բնորոշվում է որպես «հանրային գիտակցության վրա ազդելու և մասսայական որևէ գործունեության ակտիվացման համար քաղաքական, փիլիսոփայական, գիտական, զեղարվեստական և

Երբեմն «տեղեկատվական պայքար» եզրը օգտագործվում է նաև երրորդ իմաստով: Տվյալ դեպքում խոսքը հակամարտ կողմերից յուրաքանչյուրին անհրաժեշտ տեղեկությունների և առաջինը տիրապետելու, և ըստ այդմ նաև, ստացված տեղեկություններն առաջինը հակառակորդի դեմ կիրառելու մասին է: Այստեղ մրցակցությունը անհրաժեշտ տեղեկությունները ժամանակին՝ առաջինը, ստանալու, այդ տեղեկությունների հավաստիության և լիարժեքության, ինչպես նաև մշակման որակի և հակառակորդի դեմ գործնական կիրառելիության վիճակին բերելու արագության համար է: Այս դեպքում պայքարը մղվում է հակառակորդի նկատմամբ տեղեկացվածությանը առավելության հասնելուն:

այլ տեսակի գաղափարների տարածում»⁵: Համաձայն Սովետական մեծ հանրագիտարանի՝ քարոզչության բովանդակությունը, ձևերն ու մեթոդները պայմանավորված են այն հակասություններով, որոնք առկա են քարոզչությունն իրականացնող սուբյեկտի և այդ քարոզչության օբյեկտ անձի կամ խմբի շահերի միջև:

Անգլիական Բրիտանիկա հանրագիտարանը քարոզչությունը բնորոշում է որպես այս կամ այն չափով համակարգված գործունեություն մարդկանց կարծիքներն ու համոզմունքները մանիպուլյացիայի ենթարկելու համար⁶: Քարոզչության նպատակներին հասնելու համար այն իրականացնողները կարող են անտեսել կամ խեղաթյուրել որոշ կարևոր փաստեր, կամ էլ լսարանի ուշադրությունը շեղել տեղեկության այլ աղբյուրներից: Տվյալ դեպքում հատկանշականն այն է, որ Բրիտանիկայում քարոզչությունը համեմատվում է ուսուցման հետ: Նշվում է, որ փաստերի կանխամտածված խեղաթյուրմամբ ու տեղեկատվության գտմամբ է, որ քարոզչությունը տարբերվում է ուսուցումից:

Ֆրանսիացի փիլիսոփաներ Դուբանի և Ժակ Էյուլի տեսանկյունից քարոզչությունը նախօրոք ծրագրված և նպատակաուղղված հոգեբանական ազդեցություն է լսարանի վրա, որի նպատակն է լսարանին տիրապետելը, մարդկանց վարքը վերահսկելը:

Իսկ ահա ազգությամբ հայ հոգեբան Հակոբ Նազարեթյանի բնորոշմամբ՝ «քարոզչությունը հասարակության շրջանում որոշակի գաղափարների, արժեքների, նորմերի և վարքի ծրագրերի հետևողական տարածումն է»:⁷

⁵ Большая советская энциклопедия, Москва, 1970-1981, 3. изд.

⁶ The Encyclopedia Britannica, 1997. Volume 7, pp. 78-80

⁷ Назаретян А. П., Агрессивная толпа, массовая паника, слухи.

Քարոզչությունը նպատակաուղղված ակտիվություն է, անձի կամ խմբի հոգեկանի վրա հետևողական ներգործություն, որի նպատակն է ձևափոխել, թուլացնել կամ ուղղակի վերացնել այս կամ այն խնդրի վերաբերյալ անձի, հանրության դիրքորոշումները՝ փոխարենը ձևավորելով նորը և կամ՝ ընդհակառակը՝ ամրապնդել եղածները:

Քարոզչական դիսկուրսն աչքի է ընկնում հստակ նպատակով, այն է՝ ձևափոխիչ ազդեցություն գործել մարդու համոզմունքների վրա: Փաստերի, ապացույցների, ասեկոսեների, ապատեղեկատվության տարածմամբ կառավարելի դարձնել անձի կամ խմբի ակտիվությունը, վերահսկել մարդկանց գիտակցությունը՝ ցանկալիորեն ուղղորդելով նրանց վարքը և գործունեությունը՝

Այսպիսով՝ ծամանակակից հոգեբանության դիրքերից *ֆարոզչությունը նոդասակաուղղված ակտիվություն է, անձի կամ խմբի հոգեկանի վրա հետևողական ներգործություն, որի նպատակն է ձևափոխել, թուլացնել կամ ուղղակի վերացնել այս կամ այն խնդրի վերաբերյալ անձի, հանրության դիրքորոշումները՝ փոխարենը ձևավորելով նորը և կամ՝ ընդհակառակը՝ ամրապնդել եղածները*: Իր այդ նպատակին ծառայելու համար քարոզչությունը պետք է լինի հստակ ծրագրված, ինտենսիվ և հետևողական: Քարոզչության թիրախը պետք է հստակ լինի. այն պետք է ուղղված լինի կոնկրետ լսարանի: Ըստ այդմ՝ քարոզչական դիսկուրսն աչքի է ընկնում հստակ նպատակով, այն է՝ ձևափոխիչ ազդեցություն գործել մարդու համոզմունքների վրա: Փաստերի, ապացույցների, ասեկոսեների, ապատեղեկատվության տարածմամբ կառավարելի դարձնել անձի կամ խմբի ակտիվությունը, վերահսկել մարդկանց գիտակցությունը՝ ցանկալիորեն ուղղորդելով նրանց վարքը և գործունեությունը՝

աիա այս հեռանկարն է ցանկացած քարոզչության նպատակը: Իր հենց այդ նպատակով էլ, ի դեպ, քարոզչությունը տարբերվում է լրագրությունից, քանզի վերջինիս նպատակն է մարդկանց տեղեկացնե-

լը՝ լրատվությունը բառի բուն իմաստով: Եթե լրագրության պարագայում տեղեկությունը կոչված է բավարարելու մարդկանց հետաքրքրությունը, տեղեկացված լինելու պահանջմունքը, ապա քարոզչության պարագայում տեղեկությունը վերածվում է քարոզվող թեզը համոզիչ դարձնելու, մարդկանց դիրքորոշումները փոփոխելու կամ նորը ձևավորելու միջոցի: Քարոզչության պարագայում մարդկանց տեղեկացված լինելու պահանջմունքը շահարկվում է, իսկ տեղեկությունները լսարանին մատուցվում են ընտրականորեն՝ իրականության աղճատված, սակայն ցանկալի պատկեր ձևավորելու համար: Հարկ է նշել սակայն, որ մեր օրերում քարոզչությունը շատ հաճախ իրականացվում է լրատվության ընդհանուր համատեքստում:

Քարոզչության պարագայում մարդկանց տեղեկացված լինելու պահանջմունքը շահարկվում է, իսկ տեղեկությունները լսարանին մատուցվում են ընտրականորեն՝ իրականության աղճատված, սակայն ցանկալի պատկեր ձևավորելու համար:

Հեշտ գործ է քարոզչությամբ մարդկանց դիրքորոշումները փոխելը, առավել ևս՝ նորերը ձևավորելը: Բանն այն է, որ ցանկացած դիրքորոշում հոգեբանական համակարգ է և ինքն իրեն պահպանելու միտում ունի, ինչը նշանակում է, որ մարդն ականա դիմադրում է իր դիրքորոշումները փոփոխելու նպատակ հետապնդող արտաքին ազդեցություններին: Անվանի հայ հոգեբան Ա. Նալչաջյանը նշում է, որ առավել դժվար են փոփոխվում այն դիրքորոշումները, որոնք ձևավորվել են մանկական տարիներին՝ հեղինակավոր մարդկանց հետ նույնանալու արդյունքում ու նաև այնպիսիք, որոնք կյանքում օգտակար են եղել մարդուն և օգնել են հարմարվել կենսական այս կամ այն իրադրությանը:

Քարոզչությունն իրականացվում է *ներհանգում* և

համոզման մեխանիզմների միջոցով:

«Համոզել որևէ մեկին նշանակում է որոշակի երևույթների մասին տեսակետ ներկայացնել և ապա փաստերի ու տրամաբանական փաստարկների օգնությամբ ցույց տալ, որ այդ տեսակետը ճիշտ է թե՛ սխալ»:⁸ *Համոզումը հիմնականում ուղղված է ունկնդրի գիտակցությանը, որից հետո ստացված տեղեկությունները մուտք են գործում նրա ենթագիտակցություն*

Քարոզչությունն իրականացվում է ներշնչման և համոզման մեխանիզմների միջոցով:

և այնտեղ մշակման ենթարկվում: Համոզման մեխանիզմը կոչված է գրավոր կամ բանավոր խոսքով, տրամաբանական փաստարկների միջոցով հիմնավորել սեփական տեսակետը և փոփոխել մարդկանց դիրքորոշումները: Համոզվելը միանգամայն գիտակցված գործընթաց է: Մարդը հաշիվ է տալիս իրեն, որ իր նախկին կարծիքը թերի է, խոցելի և գիտակցաբար ընդունում է նոր, իր կարծիքով, տրամաբանորեն ավելի հիմնավորված տեսակետը, այսինքն՝ համոզվում է:

Եթե համոզման գործընթացը հաջողվում է, ապա ունկնդրի մոտ ստեղծվում է համոզվածություն: Վերջինս մի հոգեվիճակ է, որը ենթադրում է կայուն հավատ որոշակի գաղափարների ճշմարտացիության նկատմամբ, ինչը հեշտացնում է հստակ որոշումների կայացումը և դրանց իրականացման համար կամքի գործադրումը: Համոզված մարդը տվյալ հարցի վերաբերյալ կասկածներ չի ունենում: Համոզվածությունը այնքան ավելի կայուն է, որքան ներկայացված տվյալներն ավելի են համապատասխանում իրականությանը:

«Ներշնչումը հոգեկան այն գործընթացն է, որի միջոցով որևէ անհաս մեկ այլ անհասի կամ խմբի

⁸ **Նալչաջյան Ա.**, Սոցիալական հոգեբանություն, Երևան, 2004, էջ 371:

ներարկում է որոշակի գաղափարներ, Տեսակետներ և վարՖ՝ օրջանցելով նրա գիտակցությունն ու Բնահասական մտածողությունը: Ներշնչման մեխանիզմները հիմնականում ենթագիտակցական են, իսկ բուն գործընթացն էլ սովորաբար հագեցված է լինում հուզականությամբ»⁹: Ներշնչվող անհատը կամ խումբը իրեն հաշիվ չի տալիս այն բանում, որ ներշնչվում է: Ներշնչման գործընթացում մարդը չի գիտակցում շրջապատից տեղեկության ստացման ընթացքը, «չի նկատում» այն: Մարդու ենթագիտակցական ընկալումների վրա ուղղվելու դեպքում քարոզչական ազդեցության արդյունավետությունը հատկապես բարձրանում է: Ներշնչման շնորհիվ մեծանում է մարդկանց դիրքորոշումները փոխելու, նորերը առաջացնելու հավանականությունը: Այդ իսկ պատճառով այն կազմում է քարոզչական գիմանոցի ամենահաճախ կիրառվող մեխանիզմը: Ներշնչման ենթագիտակցական լինելու պատճառով է, որ անձը հաճախ չի գիտակցում, չի հասկանում թե ինչպես պատահեց, որ ինքը սկսեց հավատալ ինչ-որ տեսակետների, ինչ-որ գործողություններ կատարեց, նվիրվեց ինչ-որ մարդու և այլն:

Ինչպես վերը նշեցինք, ներշնչման գործընթացն ուղեկցվում է լսարանի մոտ բուն հուզականությամբ. այսինքն՝ լսարանին մատուցվող նյութը բուն հույզեր է առաջացնում մարդկանց մոտ: Հուզականության ազդեցության տակ մարդու գիտակցության ոլորտը նեղանում է, ինչի հետևանքով մարդն արդեն անկարող է լինում քննադատաբար մոտենալ իրեն մատուցվող տեղեկությանը, ինչն էլ հանգեցնում է այն բանին, որ այդ տեղեկություններն առանց վերապահումների թափանցում են հոգեկանի ավելի խորը՝ ենթագիտակցական մա-

⁹ Նույն տեղում, էջ 379:

կարդակ: Հուզականությունը ներշնչման արդյունավետության նախադրյալն է: Անհնար է ուղղորդել մարդու վարքը առանց հուզականության. այդ է պատճառը, որ ցանկացած հուզական ելույթ կամ կոչ ունի ներշնչման մեծ պոտենցիալ: Ավելին, ներշնչանքը ոչ միայն հիմնվում է հուզականության վրա, այլև էլ ավելի է սրում այն: Ասվածը հատկապես վերաբերում է զանգվածային ներշնչմանը, ինչի արդյունքում մարդկանց վարքը դառնում է իմպուլսիվ:

Քարոզչության ասպարեզի մի շարք մասնագետներ (Կ. Հովսեփյան, Ջ. Լիր, ՈՒ. Մակ Գայր և ուրիշներ) մշակել են հնարքներ, որոնք հիմնված լինելով ներշնչանքի մեխանիզմի վրա՝ առավել արդյունավետ են դարձնում քարոզչության ընթացքը: Այդ հնարքներն են.

«Պիսակներ կոցնելու» հնարքը, որը օգտագործվում է որևէ մարդու կամ գաղափար, տեսակետ հասարկության շրջանում վարկաբեկելու համար: Այս դեպքում, որևէ անհատի, երևույթի վերագրվում է ինչ-որ հատկանիշ, կամ կատարվում են հայհոյական համեմատություններ, օգտագործվում են փոխաբերություններ, որոնք ունկնդիրների մեջ բացասական դիրքորոշումներ են առաջացնում:

«Փայլուն ընդհանրացման» հնարքը, երբ որևէ արժեք, անձ կամ գաղափար նշանակում են դրական հուզականություն կրող բառով: Այս հնարքը օգտագործվում է կարգախոսներ, կազմակերպությունների անուններ ստեղծելիս:

«Տեղափոխման կամ *sransferի*» հնարքը: Այս դեպքում որևէ մարդու կամ գաղափար ունկնդիրների համար ընդունելի դարձնելու նպատակով այն զուգորդում, կապում են ունկնդիրների համար հեղինակավոր անձի կամ արժեքների հետ: Այդ դեպքում տվյալ հեղինակության հանդեպ առկա

վերաբերմունքը որոշ չափով տարածվում է տվյալ գաղափարի կամ մարդու վրա: Տեղափոխումը կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Վերջինիս նպատակը տվյալ մարդուն կամ գաղափարը վարկաբեկելն է:

«Վկայության» հնարքը, երբ որևէ անձի կամ գաղափարի հանդեպ ցանկալի դիրքորոշում ստեղծելու համար վկայակոչում են հայտնի, հեղինակավոր մարդկանց ասույթներ:

«Հասարակ մարդու դեր խաղալու» հնարքը, երբ քարոզիչը հանդես է գալիս իբրև հասարակ մարդ, ժողովրդի ներկայացուցիչ՝ ձգտելով ձեռք բերել ունկնդիրների լայն շրջանակների համակրանքը: Այս դեպքում լսարանը քարոզիչի հանդեպ կարող է համակրանքով համակվել՝ իր հետ նմանություններ տեսնելու արդյունքում: Իսկ քարոզիչի անձի հանդեպ համակրանքը կարող է տարածվել նրա արտահայտած գաղափարների վրա:

«Փաստերի վերադասավորման» հնարքը: Որևէ երևույթի նկատմամբ ցանկալի դիրքորոշում ստեղծելու նպատակով նրա վերաբերյալ հրապարակում և լսարաններին բազմիցս ներկայացվում են միայն փաստերի մի մասը: Արդյունքում տեղեկությունները դառնում են միակողմանի և խեղաթյուրված:

«Բանդվագում» (կառք՝ նվազախմբի ուղեկցությամբ): Այս դեպքում լսարանին ներշնչում են ընդունել ներկայացվող գաղափարները այն պատճառով, որ իբր թե բոլորը դրանց կողմնակիցներն են: Բոլորի, մեծամասնության կարծիքը ազդեցիկ է: Մարդկանց մեծամասնությունը կոնֆորմիստներ են, այդ իսկ պատճառով այս հնարը շատ արդյունավետ է¹⁰:

Ինչպես արդեն վերը նշել ենք՝ քարոզչության դասական ընկալումը ենթադրում է մարդկանց

¹⁰ Նույն տեղում, էջ 392:

հոգեկանին ուղղված խոսքային ազդեցություն: Սակայն ինչպես ցույց է տալիս փորձը՝ քարոզչությունն արադյունավետ է լինում այն դեպքում, երբ հոգեմետ ներգործությունը կրում է համալիր բնույթ: Վերջինս ենթադրում է ոչ միայն համոզման և ներշնչման մեխանիզմների, այլև հոգեբանական պատերազմի ոչ խոսքային ազդեցության միջոցների համատեղում: Այս պարագայում տեղին է խոսել հոգեբանական – քարոզչական օպերացիաների մասին: Օրինակ՝ կարմիր գույնի երանգների գրգռող ազդեցությունը լայնորեն օգտագործվում է քարոզչական գործունեության ընթացքում: Իսկ երբ հարկավոր է լինում ակտիվացնել լսարանը, ապա կարելի է զուգորդել կարմիր գույնը առույգ երաժշտության հետ: Ասվածի տպավորիչ օրինակ է ուկրաինական «Մարնջագույն» հեղափոխությունը, ուր հազարավոր մարնջագույն պաստառներն ու դրոշակները պետք է, ուղղակիորեն ազդելով մարդկանց ենթագիտակցության վրա, նրանց պահեին գրգռված, ակտիվ գործողությունների պատրաստ վիճակում՝ բարձրացնելով նրանց ներշնչվողության մակարդակը:

Հոգեբանական – քարոզչական օպերացիան կոնկրետ լսարանի ուղղված հեռուղական հոգեմետ ազդեցություն է՝ իր ուրույն նոտասակով և թիրախ հանդիսացող հանրության հոգեկանի վրա ազդելու սարքանույթ հնարների զինանոցով: Այդ հետևողական հոգեմետ ազդեցությունը հաճախ բնորոշում են որպես հոգեբանական մանիպուլյացիա՝ աճապարարություն: Հոգեբանական կամ քարոզչական աճապարարության արդյունքը լինում է այսպես կոչված կառավարելի գիտակցությունը, երբ մարդը կամ հանրույթը հոգեկան կախվածության մեջ է հայտնվում քարոզչություն իրականացնողից: Ինքնուրույնությունից զրկված լինելով՝ մարդը նման վիճակում վերածվում է կամակատարի.

առանց իրեն հաշիվ տալու ուղղորդվում է քարոզչական աճպարարության իրականացնողից: Կառավարելի գիտակցության հիմնական նշաններն են՝ անվերապահ և կույր նվիրումը մանիպուլյատորի անձին և նրա կողմից ներշնչված գաղափարին, այդ գաղափարների անքննադատաբար վերարտադրելը: Աճպարարության հաջողության նախադրյալը մարդու կամ հանրության արժեքային համակարգը խարխուլելն է: Հաստատված է՝ կայուն արժեքային համակարգ ունենալը հոգեբանական աճպարարություններին տրվելու լրջագույն խոչընդոտ է: Այդ է պատճառը, որ հոգեբանական աճպարարության առաջին քայլը մարդու կամ հանրության կողմից նախկինում ընդունված արժեքների, գաղափարների ճշմարտացիության հանդեպ կասկածներ առաջացնելն ու, զուգահեռաբար, նոր գաղափարներ ձևավորելն է:

Հոգեբանական աճպարարության համատեքստում տեղին է անդրադառնալ նաև ապատեղեկատվության տարածման խնդրին: Ապատեղեկատվությունը ժամանակակից հոգեբանական քարոզչական օպերացիաների բաղադրիչներից է: Հոգեբանական քարոզչական օպերացիաներում ապատեղեկատվությունը ծառայում է հետևյալ նպատակին՝ փաստերի խեղաթյուրման, իրականության առանձին կողմերն ընտրականորեն, ընդհանուր կոնտեքստից դուրս մատուցելու միջոցով, իսկ երբեմն էլ՝ ակնհայտ կեղծիքն իբրև փաստ ներ-

Հոգեբանական կամ քարոզչական աճպարարության արդյունքը լինում է, այսպես կոչված, կառավարելի գիտակցությունը, երբ մարդը կամ հանրությանը հոգեկան կախվածության մեջ է հայտնվում քարոզչություն իրականացնողից:

Կառավարելի գիտակցության հիմնական նշաններն են՝ անվերապահ և կույր նվիրումը մանիպուլյատորի անձին և նրա կողմից ներշնչված գաղափարին, այդ գաղափարների անքննադատաբար վերարտադրելը:

Կայուն արժեքային համակարգ ունենալը հոգեբանական աճպարարություններին տրվելու լրջագույն խոչընդոտ է:

կայացնելով լսրանախ մոտ ձևավորել որևէ երևույթի կամ իրավիճակի մասին ցանկալի պատկերացում, որով հնարավոր կլինի հիմնավորել տարածվող քարոզչական թեզը: Այսինքն՝ ապատեղեկատվության տարածումը կոչված է փաստարկված, ըստ այդմ նաև՝ հնարավորինս համոզիչ դարձնել շրջանառության մեջ դրված քարոզչական թեզը:

Հարկ է նշել, որ քարոզչական գործունեության ընթացքում ստի կիրառման արդյունավետության խնդիրը եղել և մնում է մասնագետների ուշադրության կենտրոնում: Մասնավորապես՝ մասնագետներին հետաքրքրում է, թե ի՞նչ չափաբաժիններով է հարկավոր կիրառել սուտը, որպեսզի այն արդյունավետ դարձնի հոգեբանական – քարոզչական օպերացիան: Այս առումով հայտնի է գերմանական ազգայնամոլության անվանի քարոզիչ, հիտլերյան Գերմանիայի քարոզչության նախարար Գեբելսի տեսակետը, ով գտնում էր, թե «նույնիսկ ամենամեծ սուտը, եթե հաճախակի ու տեղին է կրկնվում, սկսում է ընդունվել որպես ճշմարտություն»¹¹: Ասվածն անշուշտ կարելի է համարել ժամանակի փորձությամբ հաստատված ճշմարտություն: Այդուհանդերձ, որպեսզի հոգեբանական – քարոզչական օպերացիան լինի արդյունավետ, այն իրականացնելիս հարկավոր է օգտագործել որոշ թվով իրական փաստեր: Առհասարակ ապացուցվել է, որ սուտը լինում է ազդեցիկ այն դեպքում, երբ մարդ չի կարող ստուգել իրեն մատուցված տեղեկության ճշմարիտ լինելը: Մինչդեռ երբ սուտը բացահատվում է, ապա, ըստ Ա. Նալչաջյանի, անխուսափելիորեն հանգեցնում է հիասթափության, տեղեկության աղբյուրի հեղինակագրկման, որին արդեն չեն վստահի, եթե նա անգամ ճշմարտությունն ասի¹²:

¹¹ Նույն տեղում, էջ 369:

¹² Նույն տեղում, էջ 379:

ԳԼՈՒԽ 2

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆՆ
ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ2.1. Ադրբեջանական քարոզչության
ընդհանուր բնութագիրը

«Հոգեբանական պատերազմ» և «հոգեբանական անվտանգություն» եզրույթների բովանդակությանը ծանոթանալուց հետո նպատակահարմար է անդրադառնալ հայ-ադրբեջանական հոգեբանական պատերազմին կամ այլ կերպ ասած՝ հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական նկարագրին:

Եվ այսպես, հրադադարի հաստատումից ի վեր հայ-ադրբեջանական հակամարտությունը տեղափոխվել է տեղեկատվական-հոգեբանական հարթություն: Ավելին, այսօր արդեն վստահաբար կարելի է փաստել, որ հայաստանյան հասարակությունը վերածվել է Ադրբեջանի պետական քարոզչության թիրախի: Այս հանգամանքը հարկ է դիտարկել իբրև *մեր երկրի անվսանգությանը սղառնացող արսափին մարսահրավեր*, հետևաբար՝ ադրբեջանական քարոզչությունը պետք է հանդիսանա համակողմանի գիտական ուսումնասիրության առարկա: Մասնավորապես հարկավոր է հստակեցնել ադրբեջանական քարոզչամեքենայի աշխատանքային ուղղություններն, ապա՝ բացահայտել այդ ուղղություններից յուրաքանչյուրի նպատակը: Ողջ վերը նշվածի հիման վրա է միայն հնարավոր արդյունավետ հակազդել հակառակորդի քարոզչական ներգործությանը:

Պետական քարոզչությունն ածանցյալ է տվյալ երկրի էթնոքաղաքական շահերից, ըստ այդմ՝ նրա հեռահար, միջնաժամկետ և մոտալուտ նպատակներից:

Արցախին վերատիրանալը, ապա նաև՝ Նախիջևանի անկլավային վիճակը վերացնելը, ինչը հնարավոր է միայն ՀՀ Սյունիքի մարզի օկուպացիայի միջոցով:

Ինչպես հայտնի է պետական քարոզչությունն ածանցյալ է տվյալ երկրի էթնոքաղաքական շահերից, ըստ այդմ՝ նրա հեռահար, միջնաժամկետ և մոտալուտ նպատակներից: Այդպես է նաև ադրբեջանական քարոզչության պարագայում:

Հետևաբար, պարզելու համար ադրբեջանական քարոզչության ուղղությունները, դրանցից յուրաքանչյուրի նպատակը, ռազմավարությունն ու մարտավարական թեզերը հարկավոր է հստակ ձևակերպել անդրկովկասցի թուրքերի Ադրբեջան պետական կազմավորման էթնոքաղաքական ռազմավարական նպատակները¹³:

Ի թիվս այլոց՝ իբրև այդպիսին հարկ է առանձ-

¹³ Բացի անդրկովկասցի թուրքերից Ադրբեջանի տարածքում, ինչպես գիտենք, բնակվում են մի շարք բնիկ ազգեր, որոնք սակայն այդ պետական կազմավորման սահմաններում են հայտնվել իրենց կամքին հակառակ: Տասնամյակներ շարունակ նրանք ենթարկվել և ենթարկվում են խտրականության և բռնաճնշումների, նրանց հանդեպ տարվել և տարվում է ավտորիտար ասիմիլյացիայի քաղաքականություն: Այս առումով ժամանակակից Ադրբեջանն իրենից ներկայացնում է սոցիալական գիտություններում նկարագրված «ուղղահայաց միջէթնիկական փոխհարաբերությունների» դասական օրինակ, որտեղ անդրկովկասցի թուրքերը գտնվում են տիրապետողի, իսկ բնիկ ազգերը հպատակվածի դիրքում: Հետևաբար բնիկ ազգերի այն ներկայացուցիչները, ովքեր պահպանել են իրենց ազգային ինքնագիտակցությունը չեն կարող հոգեհարազատություն զգալ այդ պետական կազմավորման հանդեպ:

Տվյալ դեպքում «պետական կազմավորում» ասելով մենք ընդգծում ենք Ադրբեջանի կենսունակ չլինելու հանգամանքը, ինչը պայմանավորված է այն բնակեցնող բնիկ ազգերի շրջանում ներկայումս նկատվող ազգային ինքնագիտակցության գաղթոնքով, ըստ այդմ՝ նաև Ադրբեջանի մասնատման հավանականության հարաճուն դառնալու միտումով: Մասնավորապես այդ հավանականությունը կարող է դառնալ միանգամայն իրական՝ հնարավոր պետերազմում Ադրբեջանի պարտության դեպքում:

նացնել էժնոքադաքական ռազմավարական հետևյալ նպատակը՝ *Արցախին վերահիւանալը, առաջ նաև՝ Նախիջևանի անկլավային վիճակը վերացնելը, ինչը հնարավոր է միայն ՀՀ Սյունիքի մարզի օկուպացիայի միջոցով:*

Այս նպատակը պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլերի: Մասնավորապես Նախիջևանի միացումն Ադրբեջանին հնարավոր է միայն այն դեպքում, եթե Ադրբեջանը վերատիրանա Արցախին: Հետևաբար, այս նպատակի երկրորդ փուլի կենսագործումն ուղղակիորեն պայմանավորված է առաջինի հաջող իրականացմամբ¹⁴: Վերը նշված ռազմավարական նպատակն ի կատար ածելու համար Ադրբեջանի ներկայիս քաղաքական վերնախավն ունի *առավելագույն և նվազագույն* ծրագիր:

Առավելագույնը՝ Արցախին խաղաղ ճանապարհով՝ բանակցությունների միջոցով, վերատիրանալն է, նվազագույնը՝ Արցախը վերանվաճելն է պատերազմով: Բնականաբար Բաքվի համար նախապատվելի է առաջին սցենարը: Սակայն փաստը մնում է փաստ, որ այս երկու սցենարները պաշտոնական Բաքուն իրականացնում է զուգահեռաբար՝ մի կողմից Արցախին խաղաղ ճանապարհով վերատիրանալուն ուղղված ակտիվ դիվանագիտական – քարոզչական ակտիվություն ծավալելով, մյուս կողմից՝ պատրաստվելով պատերազմի: Հետևա-

Այս նպատակը պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլերի: Մասնավորապես Նախիջևանի միացումն Ադրբեջանին հնարավոր է միայն այն դեպքում, եթե Ադրբեջանը վերատիրանա Արցախին: Հետևաբար այս նպատակի երկրորդ փուլի կենսագործումն ուղղակիորեն պայմանավորված է առաջինի հաջող իրականացմամբ:

¹⁴ Այս նպատակը մենք հատկապես առանձնացնում ենք, քանզի այն ունի սկզբունքային նշանակություն խորապես ըմբռնելու համար ադրբեջանական քարոզչությանն էությունը, ինչպես նաև՝ Ադրբեջանի հեռահար շահերի հակահայեցողական ելույթները:

բար, հարկ է հատուկ ընդգծել, որ պաշտոնական Բաքվի ազդեսիվ հռետորաբանությունը լոկ քարոզչությունն է: Մեր դեմ տարվող հետևողական քարոզչությանը զուգահեռ պաշտոնական Բաքուն իսկապես նախապատրաստվում է պատերազմի, այսինքն՝ Արցախին վերատիրանալու նվազագույն ծրագիրն ի կատար ածելուն և, անտարակույս, կիրականացնի այն, եթե հայկական կողմը թուլանա և վերածվի խոցելի թիրախի:

Այսպիսով՝ պաշտոնական Բաքվի կողմից իր քարոզչամեթոդային առջև դրված նպատակներն ածանցյալ են Արցախին վերատիրանալու Բաքվի էքոնոքաղաքական – ռազմավարական նպատակի ձեռքբերման երկու սցենարներից: Այդ պատճառով էլ՝ ադրբեջանական քարոզչամեթոդային աշխատանքն ուսումնասիրելիս մենք իբրև մեթոդաբանական հիմք կընդունենք պաշտոնական Բաքվի կողմից *երկու՝ առավելագույն և նվազագույն, քարոզչական ծրագրերի զուգահեռաբար իրացման* հանգամանքը: Այդ ծրագրերից յուրաքանչյուրն ունի իր նպատակն ու ռազմավարությունը: Այդ ծրագրերն ադրբեջանական քարոզչամեթոդան փորձում է կենսագործել այդ նպատակով հատուկ ստեղծված քարոզչական թեզերի միջոցով: Ի դեպ, ադրբեջանական քարոզչության աշխատանքը փոխհամաձայնեցված է ադրբեջանական դիվանագիտության աշխատանքի հետ, պաշտոնական Բաքվի քարոզչական և դիվանագիտական թեզերը նույնական են:

Սակայն մինչ ադրբեջանական քարոզչամեթոդային առավելագույն և նվազագույն ծրագրերին մանրամասնորեն անդրադառնալը տեղին է ներկայացնել ադրբեջանական քարոզչության կառուցվածքը:

Բանն այն է, որ այսօր արդեն առավել քան ակն-

հայտ է, որ ի դեմս ադրբեջանական քարոզչության գործ ունենք մի կենտրոնից ղեկավարվող, ինստիտուցիոնալ տեսք ունեցող, բովանդակային ու կազմակերպչական հստակ կառուցվածք ունեցող համակարգի հետ:

Կազմակերպչական առումով այդ համակարգն ունի ներքո նշյալ կառուցվածքը: «Գլխամասային» կառույցը, որին վերապահված է ղեկավարել ադրբեջանական քարոզչության աշխատանքը Ադրբեջանի նախագահի աշխատակազմի քաղաքական վերլուծության և տեղեկատվական ապահովման բաժինն է: Ադրբեջանական քարոզչության «ինտելեկտուալ ապահովումը» վերապահված է Ադրբեջանի նախագահին առընթեր ռազմավարական հետազոտությունների կենտրոնին, որը Բաքվում հռչակել են «Ադրբեջանի գլխավոր ուղեղային կենտրոն»: Իսկ ահա բուն քարոզչությունն իրացնելու գործառույթը վերապահված է նախագահ Ալիևի աշխատակազմի կողմից վերահսկվող լրատվամիջոցներին, փորձագետներին, հասարակական, քաղաքական գործիչներին: Ի դեպ, նախագահ Ալիևն անձամբ է ընդգրկված քարոզչական գործին. հաճախ հենց նա է առաջինը բարձրաձայնում ադրբեջանական քարոզչական թեզերը:

Բովանդակային առումով թշնամական քարոզչության կառուցվածքային բաղադրիչների դերում հանդես են գալիս առանձին աշխատանքային ուղղությունները: Ի դեպ, այս առումով «քարոզչամեքենա» եզրույթը պատկերավոր և դիպուկ է բնորոշում Ադրբեջանի պետական քարոզչության համակարգը: Մասնավորապես ակնհայտ է, որ պաշտոնական Բաքուն տարիներ ի վեր վարում է հստակորեն տարբերակված քարոզչություն: Այսպես, ի մի բերելով վերջին տարիների ադրբեջանական քարոզչության աշխատանքը կարելի է առանձնացնել

Սեփական լսարանին ուղղված քարոզչական ներգործության նպատակն է կանխել անդրկովկասցի թուրքերի շրջանում արցախյան հակամարտության դեակտուալիզացիան, այսինքն՝ թույլ չտալ, որպեսզի անդրկովկասցի թուրքերը համակերպվեն Արցախի կորստի հետ: Այստեղից ածանցյալ է նաև սեփական հանրության շրջանում ազդեցիվ – ծավալապաշտական նկրտումներն ամրապնդելը, անդրկովկասցի թուրքերին նոր պատերազմին հոգեբանորեն պատրաստելը, նվաճողական պատերազմի զրկանքներին դիմակայելու և հաղթելու համար անհրաժեշտ հոգեբանական ռեսուրս ապահովելը:

Այդ նպատակն իրականացնելու համար ադրբեջանական քարոզչամեքենան որդեգրել է հետևյալ ռազմավարությունը՝ «նշակել» սեփական հանրության գիտակցությունը՝ արմատավորելով հայի՝ իբրև արյունարբու թշնամու կերպարը, խորացնելով հայության հանդեպ տոտալ ատելությունը, միաժամանակ ձևավորելով ռազմական առումով և տնտեսապես թույլ Հայաստանի, ուժեղ ադրբեջանական բանակի համոզվածություն:

ադրբեջանական քարոզչության երեք հիմնական աշխատանքային ուղղություն.

1. քարոզչություն՝ ուղղված դեպի սեփական, ներքին լսարանը,
2. քարոզչություն՝ ուղղված ՀՀ, Արցախի և համայն հայության լսարանին,
3. քարոզչություն՝ ուղղված արտաքին լսարանին, միջազգային հանությանը:

Այս ուղղություններից յուրաքանչյուրն ունի իր ուրույն նպատակները, ռազմավարությունն ու մարտավարական թեզերը:

Սեփական լսարանին ուղղված քարոզչական ներգործության նպատակն է *կանխել անդրկովկասցի թուրքերի շրջանում արցախյան հակամարտության դեակտուալիզացիան, այսինքն թույլ չտալ, որպեսզի անդրկովկասցի թուրքերը համակերպվեն Արցախի կորստի հետ*: Այստեղից ածանցյալ է նաև *սեփական հանրության շրջանում ազդեցիվ – ծավալապաշտական նկրտումներն ամրապնդելը, անդրկովկասցի թուրքերին նոր պատերազմին հոգեբանորեն պատրաստելը, նվաճողական պատերազմի զրկանքներին դիմակայելու և հաղթելու համար անհրաժեշտ հոգեբանական ռեսուրս ապահովելը*:

Այդ նպատակն իրականացնելու համար ադրբեջանական քարոզչա-

մեքենան որդեգրել է հետևյալ ռազմավարությունը՝ «մշակել» սեփական հանրության գիտակցությունը՝ արմատավորելով հայի՝ իբրև արյունարբու թշնամու կերդարը, խորացնելով հայության հանդեմ տրտալ ասելությունը, միաժամանակ ձևավորելով ռազմական առումով և ՏՆՏԵՍԱՊԵՍ թույլ Հայաստանի, ուժեղ ադրբեջանական բանակի հանդավածություն:

Այս ամենն արվում է, որպեսզի ադրբեջանական հանրությունը *դասրաս լինի* լիցի լիցի տասերազմի վերսկսմանը ցանկացած *դահի*, որդեսզի դառնա հաղթական լիցի տասերազմի անհրաժեշտության դիրքորոշման կրողը: Այսպիսով՝ ալիևյան վերնախավի ռազմամուլ-ռևանձիսական հռետրաբանությունը կոչված է ադրբեջանական հանրությանը հոգեբանորեն նախադասրասել հաղթական լիցի տասերազմին:

Հայկական լսարանին ուղղված քարոզչական ներգործության նպատակն է հայաստանյան հանրության վրա հետևողական հոգեբանական ճնշումներ բանեցնելու միջոցով հասունացնել մեզանում Արցախն Ադրբեջանին զիջելու գաղափարը ինչդեռ նաև «հոգեբանորեն նախադասրասել» սեփական հաղթանակը հնարավոր լիցի տասերազմում՝ հոգեբանորեն լիցի տասերազմում լիցի Հայաստանը դեռ մինչև լիցի տասերազմը:

Այս ուղղությամբ տարվող քա-

Հայկական լսարանին ուղղված քարոզչական ներգործության նպատակն է հայաստանյան հանրության վրա հետևողական հոգեբանական ճնշումներ բանեցնելու միջոցով հասունացնել մեզանում Արցախն Ադրբեջանին զիջելու գաղափարը ինչպես նաև «հոգեբանորեն նախապատրաստել» սեփական հաղթանակը հնարավոր պատերազմում՝ հոգեբանորեն պարտության մատնելով Հայաստանը դեռ մինչև պատերազմը:

Այս ուղղությամբ տարվող քարոզչության ռազմավարությունը հետևյալն է՝ հակաարցախյան դիրքորոշումներ տարածելով վարկաբեկել մեզանում արցախյան հաղթանակը, Արցախի ազատագրման փաստը, խորթ դարձնել Արցախը պաշտպանելու գաղափարը՝ միաժամանակ բարոյահոգեբանորեն թուլացնել Հայաստանն այնքան, որպեսզի պատերազմի վերսկսելը դառնա հնարավոր, իսկ ռազմական հաղթանակն ու Արցախի օկուպացիան՝ դյուրին և արագ:

րոզչության ռազմավարությունը հետևյալն է՝ *հակարցախյան դիրհորոշումներ սարածելով վարկաբեկել մեզանում արցախյան հաղթանակը, Արցախի ազատագրման փաստը, խորթ դարձնել Արցախը Պաշտոնանելու գաղափարը՝ միաժամանակ բարոյահոգեբանորեն թուլացնել Հայաստանն այնքան, որդեսզի դասերազմի վերսկսելը դառնա հնարավոր, իսկ ռազմական հաղթանակն ու Արցախի օկուպացիան՝ դյուրին և արագ*: Այս նպատակն իրականացնելու համար Բաքվի քարոզչամեքենան մշակել և հետևողականորեն փորձում է մեզանում ներդնել մի շարք մարտավարական քարոզչական թեզեր, որոնց մենք կանդիդատառանք ստորև: Նշենք, որ ադրբեջանական քարոզչության հենց այս հայաստանյան ուղղությունն է սույն ուսումնասիրության առարկան:

Միջազգային լսարանին ուղղված քարոզչության նպատակն է թույլ չտալ *որդեսզի միջազգային հանրությունը համակերպվի Արցախի անկախ լինելու իրողության հետ՝ բացառելով Արցախի իրավասուրբյեկության ձեռքբերումը*:

Միջազգային լսարանին ուղղված քարոզչության նպատակն է թույլ չտալ որպեսզի միջազգային հանրությունը համակերպվի Արցախի անկախ լինելու իրողության հետ՝ բացառելով Արցախի իրավասուրբյեկտության ձեռքբերումը:

Մասնավորապես՝ այս ուղղությամբ բանեցվում է հետևյալ ռազմավարությունը՝ *վարկաբեկել արցախահայության ինֆորմացիան իրավունքը, ընկալելի դարձնել, լեզգի-սիմիզացնել Արցախի և ՀՀ դեմ նոր ռազմական ագրեսիան*:

Մասնավորապես այս ուղղությամբ բանեցվում է հետևյալ ռազմավարությունը՝ վարկաբեկել արցախահայության ինֆորմացիան իրավունքը, ընկալելի դարձնել, լեզգի-սիմիզացնել Արցախի և ՀՀ դեմ նոր ռազմական ագրեսիան:

Սեփական և հայկական լսարանին ուղղված քարոզչական ներգործությանը և առհասարակ Հայաստանի հոգեբանական տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրներին անդրադառ-

նալիս հարկավոր է ելնել հրադադարի իրողությունից: Թշնամու քարոզչությունից բխող վտանգի մասին առավելագույնս իրատեսական պատկերացում կազմել հնարավոր է միայն այդ քարոզչական ներգործությունը հրադադարի համատեքստում դիտարկելու դեպքում: Բանն այն է, որ հրադադարը քարոզչական ներգործության համար բարենպաստ միջավայր է: Այդ իսկ պատճառով ադրբեջանական քարոզչության աշխատանքն ըստ առավելագույն և նվազագույն ծրագրերի ուսումնասիրելուց առաջ տեղին է անդրադառնալ հրադադարի սոցիալ – հոգեբանական նկարագրին:

2.1.1. Հրադադարի ռազմագիտական և սոցիալ-հոգեբանական նկարագիրը

«Ննջող պատերազմ»՝ ահա այսպես է սպարապետ Վազգեն Սարգսյանը բնորոշել հրադադարը, որը հաստատվել է հայ-ադրբեջանական պետական սահմանի ողջ երկայնքով 1994-ի մայիսի 16-ից առ այսօր: Այս տարիներին Հայաստանի Հանրապետությունն ու Արցախը վերածվեցին Ադրբեջանի ծավալած հոգեբանական պատերազմի թիրախի: Բնականաբար նման պայմաններում, թե՛ այսօր, թե՛ տեսանելի ապագայում, հայոց երկու պետությունների հոգեբանական – տեղեկատվական անվտանգության ապահովումը վերածվում է հրամայականի: Իսկ Հայաստանի¹⁵ հոգեբանական տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները հստակորեն պատկերացնելու համար առանցքային նշանակություն ունի բացահայտել հրադադարի ռազմագիտական և սոցիալիզացիոնա-

¹⁵ Հայաստան ասելով սույն աշխատանքում ի նկատի ունենք Հայոց երկու պետությունները՝ Հայաստանի Հանրապետությունն ու Արցախի Հանրապետությունը:

նական նկարագիրը: *Յրադադարի առկայությունն այս դեղմում հարկ է դիտարկել իբրև հայոց երկու ղեկավարությունների հոգեբանական – տեղակայման անվստահության խնդիրների գիտականորեն հստակ ձևակերպման և վերջիններիս լուծումների մշակման ելակետ նախատայման: Մասնավորապես հարկ է հաշվի առնել, որ հրադադարը խաղաղություն չէ: Յրադադարը ենթադրում է չկարգավորված հակամարտություն: Հակամարտության կարգավորված չլինելն իր հերթին ենթադրում է, որ այն ընթանում է տեղեկատվական, բարոյահոգեբանական, դիվանագիտական հարթություններում: Հետևաբար, այն մեթոդաբանությունը, որը պետք է ուղղորդի մեր երկրի հոգեբանական-տեղեկատվական անվտանգության ապահովմանն ուղղված լուծումները պետք է լինի հետևյալը՝ *դասերազմն ավարտված չէ, քանզի մեր երկիրը հրադադարի հաստատմից առ այսօր վերածվել է ադրբեջանական հոգեբանական դասերազմի թիրախի, ընդ որում՝ այդդիսին է մնալու դեռ շատ երկար, ավելին՝ Ադրբեջանի հետ նոր դասերազմը վաղ թե ուշ անխուսափելի է:**

Պատերազմի անխուսափելիության թեզը տվյալ դեպքում ընդգծում ենք միտումնավոր: Մեր երկրի տեղեկատվական – հոգեբանական անվտանգության ապահովմանն ուղղված քայլերը մշակելիս հարկավոր է ելնել վատթարագույն սցենարից: Նոր պատերազմը կանխելու համար պետք է ելնել այդ պատերազմի անխուսափելիությունից՝ կանխել պատերազմը պատերազմին պատրաստվելով, պատրաստվելով նաև բարոյահոգեբանական հարթությունում:

Եվ այսպես, ի՞նչ է հրադադարը: Ահա՛ թե ինչպես է բնորոշվում հրադադարը 2001-ին Մոսկվայում հրատարակված ռազմական հանրագիտարանային բառարանում. «Ռազմական գործողությունների

ժամանակավոր դադարեցում՝ պատերազմող կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Տարբերում են հրադադարի երկու տեսակ. տեղային՝ մասնակի և ընդհանուր: Տեղային հրադադարի արդյունքում ռազմական գործողությունները դադարեցվում են առանձին զորամասերի և ստորաբաժանումների միջև՝ ռազմաճակատի սահմանափակ տեղամասում, որոշակի ժամանակով: Ընդհանուր հրադադարի արդյունքում ռազմական գործողությունները դադարեցվում են անժամկետ՝ պատերազմի ողջ թատերաբեմում»¹⁶:

Այսպիսով, ժամանակակից ռազմական գիտության տեսանկյունից հրադադարը խաղաղությունն է, այն պատերազմի պասիվ փուլ է, երբ չկան լայնամասշտաբ ռազմական գործողություններ, սակայն, միաժամանակ, չկա նաև խաղաղություն՝ բառի բուն իմաստով: Հրադադարի՝ «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» պայմաններում խաղաղությունը հարաբերական է և անկայուն: Փոխարենը տեսականորեն առկա է ռազմական գործողությունների վերսկսման անընդմեջ պոտենցիալ վտանգ: Հրադադարին բնորոշ է ռազմաճակատի տարբեր տեղամասերում իրադրության կարճաժամկետ կտրուկ ապակայունացումը, դիվերսիոն խմբերի, դիպուկահարների ակտիվությունը: Հրադադարի ժամանակաշրջանում հակամարտող երկրների միջև պետական

ժամանակակից ռազմական գիտության տեսանկյունից հրադադարը խաղաղությունն է, այն պատերազմի պասիվ փուլ է, երբ չկան լայնամասշտաբ ռազմական գործողություններ, սակայն, միաժամանակ, չկա նաև խաղաղություն՝ բառի բուն իմաստով: Հրադադարի՝ «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» պայմաններում խաղաղությունը հարաբերական է և անկայուն: Փոխարենը տեսականորեն առկա է ռազմական գործողությունների վերսկսման անընդմեջ պոտենցիալ վտանգ: Հրադադարին բնորոշ է ռազմաճակատի տարբեր տեղամասերում իրադրության կարճաժամկետ կտրուկ ապակայունացումը, դիվերսիոն խմբերի, դիպուկահարների ակտիվությունը:

¹⁶ Военный энциклопедический словарь, Москва, 2001, том 2, стр. 292.

սահմանը վերածվում է ռազմաճակատի, որտեղ մշտական բնույթ են կրում անկանոն կրակոցները: Հրադադարի պայմաններում «ակտիվ» պատերազմի վերսկսման հավանականությունը կարող է նվազել, սակայն վերանալ իբրև այդպիսին՝ երբեք:

Հոգեբանական գիտության տեսանկյունից հրադադարը մի իրավիճակ է, որը ենթադրում է անորոշություն, մոտալուտ հեռանկարի անկանխատեսելի լինելու զգացում, ամեն վայրկյան պատերազմի վերսկսման պոտենցիալ հավանականություն: Այս ամենի հետևանքով հանրային տրամադրությունները բնորոշվում են տազնապով. տազնապը դառնում է հանրության շրջանում տիրապետող հուզական վիճակ:

Հոգեբանական գիտության տեսանկյունից հրադադարը մի իրավիճակ է, որը ենթադրում է անորոշություն, մոտալուտ հեռանկարի անկանխատեսելի լինելու զգացում, ամեն վայրկյան պատերազմի վերսկսման պոտենցիալ հավանականություն: Այս ամենի հետևանքով հանրային տրամադրությունները բնորոշվում են տազնապով, տազնապը դառնում է հանրության շրջանում տիրապետող հուզական վիճակ: Իսկ տազնապած հանրույթը ձգտում է առավելագույնս հստակեցնել հեռանկարը՝ ցրել

անորոշությունը և այդ կերպ փարատել տազնապը: Միևնույն ժամանակ տազնապած մարդը, հանրույթը հոգեպես կառավարելի դառնալու, հոգեկան կախվածության մեջ ընկնելու մեծ հավանականություն ունի և խոցելի է ամեն տեսակ հոգեբանական ածպարարությունների հանդեպ: Բանն այն է, որ տազնապած մարդու քննադատական մտածողությունը թուլանում է, մեծանում է կաղապարված մտածելու, կարծրատիպացված վարք հանդես բերելու հակվածությունը: Նրա ակտիվության հիմնական դրդապատճառը դառնում է անվտանգ, ապահով հեռանկար ապահովելը: Այդ է պատճառը, որ տազնապած հանրույթին հնարավոր է հուշել տարաբնույթ վարքի սցենարներ, ուղղորդել նրա վարքը: Հենց այս առումով էլ տազնապած հանրույթը

հարմար թիրախ է հակառակորդ կողմի համար:

Հրադադարի հոգեբանական նկարագրի համատեքստում անհրաժեշտ է նաև անդրադառնալ ասեկոսեների խնդրին:

Ասեկոսեն որոշակի տեղեկությունների փոխանցում է միջանձնային շփման միջոցով¹⁷: Ասեկոսեներում դրսևորվում են տվյալ հանրություն արևաքաղաքական դիրքորոշումները, բնակչության վերաբերմունքը երկրի ղեկավարության, պետական կարգի, լրատվամիջոցների հանդեպ: Ասեկոսեները արժեքավոր տեղեկությունների աղբյուրներ են: Շրջանառվող ասեկոսեները վերլուծելով կարելի է պատկերացում կազմել տվյալ հանրություն տիրող իրավիճակի մասին: Ասեկոսեների ուսումնասիրությունը թույլ է տալիս կանխատեսումներ կատարել երկրում իրադրության հետագա զարգացման վերաբերայլ:

Ասեկոսեների նշանակությունը հատկապես մեծանում է այն դեպքում, երբ տեղեկություններ ստանալու այլ աղբյուրները բացակայում են: Հոգեբաններն առանձնացնում են ասեկոսեների առաջացման երկու հիմնական պատճառ: Դրանցից առաջինը *թեմայի հանդեպ սլյալ խմբի հետաfrությունն է*: Հետևաբար ասեկոսեների տարածման շրջանը սահմանափակվում է տվյալ խնդրով հետաքրքրվող մարդկանց բնակության շրջանով: Երկրորդ գործոնը *հուսալի տեղեկության բացակայությունն է*: Ասեկոսեների տարածման համար անհրաժեշտ է ոչ միայն զուտ հետաքրքրություն, այլև՝ չբավարարված հետաքրքրություն: Այդ է պատճառը, որ տեղեկությունների տրամադրման անհարկի մեծածավալ սահմանափակումները պարարտ հող են ստեղծում ասեկոսեների տարածման համար: Այդ

¹⁷ Назаретян А. П., Агрессивная толпа, массовая паника, слухи, СПб, 2003, стр. 90.

դեպքում մարդկանց հետաքրքրող տեղեկությունների պակասը լրացնում են ասեկոսեները: Այս տեսակետից հետաքրքրական են ամերիկյան հոգեբաններ Ռիորչելի և Առնոլդի ուսումնասիրությունները: Նրանք նկատել են, որ երբ տեղեկության հրապարակումն արգելվում է, ապա մեծանում է մարդկանց հետաքրքրությունը դրա նկատմամբ: Նրանք սկսում են տարբեր ճանապարհներով տեղեկություններ որոնել, իսկ եթե հաջողվում է ստանալ՝ սկսում են տարբեր ուղիներով տարածել հասարակության մեջ: Այս մասնագետները նկատել են նաև, որ նույնիսկ մինչև արգելվող տեղեկության ստանալը, բոլորովին չիմանալով այն, մարդիկ դրա նկատմամբ ձեռք են բերում դրական դիրքորոշում՝ այն ըմբռնելու և դրա ազդեցության տակ իրենց կարծիքներն ու դիրքորոշումները փոխելու պատրաստակամություն: Այն հանրություն, որտեղ մարդկանց հետաքրքրող թեմայի մասին կան բավարար թվով տեղեկություններ, այնտեղ ասեկոսեների տարածման հավանականությունը նվազում է: Այնտեղ, որտեղ տեղեկությունը ստացվում է մի շարք աղբյուրներից, բավարարվում է նաև մարդկանց հետաքրքրությունը, և նվազում է ասեկոսեների տարածման հավանականությունը: Սակայն, նկատվել է նաև, որ անգամ տեղեկությունների աղբյուրների մեծաթիվ լինելու պայմաններում էլ հասարակությունում շրջանառվող ասեկոսեները էապես ամբողջացնում են որևէ մեկի կամ երևույթի մասին տեղեկությունները: Այստեղ հարկ է նշել նաև, որ տեղեկությունների տրամադրման ռացիոնալ սահմանափակումները պարզապես անխուսափելի են: Այդ դեպքում սակայն հարկավոր է լիակատար գաղտնիություն ապահովելուն զուգահեռ նախաձեռնություն հանդես բերել և տարածել ցանկալի բովանդակությամբ ասեկոսեներ:

Բացի այդ ասեկոսեները նաև հասարակական կարծիք, տրամադրություններ ձևավորելու միջոցներ են: Ասեկոսեները կարող են ուղղորդել մարդկանց վարքը: Այդ է պատճառը, որ ասեկոսեները հոգեբանական պատերազմի ամենաարդյունավետ միջոցների թվին են դասվում: Հասարակական կյանքի վրա ասեկոսեների առեւթի նշանակությունը նկատել են դեռ մացիստական Գերմանիայի առաջնորդները, որտեղ Գեբելսի ղեկավարած Քարոզչության նախարարության¹⁸ համակարգում այս երևույթը հետևողականորեն ուսումնասիրվել է և օգտագործվել տարատեսակ հոգեբանական օպերացիաների ընթացքում: Երկրորդ Համաշխարհային պատերազմում Գերմանիայի պարտությունից հետո ամերիկյան զինվորականները Ամերիկայի Միացյալ Նահանգներ տեղափոխեցին ոչ միայն Վերներ Ֆոն Բրաունի հրթիռային տեխնիկային առնչվող նորամուծություններն ու ոլորտի մասնագետներին, այլև ասեկոսեների խնդրով զբաղվողների: Ասեկոսեների ուսումնասիրությունը զաղտնիացվեց: Առ այսօր էլ, ըստ խնդրի հայ հետազոտող Հակոբ Նազարեթյանի, Միացյալ Նահանգներն առեւթի ուշադրություն են դարձնում հոգեբանական պատերազմի այս միջոցին, ինչի վկայությունն այն է, որ ցանկացած օտար երկրում գործող ամերիկյան դեսպանատան համակարգում կան հատուկ ստորաբաժանումներ, որոնք էլ զբաղվում են այդ երկրի ասեկոսեների ուսումնասիրությամբ:

Ասեկոսեները տարածվում են շատ արագ: Ընդ որում՝ նկատվել է նաև, որ ասեկոսեների տարածման արագությունը հատկապես մեծանում է այն դեպքում, երբ դրանք պաշտոնական տեղեկությունների հակասող տեղեկություններ են պարունա-

¹⁸ Ժողովրդական լուսավորության և քարոզչության կայսրական մինիստրություն: Կազմավորվել է 1933 թ. մարտի 11-ին:

կում, անգամ այն դեպքում երբ այդ տեղեկությունները բացահայտ սուտ են: Տարածման արագությունը տվյալ դեպքում պայմանավորված է դրանց հետաքրքրաշարժ, թարմ լինելով, տվյալ խմբին հետաքրքրող թեմայի վերաբերյալ պաշտոնական տեղեկությունների բավարար չլինելով, պաշտոնական աղբյուրների հանդեպ կանխակալ թերահավատությամբ: Ահա ողջ վերը նշվածի պատճառով էլ ասեկոսեներով ստացված տվյալները ընդունվում են գրեթե առանց քննադատության: Որպես կանոն ասեկոսեները բերնեբերան փոխանցվելիս կապվում են հեղինակավոր աղբյուրի հետ, որի պատճառով էլ թվում են հավաստի: Ասեկոսեները հատկապես խորհրդավոր բնույթ են ստանում, եթե հաղորդվում են «թաքուն», «որպես գաղտնիք»:

Ասեկոսեներին բնորոշ յուրահատկություններից մեկը շրջանառվելու ընթացքում նրանց բովանդակության աղճատումն է: Մասնավորապես ասեկոսեների մեջ տեղեկության այն մանրամասնությունները, որոնք տվյալ հանրույթի անդամների համար էական չեն՝ վերանում են, իսկ ասեկոսեի բովանդակությունը դառնում է ավելի կարճ: Այս երևույթը մասնագետներն անվանում են հարթեցում: Փոխարենը չափազանցվում, ընդգծվում են տեղեկությունների այն կողմերը, որոնք հետաքրքրում են տվյալ խմբին: Բացի այդ, ասեկոսեները «հարմարվում են» կոնկրետ միջավայրին: Այսինքն, ասեկոսեներում պարունակվող տվյալները կապվում են տվյալ խմբում տարածված կարծիքների և տրամադրությունների, ցանկությունների հետ: Որպես կանոն, այս դեպքում փոփոխվում է ասեկոսեի մի մասը միայն, սակայն դրա արդյունքում ասեկոսեն ստանում է միանգամայն այլ բովանդակություն: Հարմարեցման պատճառով է նաև, որ ասեկոսեները կորցնում են իրենց հավաստիություն-

նը՝ փոխանցվելով մեկ միջավայրից մյուսը: Այդ է պատճառը, որ նույն ասեկոսեի բովանդակությունը տարբեր խմբերում տարբեր է հագեցած տեղական կարծիքներով, տրամադրություններով և ստերեոտիպերով:

Ասեկոսեները կարող են պարունակել նաև բացահայտ սուտ տեղեկություններ, հագեցնալ իրականում գոյություն չունեցող մանրամասնություններով: Թե ասեկոսեի որ՞ հատվածը կսրվի, ո՞րը կվերանա, կախված է տվյալ հանրության կարծրատիպերից:

Ասեկոսեները բաղկացած են հուզական և տեղեկատվական բաղադրիչներից: Ըստ այդմ՝ ասեկոսեները դասակարգվում են ըստ երկու չափանիշի՝ ըստ արտահայտչականության՝ հուզականորեն հագեցված լինելու, և ըստ տեղեկությունների: Բնագավառի հայ հետազոտող Հակոբ Նազարեցյանը, ըստ հուզական չափանիշի, տարբերակում է՝ ասեկոսե-ցանկությունները, ասեկոսե-խրտվիլակները և ագրեսիվ ասեկոսեները:

Ասեկոսե-ցանկություններում կարելի է տեսնել հասարակության սպասումները, նպատակները: Ցանկություն-ասեկոսեներում հասարակության համար ցանկալին ներկայացված է որպես իրականություն: Դրանցում դրսևորվում է հասարակության որոշ խավերի ցանկությունները, սպասումները այս կամ այն խնդրի, մարդու, երևույթի մասին: Այդպիսիք հիմնականում ունեն դրական ուղղվածություն:

Ասեկոսե-խրտվիլակներում կարող են առկա լինել թեթև վատատեսականից ընդհուպ մինչև բացահայտ խուճապային տրամադրություններ, չափազանցված վախ: Խրտվիլակ ասեկոսեները հատկապես լայն տարածում են ստանում սոցիալական լարվածության, տնտեսական, քաղաքական ճգնաժամի, տարերային աղետների,

պատերազմական պայմաններում, երբ ապագան դառնում է անորոշ: Անորոշության պայմաններում ասեկոսեները դառնում են հուզականորեն հագեցած և շատ ազդեցիկ: Անորոշության պայմաններում մարդիկ դառնում են ավելի ներշնչվող և միմյանց են փոխանցում իրենց տազնապները: Այս առումով պատերազմի պայմանները նպաստում են ասեկոսեների տարածմանը: Կցկտուր տեղեկություններով մարդիկ ձգտում են փարատել անորոշությունը, հստակեցնել ապագան: Նման ասեկոսեները կարող են առաջանալ ինչպե՛ս տարերայնորեն, այնպե՛ս էլ միտումնավոր կերպով ներդրվել շրջանառության մեջ իրադրությունը ապակայունացնելու նպատակով: Խրտվիլակ ասեկոսեները մեծացնում են մարդկանց ներշնչվողության մակարդակը: Այս դեպքում մարդիկ համակվում են ուժեղ հուզականությամբ և կարող են կախվածության մեջ ընկնել ցանկացած արկածախնդիր մեկից, ով հավատ կներշնչի մարդկանց:

Ռազմական հոգեբանության տեսանկյունից պատերազմը մարդկային հոգեկանի վրա ներգործող գերիզոր սթրեսորների հանրագումար է, երբ գերլարված հոգեվիճակը՝ սթրեսը, դառնում է տևական՝ ըստ էության վերածվելով կենսակերպի: Պատերազմում իրավիճակին համարժեք կենսագործունեություն իրականացնելու նպատակով մարդկային հոգեկանը ենթարկվում է արմատական վերակողմնորոշման, ձևավորվում է վարքի նոր ռազմավարություն, վերակառուցվում է մարդու ողջ արժեքային համակարգը:

Սույն համատեքստում տեղին է մանրամասնորեն անդրադառնալ պատերազմական պայմաններում խրտվիլակ ասեկոսեների տարածման խնդրին: Ռազմական հոգեբանության տեսանկյունից պատերազմը մարդկային հոգեկանի վրա ներգործող գերիզոր սթրեսորների հանրագումար է, երբ գերլարված հոգեվիճակը՝ սթրեսը, դառնում է տևական ըստ էության վերածվելով կենսակերպի: Պատերազմում իրավիճակին համարժեք կենսագործունեություն իրականացնելու նպատակով մարդկային հոգեկանը ենթարկվում է արմատական

վերակողմնորոշման, ձևավորվում է վարքի նոր ռազմավարություն, վերակառուցվում է մարդու ողջ արժեքային համակարգը:

Ակնհայտ է՝ պատերազմում հաղթելու համար պատերազմող երկրի հանրությը պետք է լինի հոգեբանորեն կայուն: Եթե այդ հոգեբանական կայունությունը բացակայում է, ապա մեծանում է հանրության շրջանում խուճապի բռնկման հավանականությունը: Իսկ պատերազմական ժամանակաշրջանում հանրության հոգեկան կայունության հիմնական սպառնալիքներից է բարոյալքող ասեկոսեների տարածումը: Ինչպես արդեն վերը նշել ենք՝ այդպիսիք կարող են հանգեցնել խուճապի: Պատերազմական պայմաններում հանրության հոգեկան կայունության գրավականը՝ պետական մարմինների անխափան գործունեությունն է, որի գլխավոր նպատակն է արդյունավետ իրացնել սեփական գործառույթները, առավելագույն կազմակերպվածություն հաղորդել պատերազմող երկրի հանրային կյանքին, լիարժեքորեն վերահսկել իրադրությունը երկրում, ապահովել բանակի կայուն թիկունքը: Իսկ պետական համակարգը կարող է արդյունավետ գործել միայն այն դեպքում, երբ պետական տարբեր մարմինների միջև առկա է ներդաշնակ համագործակցություն և փոխհամաձայնեցված աշխատանք: Ահա վերջիններիս հիմնական խոչընդոտը խուճապն է: Հետևաբար, պատերազմող երկրի պետական համակարգի առջև ծառայած գերխնդիրը քաղաքացիական բնակչության շրջանում խուճապը կանխելն է կամ, եթե այն բռնկվել է՝ վերացնելը:

Խուճապը (պանիկոն՝ ինքնաբերական սարսափ) այնպիսի հուզական վիճակ է, որտեղ վախը ծայրահեղորեն սրվել է՝ վերածվելով սարսափի: Հոգեբանական վարակի մեխանիզմի միջոցով

սարսափը մեկ անհատից անցնում է մյուսներին, շատ արագ տարածվում հանրությանը, քայքայում նրա կառուցածքը՝ այն վերածելով խառնամբոխի: Ընդ որում՝ այդ սարսափի առաջացման պատճառը կարող է լինել թե՛ իրական, թե՛ մտացածին: Մարդը կարող է իրատեսորեն չզննահատել դրությունը և չափազանցնել չնչին սպառնալիքն անգամ: Խուճապով համակված հանրության կենսագործունեությունը կազմալուծվում է: Խուճապի հետևանքը քառսն է, երբ հանրային կյանքը զերծ է որևէ կազմակերպվածությունից: Յայ անվանի հոգեբան Ալբերտ Եալչաջյանը խուճապը բնորոշում է որպես ամբոխի վարքի այնպիսի տեսակ, որին հատուկ են զանգվածային սարսափը որևէ իրական կամ երևակայական վտանգի հանդեպ: Տվյալ դեպքում գործ ունենք վախի աֆեկտի հետ, որի ազդեցության տակ մեծաթիվ մարդիկ միաժամանակ անմիտ կամ վտանգավոր գործողություններ են կատարում: Խուճապահար մարդու վարքը չի կառավարվում գիտակցության կողմից: Գործում է «թունելային էֆեկտը», երբ մարդու գիտակցության սահմանները նեղանում են, և մարդ իրեն հաշիվ չի տալիս, թե ինչ է անում: Խուճապահար մարդն ի վիճակի չէ սթափ վերլուծել իրավիճակը, չի կողմնորոշվում նրանում, նրա գործողությունները հաշվարկված չեն, անտրամաբանական են, համարժեք չեն իրադրությանը: Խուճապահար մարդու վարքը անկազմակերպ է, ինքնաբերական, բնագոյային: Խուճապի ժամանակ սոցիալական նորմերը մոռացվում են, մարդիկ ավելի ագրեսիվ և եսասեր են դառնում՝ փորձելով փրկել իրենց կյանքը՝ հաշիվ չառնելով մյուսներին: Խուճապահար մարդիկ

Խուճապահար մարդն ի վիճակի չէ սթափ վերլուծել իրավիճակը, չի կողմնորոշվում նրանում, նրա գործողությունները հաշվարկված չեն, անտրամաբանական են, համարժեք չեն իրադրությանը: Խուճապահար մարդու վարքը անկազմակերպ է, ինքնաբերական, բնագոյային:

կարող են կատարել վայրագություններ:

Պատերազմի պայմաններում սրվում է հավաստի տեղեկություններ ստանալու մարդկանց պահանջը, ինչը պայմանավորված է ռազմաճակատում իրավիճակի արագ փոփոխվելու հանգամանքով: Այս համատեքստում նույնպես հարկավոր է համակարգված աշխատանք տարբեր գերատեսչությունների միջև: Պետական այս կամ այն գերատեսչության կողմից իր կատարած աշխատանքի մասին ժամանակին տեղեկություն տալը պատերազմի պայմաններում խուճապը կանխող վճռորոշ գործոններից է: Խուճապի չմատնվելու համար պատերազմող երկրի հանրությունը պետք է համոզված լինի, որ իշխանությունը վերահսկում է իրավիճակը: Տեղեկությունների օպերատիվ տրամադրումը ապագայի կանխատեսելիության տպավորություն է ստեղծում մարդկանց մոտ, վստահություններ չնշում նրանց: Հարկավոր է հաշվի առնել, որ պատերազմի արհավիրքներից տուժած մարդկանց միշտ թվում է, թե օգնությունն ուշանում է, որ պետական մարմինները լավ չեն աշխատում, որ իրենք լքված են բոլորի կողմից: Անհրաժեշտ տեղեկությունների օպերատիվ տրամադրումը կարող է մեղմել այդ սուբյեկտիվ զգացողությունը:

Ազրեսիվ ասեկոսներում դրսևավորվում են հասարակության ազրեսիվ դիրքորոշումները կոնկրետ երևույթների մարդկանց հանդեպ: Դրանք հագեցած են որևէ խմբի, անհատի, երևույթի հանդեպ թշնամանքով, աստվությանմբ: Ազրեսիվ ասեկոսները առաջանում են այն դեպքում, երբ տվյալ հանրույթի տարբեր խմբերի միջև առկա է լարվածություն, շահերի հակասություն: Հետաքրքրականն այն է, որ ազրեսիվ ասեկո-

Պատերազմի արհավիրքներից տուժած մարդկանց միշտ թվում է, թե օգնությունն ուշանում է, որ պետական մարմինները լավ չեն աշխատում, որ իրենք լքված են բոլորի կողմից:

սենները առաջանում են նաև տարերային աղետների դեպքում, երբ հարկավոր է լինում մեղավորներ որոնել: Այս դեպքում ագրեսիվ ասեկոսենների միջոցով որևէ մեկը որպես կանոն երկրի իշխանությունների վրա է ուղղորդում ագրեսիան՝ նրանց վերածելով քավության նոխագի:

Տեղեկատվական չափանիշի համաձայն առանձնացվում են չորս տեսակի ասեկոսեններ՝ ըստ դրանցում պարունակվող տվյալների հավաստի լինելու: Դրանցում հավաստիության և ստի հարաբերակցությունը նշանակում են + և - նշաններով՝ + + +՝ զրեթե հավաստի, + + -՝ կիսով չափ հավաստի, + -՝ որոշ չափով հավաստի, -՝ լիովին սուտ: Ըստ այդմ՝ ստի և իրականության հարաբերակցության չափանիշի առանձնացվում են՝ ա) բացարձակապես անհավաստի, բ) մասամբ հավաստի, գ) հիմնականում հավաստի և դ) ճշմարտանման ասեկոսեններ: Հատկանշականն այն է, որ ասեկոսեն երբեք չի լինում լիովին հավաստի, սակայն կարող է լինել լիովին սուտ:

Նացիստական Գերմանիայում ասեկոսենների ուսումնասիրությունը դրված էր պետական հիմքի վրա և խիստ գաղտնիացված էր: Պատերազմից հետո գերմանացի մասնագետները տեղափոխվեցին ԱՄՆ:

Ասեկոսենների տարածման մեխանիզմները դարձան ԱՄՆ հատուկ ծառայությունների ուսումնասիրությունների առարկա: 20-րդ դարի 60-ական թվականներին արդեն ամերիկյան մասնագետները հանգել էին այն կարծիքին, որ ասեկոսենների միջոցով իրականացվող քարոզչությունն իր արդյունավետությամբ չի զիջում ՁԼՄ-ների միջոցով իրականացվողներին: ԱՄՆ-ի դեսպանատներում աշխատում էին մասնագետներ, որոնք հետևում էին տվյալ երկրի հասարակության շրջանում տա-

րածված ասեկոսեներին՝ ուսումնասիրելով դրանց բովանդակությունը, դիմամիկան:

Եթե քարոզչական թերթիկները մատչելի են գրագետ մարդկանց համար, ապա ասեկոսները հասու են բոլորին և ուղղակիորեն ազդում են հանրության հուզական վիճակի վրա:

Ասեկոսները կարող են տարածվել կամ ինքնաբերաբար՝ հանրության շրջանում տեղեկատվական վակուումի պատճառով, կամ էլ՝ նպատակաուղղված տարածման շնորհիվ:

Պատերազմների փորձը միաժամանակ վկայում է, որ ասեկոսների նպատակաուղղված տարածումը պահանջում է մեծ վարպետություն ու զգուշություն, քանի որ տարածվելուց հետո դրանք կարող են վերահսկողությունից դուրս գալ: Հասարակության մեջ շրջանառվող ասեկոսեները հաճախ ենթարկվում են լուրջ բովանդակային փոփոխությունների, անգամ այնքան, որ երբեմն ստանում են դրանց ստեղծողների նախատեսած իմաստին միանգամայն հակադիր իմաստ:

Ժողովրդավարական հասարակություններում ասեկոսեների առկայությունը բնական է համարվում այնքան ժամանակ, քանի դեռ դրանք չեն սպառնում երկրի անվտանգությանը, ներքին կայունությանը: Այս դեպքում անհրաժեշտությունից դրդված իշխանությունները ստեղծում են ասեկոսների հանդեպ կայուն հոգեբանական միջավայր, ինչը ենթադրում է՝

- պաշտոնական տեղեկությունների հանդեպ մեծ օպերատիվություն և անընդհատություն,
- հաղորդվող տեղեկություններում հավաստիության բարձր մակարդակ,
- տեղեկության աղբյուրի և լսարանի միջև հստակորեն կարգավորված հետադարձ կապ, որպեսզի հնարավոր լինի արագ արձագանքել իրադ-

րության չնչին փոփոխության դեպքում:

- ասեկոսների հանդեպ զգայուն խմբի անդամների համար հաճելի զբաղվածության ստեղծում, որպեսզի նրանց առօրյան հագեմա հետաքրքրությամբ:

Վերջին տասնամյակներում գործադրվել են շրջանառվող ասեկոսների վերացման մի շարք ուղիներ: Դրանցից առաջինը ամենապարզունակն է: Խոսքը ասեկոսի բովանդակությունը հերքելու մասին է: Սակայն այս հնարը միշտ չէ, որ արդյունավետ է: Երբեմն, ընդհակառակը, այս պարզունակ հնարն ուժեղացնում է ասեկոսների տարածումը: Ասեկոսների անտեսումը նույնպես վտանգավոր է: Արդյունավետ չեն նաև զուտ հռետորական բնույթի արտահայտությունները, ինչպիսին է օրինակ՝ «մի՛ հավատացեք ասեկոսներին»:

Ասեկոսների վերացնելը ստեղծագործական աշխատանք է: Այստեղ շատ էական է այն աղբյուրի հեղինակությունը, որը կոչված է հերքելու կամ վերացնելու ասեկոսին: Եթե աղբյուրը վստահություն է ներշնչում, ապա արդյունավետ է լինում այսպես կոչված «ճակատային գրոհ»։ Այս դեպքում ներկայացվում է ասեկոսի բովանդակությունը, ինքնաքննադատաբար նշվում են նրա առաջացման պատճառները, ապա բերվում են հակափաստարկներ, որոնցով և հերքում է ասեկոսին:

Եթե աղբյուրը անծանոթ է լսարանին, ապա արդյունավետ է «թևանցիկ գրոհը»։ Այս դեպքում որևէ կերպ չհիշատակելով ասեկոսի բովանդակությունը, տարատեսակ պատրվակներով հետևողակաճորեն տրվում է հակառակ բովանդակությամբ տեղեկություն:

Որոշ դեպքերում ասեկոսի դեմ պայքարի լավագույն միջոցը այն հաստատելն է: Այս դեպքում ասեկոսն կորցնում է իր խորհրդավոր բնույթը, և

կանխվում է նրա բովանդակության չափազանցեցումը խոսքից խոսք անցնելիս:

Այսպիսով, լինելով տազնապահարույց իրավիճակ՝ հրադադարը պոտենցիալ առումով հոգեբանորեն խոցելի է դառնում հակամարտող կողմերից յուրաքանչյուրի հասարակությունը հակառակ կողմի համար, նպաստավոր պայմաններ ստեղծում թե՛ սեփական, թե՛ հակառակորդ երկրում անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծման և տարաբնույթ հոգեբանական դիվերսիաների համար: Այդ իսկ պատճառով հրադադարը հարկ է դիտարկել որպես ադրբեջանական քարոզչության հայաստանյան ուղղության ռազմավարությունն արդյունավետ դարձնող էական գործոն: Եվ բնավ տարօրինակ չէ, որ Բաքվում փորձում են օգտվել այս հանգամանքից: Թշնամու հենց այդ հոգեբանական դիվերսիաներին էլ մենք կանդադառնանք ստորև՝ ադրբեջանական քարոզչության առավելագույն և նվազագույն ծրագրերն ուսումնասիրելիս:

2.2. Ադրբեջանական քարոզչության առավելագույն ծրագիրը

Ինչպես վերը նշեցինք, ադրբեջանական քարոզչության առավելագույն ծրագրի նպատակն է՝ *հետևողական հոգեբանական – քարոզչական ճնշումներ բանեցնելու միջոցով ես ստանալ Արցախի ողջ սարածր՝ առանց դատապարտման, խաղաղ ճանապարհով՝ բանակցությունների արդյունքում:*

Սույն նպատակն իրականացնելու համար ադրբեջանական կողմն իր քարոզչական ակտիվությունը

Ադրբեջանական քարոզչության առավելագույն ծրագրի նպատակն է՝ հետևողական հոգեբանական – քարոզչական ճնշումներ բանեցնելու միջոցով ես ստանալ Արցախի ողջ տարածքը՝ առանց պատերազմի, խաղաղ ճանապարհով՝ բանակցությունների արդյունքում:

ծավալուն է թե՛ հայաստանյան, թե միջազգային լսարանի շրջանում:

Միջազգային լսարանի պարագայում պաշտոնական Բաքվի նպատակն է Արցախի իրավասուբյեկտություն ձեռք բերելը բացառելը, «Ադրբեջանի տարածքային ամբողջականության» սեփական պատկերացումները լեգիտիմիզացնելը:

Միջազգային լսարանի պարագայում պաշտոնական Բաքվի նպատակն է. *Արցախի իրավասուբյեկտություն ձեռք բերելը բացառելը, «Ադրբեջանի սարածքային ամբողջականության» սեփական դասկերացումները լեգիտիմիզացնելը:*

Իսկ ահա հայաստանյան լսարանի պարագայում թշնամու նպատակն է. *հայաստանյան հանրության ժողովուրդը հասունացնել հակամարտությունը միակողմանի զիջումներով կարգավորելու դիրքորոշումը և, ըստ այդմ, Հայաստանում հրահրել ճնշումներ մեր երկրի ռազմաֆաղափական ղեկավարության վրա՝ այդ զիջումներին գնալու նդամակով:* Այստեղ տեղին է մանրամասնել:

Դատելով ադրբեջանական քարոզչության վերջին տարիների ակտիվությունից՝ իրականացնելու համար իր քարոզչական առավելագույն ծրագիրը պաշտոնական Բաքուն որդեգրել է մի ռազմավարություն, որի էությունը հետևյալն է. շրջափակման միջոցով մեր երկրում հրահրել կենսամակարդակի անկում, զուգահեռաբար խորացնել մեր հանրության իրադարձարով պայմանավորված տագնապները, ապա միաժամանակ հուշել այդ տագնապներն ու սոցիալ-տնտեսական զրկանքները ծնող պատճառից ձեռքբազատվելու ուղին:

Վստահաբար կարելի է ասել, որ մեր երկրի դեմ բանեցվում է բարոյահոգեբանական ճնշումների դասական քարոզչական սցենար: Ադրբեջանական քարոզչության առավելագույն ծրագրի տրամաբանությունը կարելի է հանգեցնել հետևյալին՝ *սղառնալ դասերացմով, բայց չսկսել այն:*

Դատելով ադրբեջանական քարոզչության վերջին տարիների ակտիվությունից՝ իրականացնելու համար իր քարոզչական առավելագույն ծրագիրը պաշտոնական Բաքուն որդեգրել է մի ռազմավարություն, որի էությունը հետևյալն է. *ժողովրդական*

միջոցով մեր երկրում հրահրել կենսամակարդակի անկում, զուգահեռաբար խորացնել մեր հանրույթի հրադադարով տայմանավորված սազնադները, ադա միաժամանակ հուշել այդ սազնադներն ու սոցիալ-սնտեսական զրկանքները ծնող դասճառից ձերբազատվելու ուղին:

Այսպես, տարիներ շարունակ փորձ է արվում շրջափակման միջոցով տնտեսապես «խեղդել» մեր երկիրը և հրահրել սոցիալտնտեսական բարդություններ և կենսամակարդակի անկում, զուգահեռաբար անընդհատ սպառնալ պատերազմով սրել տագնապներն, ապա՝ սոցիալտնտեսական զրկանքների պատճառով առաջացած հանրային դժգոհություններն ուղղել Արցախի կերպարի վրա, հանրության լայն շրջաններում վարկաբեկել Արցախն ազատագրելու և այն պաշտպանելու՝ հաղթանակին տեր կանգնելու գաղափարը, որից հետո՝ հուշել պատերազմը կանխելու, հանրային տագնապները փարատելու ելքն՝ ի դեմս Արցախը հանձնելու գաղափարի: Պատերազմով սպառնալուն զուգահեռ պաշտոնական Բաքուն պարբերաբար ապակայունացնում է իրադրությունը պետական սահմանին՝ մեզանում ձևավորելով «ամեն վայրկյան պատերազմի վերսկսման հավանականության» պատրանք, և ահա այդ հոգեբանական ֆոնին փորձում է մեզանում հասունացնել Արցախը հանձնելու գաղափարը, հրահրել այն թյուր, բայց վտանգավոր թեզի տարածումը, թե իբր Արցախը մեր երկրի կայուն տնտեսական զարգացման և խաղաղ հեռանկարի խոչընդոտն է:

Պատերազմով սպառնալուն զուգահեռ պաշտոնական Բաքուն պարբերաբար ապակայունացնում է իրադրությունը պետական սահմանին՝ մեզանում ձևավորելով «ամեն վայրկյան պատերազմի վերսկսման հավանականության» պատրանք, և ահա այդ հոգեբանական ֆոնին փորձում է մեզանում հասունացնել Արցախը հանձնելու գաղափարը, հրահրել այն թյուր, բայց վտանգավոր թեզի տարածումը, թե իբր Արցախը մեր երկրի կայուն տնտեսական զարգացման և խաղաղ հեռանկարի խոչընդոտն է:

ռանկարի խոչընդոտն է: Այլ կերպ՝ խորացնել մեր հանրության տագնապները, միաժամանակ հուշել այդ տագնապները ծնող պատճառից ձերբազատվելու ուղին ի դեմս Արցախը հանձնելու: Հարկ է նշել, որ այս ռազմավարությունը կյանքի է կոչվում Թուրքիայի հետ համատեղ, վերջինիս անմիջական մասնակցությամբ¹⁹:

Եվ այսպես, մեզանում հակաարցախյան դիրքորոշումներ ձևավորելու նպատակով՝ ադրբեջանական քարոզչությունը հայաստանյան հանրության շրջանում հետևողականորեն տարածում է հետևյալ մարտավարական քարոզչական թեզերը²⁰:

1. «Արցախը հայաստանյան հանրության խաղաղ տղազայի տղառնալիքն է. նոր դասերազմը կան-

¹⁹ Այս համատեքստում հարկ է շեշտել հետևյալը՝ Ադրբեջանը թուրքական նախագիծ է, պանթուրքական նպատակների կենսագործման մի դրսևորում: Հետևաբար չկա և չի կարող լինել հակասություններ այս երկու թուրքական պետությունների ռազմավարական - էթնոքաղաքական շահերի միջև: Այդ շահերը նույնական են: Հակասությունները կարող են լինել միայն իրադրական հարցերում, այն էլ հիմնականում պայմանավորված ալիևյան կլանի քրդական ծագմամբ: Մասնավորապես հայատյացության հարցում այս երկու թուրքական պետությունների միջև հակասություններ չեն կարող լինել անգամ տեսականորեն: Ընդ որում՝ հայատյացության դիրքորոշումները թե՛ Թուրքիայում, թե՛ Ադրբեջանում մնացել են գրեթե անփոփոխ, այնպիսին, ինչպիսին էին տասնամյակներ առաջ: Պարզապես պատմական տվյալ ժամանակաշրջանում իր հակահայկական - ազրեսիվ նկրտումները Թուրքիան փորձում է իրականացնել Ադրբեջանի միջոցով, որտեղ հայատյացությունը վերածվել է պետական գաղափարախոսության:

²⁰ Քարոզչական թեզ ասելով պետք է հասկանալ քարոզչական ազդեցության հիմնական գաղափարական բովանդակությունը: Հոգեբանության դիրքերից քարոզչական թեզը դիրքորոշում է, որը պետք է ներմուծել հանրության գիտակցության մեջ, այն մարտավարությունը, որը հարկավոր է բանեցնել՝ առաջադրված նպատակը ձեռք բերելու համար:

խելու միակ հնարավորությունը Արցախն Ադրբեջանին զիջելն է»:

2. «Արցախը Հայաստանի սնտեսական զարգացման խոչընդոտ է, երկրի սոցիալ – սնտեսական հիմնախնդիրների դասճառ»:

Այլ կերպ ասած՝ թշնամին անում է ամեն ինչ, որպեսզի Արցախը հայաստանյան հանրության կողմից ընկալվի իբրև գլխացավանք, որից հարկավոր է «ազատվել»:

Ինչ խոսք, ցանկացած հայ մարդու համար հայրենիք հանձնելու գաղափարը խորթ է, արգահատելի ի սկզբանե: Սակայն թերագնահատել թշնամական քարոզչությունից բխող վտանգը չի կարելի: Ադրբեջանական քարոզչամեքենան Արցախը զիջելու գաղափարը զուգորդում է յուրաքանչյուր մարդու համար կարևոր կենցաղային խնդիրների լուծման, ինչպես նաև բոլորի համար ընդունելի արժեքների՝ խաղաղության, բարեկեցիկ կյանքի, իսկ հայրենիքը պաշտպանելու գաղափարը՝ պատերազմի, զոհերի, զրկանքների հետ: Ադրբեջանական քարոզչության այս մարտավարական թեզերի թիրախը մեր այն հայրենակիցներն են, ովքեր դժգոհ են իրենց կենցաղային պայմաններից, հուսահատված են, որոնց մոտ թուլացել են հայրենասիրական դիրքորոշումները:

Թշնամու այս քարոզչական ռազմավարությունը

Մեզ անում հակաարցախյան դիրքորոշումներ ձևավորելու նպատակով՝ ադրբեջանական քարոզչությունը հայաստանյան հանրության շրջանում հետևողականորեն տարածում է հետևյալ մարտավարական քարոզչական թեզերը:

1. «Արցախը հայաստանյան հանրության խաղաղ ապագայի սպառնալիքն է. նոր պատերազմը կանխելու միակ հնարավորությունը Արցախն Ադրբեջանին զիջելն է»:

2. «Արցախը Հայաստանի տնտեսական զարգացման խոչընդոտ է, երկրի սոցիալ – տնտեսական հիմնախնդիրների պատճառ»:

Թերագնահատել թշնամական քարոզչությունից բխող վտանգը չի կարելի: Ադրբեջանական քարոզչամեքենան Արցախը զիջելու գաղափարը զուգորդում է յուրաքանչյուր մարդու համար կարևոր կենցաղային խնդիրների լուծման, ինչպես նաև բոլորի համար ընդունելի արժեքների՝ խաղաղության, բարեկեցիկ կյանքի, իսկ հայրենիքը պաշտպանելու գաղափարը՝ պատերազմի, զոհերի, զրկանքների հետ:

Բանն այն է, որ իր կենսամակարդակից դժգոհ մարդը միշտ հակված է որոնել մեղավորներ, որոնց վրա հնարավոր կլինի բարդել իր կենցաղի բարդությունների մեղքը: Ահա թուրք՝ ադրբեջանական տանդեմի նպատակն է ամեն ինչ անել, որ քաղաքական անցուդարձից հեռու, իր կենսամակարդակից դժգոհ Հայաստանի Հանրապետության բնակիչը այդ մեղքը բարդի Արցախի կերպարի վրա, որպեսզի Արցախն ընկալվի իբրև քավության նոխազ:

չի կարելի թերագնահատել: Բանն այն է, որ իր կենսամակարդակից դժգոհ մարդը միշտ հակված է որոնել մեղավորներ, որոնց վրա հնարավոր կլինի բարդել իր կենցաղի բարդությունների մեղքը: Ահա թուրք-ադրբեջանական տանդեմի նպատակն է ամեն ինչ անել, որ քաղաքական անցուդարձից հեռու, իր կենսամակարդակից դժգոհ Հայաստանի Հանրապետության բնակիչը այդ մեղքը բարդի Արցախի կերպարի վրա, որպեսզի Արցախն ընկալվի իբրև քավության նոխազ:

Տարիներ շարունակ Անկարայում և Բաքվում ակնկալում են, որ այս ռազմավարությունը կտա իր ցանկալի արդյունքը, որ տնտեսական զրկանքները և պատերազմի մշտական վտանգն ի վերջո մեզանում կհասունացնեն «տանք, հանգիստ ապրենք» ինքնակործան դիրքորոշումը, որ մեր հասարակության սովոր հատվածի համար «հակամարտության կարգավորում» ասվածը կնշանակի Արցախի հանձնում, և հայաստանյան հանրությունն ի վերջո կզնա զիջումների, որ Արցախը պաշտպանելուն ուղղված քայլերն անհրապուրիչ կդառնան հանրային լայն շրջանների համար, որ հայաստանյան հանրությունը ճնշումներ կբանեցնի երկրի ռազմաքաղաքական ղեկավարության վրա՝ դրդելով հանձնել Արցախը:

Ի դեպ՝ ներքին ճնշումների մասին: Ամեն անգամ, երբ բանակցային գործընթացում հավանակն է դառնում ինչ – ինչ համաձայնությունների ձեռքբերումը, ինչ-որ բան ստորագրելն, ապա ադրբեջանական կողմն ավելի ինտենսիվ է դարձնում իր քարոզչական ներգործությունը՝ հայաստանյան

հանրության վրա, որպեսզի վերջինս ճնշումներ բանեցնի Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարության վրա՝ ստիպելով նրան գնալ զիջումների: Որպես կանոն, այդ դեպքում ադրբեջանական քարոզչամեքենան բազմապատկում է իր ջանքերը կարծաթամկետ հեռանկարում արդյունք ստանալու համար: Մասնավորապես՝ խաղարկվում է հետևյալ սցենարը:

Ամենատարբեր աղբյուրներով հայաստանյան տեղեկատվական դաշտ են ներմուծվում մոտալուտ պատերազմի հավանականության մասին տեղեկություններ: Ընդ որում՝ այդ տեղեկությունները մեր հանրությանը մատուցվում են հետևյալ մեկնաբանությամբ. «պատերազմը կարող է վերսկսվել, եթե բանակցություններում հայկական կողմը չընդունի ադրբեջանական պահանջները»: Որպես կանոն, «պատերազմ կամ զիջումներ» կատեգորիկ երկընտրանքի մասին խոսում են իրենց իբրև չեզոք ներկայացնող արտերկրացի փորձագետներն ու վերլուծաբանները, որոնք, սակայն իրականում ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են Ադրբեջանի իշխանությունների հետ: Ահա այս, մեղմ ասած, կանխակալ վերլուծաբանների խուճապահարույց վերլուծություններին զուգահեռ՝ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը սկսում է առավել ինտենսիվորեն հնչեցնել իր արդեն հեթապահ սպառնալիքները: Միաժամանակ թշնամին կտրուկ ապակայունացնում է իրավիճակը պետական սահմանին, որպեսզի իր այդ սպառնալիքներն առավել իրատեսական դառնան, և ըստ այդմ՝ մեզանում առկա տազնապներն է՛լ ավելի սրվեն: Բաքվի հաշվարկը հստակ է. Հայաստանում ձևավորել անառողջ հոգեբանական ֆոն, ինչը թույլ կտա ավելի արագ հասունացնել Արցախը հանձնելու դիրքորոշումը, Հայաստանի իշխա-

նությունների վրա ներքին ճնշումներ հրահրելը: Փաստորեն նման դեպքերում գործադրվում է վերը նշված նույն քարոզչական ռազմավարությունը, միայն ավելի ինտենսիվ, «արագացված» սցենարով: Վերջինս պատկերավոր կերպով կարելի է բնորոշել որպես «ինտենսիվ ահաբեկման սցենար»:

Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարության վրա ներքին ճնշումներ հրահրելու ենթատեքստն ունի նաև, այսպես կոչված, դիպուկահարային պատերազմը: Մանրամասները:

Կայուն պարբերականությամբ դիպուկահար կրակով դիրքապահ հայ զինվորներ սպանելը չունի որևէ ռազմական նպատակահարմարություն: Բանն այն է, որ Բաքվի ռազմաքաղաքական վերնախավը հստակորեն գիտակցում է այն արժեքը, որն ունի մեզ համար զինվորի կյանքը, և այն, թե ինչ ցավոտ է մեր հանրությունը տանում զինվորի մահը: Այս հանգամանքը Բաքվում, ամենայն հավանականությամբ, դիտարկում են իբրև հայաստանյան հանրության խոցելի կողմ և փորձում օգտվել դրանից:

Մասնավորապես՝ պետական սահմանին լարվածության անընդհատությունը պահպանելը, դիպուկահար կրակով անընդմեջ հայ դիրքապահներ սպանելը, ինչպես նաև սահմանամերձ գյուղերի ուղղությամբ բացված կրակը, ու զուգահեռաբար Արցախը որպես այդ կորուստների պատճառ հռչակելը նպատակ ունեն *հոգեբանական ճնշում բանեցնել հայաստանյան հանրության վրա, տղավորություն ստեղծել, թե իբր իրենք են դրության սերը սահմանին, թե իբր ամեն վայրկյան տաքտաք են վերսկսել լայնամասշտաբ ռազմական գործողությունները*: Այդ կերպ թշնամին ձգտում է մեզանում ձևավորել զոհերի անընդհատ լինելու զգացողություն, անելանելի իրավիճակի տպավորություն,

որն իր հերթին կծնի անկումային տրամադրություններ՝ հուսալքություն, տագնապներ, դժգոհություններ ստեղծված իրավիճակից՝ «մինչև ե՞րբ պետք է այսպես շարունակվի» տրամաբանությամբ հակաարցախյան դիրքորոշումներ, զորակոչի հանդեպ ժխտողականություն:

Այսպիսով՝ թշնամին նախ ձգտում է մեզանում ստեղծել ահա մման անառողջ, ճնշող բարոյահոգեբանական մթնոլորտ, այն հույսով, որ այդ ֆոնին հնարավոր կլինի հասունացնել Արցախը զիջելու գաղափարը մեզանում, ավելին՝ հրահրել ներքին ճնշումներ մեր երկրի ռազմաքաղաքական ղեկավարության վրա: Ի դեպ այն, որ դիպուկահարային պատերազմն ունի քաղաքական – քարոզչական նպատակահարմարություն, Բաքվում խոստովանում են բացահայտ: Բնավ պատահական չէ, որ դիպուկահարներին սահմանից հեռացնելն ադրբեջանական կողմը մերժում է հետևյալ մեկնաբանությամբ. «հանձնեք Արցախը և դիպուկահարների կարիք այլևս չի լինի»: 2011-ի ապրիլին Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը պաշտոնական Բաքվի այս քաղաքականությունը որակեց որպես «ռազմական դիվանագիտություն», որի քարոզչական ենթատեքստը պատկերավոր կերպով կարելի է բնորոշել որպես «անընդհատ վնասի մարսավարություն»:

Այդ, այսպես կոչված, «ռազմական դիվանագիտությունն» ունի նաև դիվանագիտական-քաղաքական կողմ: Բանն այն է, որ ալիևյան ռեժիմին հարկավոր է, որպեսզի թե՛ Հայաստանում, թե՛ տարածաշրջանում սեփական աշխարհաքաղաքական շահերը ռազմաքաղաքական վերնախավի մոտ տպավորություն ստեղծվի, թե իբր Ադրբեջանը պատրաստ է ամեն վայրկյան վերսկսել պատերազմը:

Արցախյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում պաշտոնական Բաքուն պատերազմը չվերսկսելը ներկայացնում է իբրև իր կողմից արվող հնարավոր առավելագույն փոխզիջում: Հատկանշական է սակայն, որ Բաքուն մեծ պատերազմի պատրաստ չէ: Հաղթական պատերազմ վարելու համար անհրաժեշտ ռազմական, տնտեսական, արտաքին քաղաքական և ներքաղաքական բարոյահոգեբանական ռեսուրս Ադրբեջանը չունի: Հետևաբար, Ադրբեջանին հարկավոր է ո՛չ թե պատերազմ, այլ՝ պատերազմի պատրանք:

Ինչ վերաբերում է էլմար Մամեդյարովի կողմից հռչակված, այսպես կոչված, «ռազմական դիվանագիտությանը», ապա տեղին է անդրադառնալ նաև վերջինիս ներքաղաքական ենթատեքստին: Ակնհայտ է, որ ի դեմս հայության, Հայաստանի թշնամու կերպարը վառ պահելով է հնարավոր միայն հիմնավորել ուճացված ռազմական բյուջե ունենալու անհրաժեշտությունը, որն Ադրբեջանի նավթային եկամուտները գրպանելու, պարզապես «փող լվալու», շատ հարմար միջոց է ալիևյան կլանի համար: Բացի այդ՝ հանրային ճգնաժամի շեմին գտնվող Ադրբեջանում թշնամու կերպարը հարմար միջոց է հանրության ուշադրությունը ներքին խնդիրներից շեղելու, ադրբեջանական հանրության հնարավորինս մեծ մասին ալիևյան իշխանության շուրջ կոնսոլիդացնելու, այն ամրապրնդելու, ավտորիտար իշխանության գոյությունը հիմնավորելու համար: Հենց այդ նպատակին է ծառայում այն կեղծ թեզը, թե ղարաբայան խնդրի կարգավորված չլինելը խոչնդոտում է Ադրբեջանի ժողովրդավարացմանը: Եվ ամենակարևորը. պաշտոնական Բաքուն ադրբեջանական հասարակությանը հոգեբանորեն պատրաստում է պատերազմի, և սահմանին իրադրության

ապակայունացումն անհրաժեշտ է ադրբեջանցի թուրքերի շրջանում պատերազմի անավարտ լինելու, նախապատերազմական անընդհատ վիճակի զգացողությունն ու հայերի հանդեպ ատելությունը վառ պահելու և ամեն վայրկյան մարտի նետվելու պատրաստության հոգեվիճակ ձևավորելու համար: Այն հարկավոր է նաև, որպեսզի ադրբեջանցի թուրքերի նոր սերունդը չհամակերպվի Արցախի կորստի անդառնալիության հետ:

Այսպիսով՝ խաղաղ բնակավայրերի և դիրքապահների վրա բացված կրակը ո՛չ թե պատահականություն է կամ որևէ առանձին ադրբեջանցի զինծառայողի քմահաճույք, այլ Ադրբեջանի բարձրագույն ռազմաքաղաքական ղեկավարության կամքը: Ի դեմս թշնամու դիպուկահարային ակտիվության գործ ունենք հայաստանյան հանրույթը նախ ահաբեկելու, ապա՝ Արցախը հանձնելու դիրքորոշումներ ձևավորելու քարոզչական սցենարի հետ²¹ «հանձնեք Արցախը՝ կապրեք խաղաղ»

²¹ Ահաբեկման միջոցով մարդկանց դիրքորոշումները փոփոխելու կամ նորերը ձևավորելու խնդիրը հանգամանորեն ուսումնասիրված է քարոզչության հոգեբանության ասպարեզում: Հատկանշական են ամերիկյան հոգեբան Ուլիամ Մակ Գայրիի հետազոտությունները, որոնց նպատակն էր վեր հանել վախի և դիրքորոշումների փոփոխության միջև կապը: Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ դիրքորոշումների խորքային փոփոխություն ունակ է առաջացնել միայն միջին ուժգնության վախը: Բանն այն է, որ եթե վախը թույլ է, ապա այն հեշտությամբ է հաղթահարվում և չի հանգեցնում դիրքորոշումների փոփոխության: Ուժգին վախը ապակազմակերպում է մարդու գործունեությունը, այն զրկում կշռադատվածությունից, իսկ ընկալումները դարձնում իրականությանը անհամարժեք: Ու թեև ուժգին վախով համակված մարդը հակվում է ելք որոնել ձերբազատվելու համար վախը ծնող պատճառից, սակայն ուժգին հուզականության ազդեցության տակ ունակ չի լինում ընկալել իրեն քարոզվող այն տեղեկությունը, որն իրեն մատուցվում է որպես ելք վախ ծնող իրավիճակից, ունակ չի լինում հասկանալ,

ենթատեքստով: Այն կարելի է բնորոշել նաև որպես պատերազմի շանտաժ, որի նպատակն է բանակցություններում կորզել առավելագույնը՝ հետ ստանալու Արցախի տարածքը: Իսկ թե ինչպես է հարկավոր հակազդել այդ ուժային դիվանագիտութունն ասվածին, մենք կանդրադառնանք ստորև:

2.2.1. «Համարժեք պատասխանի» մարտավարությունը

Վերջին տարիներին թշնամին կայուն պարբերականությամբ, ելնելով քաղաքական և քարոզչական դրդապատճառներից, ապակայունացնում է իրավիճակը հայ-ադրբեջանական պետական սահմանի տարբեր տեղամասերում:

Վերը մենք անդրադարձանք այն հարցին, թե ինչու՞ է Ադրբեջանի ռազմաքաղաքական վերնախավին ձեռնտու պետական սահմանին իրավիճակը պահել կայուն – լարված, իսկ արցախյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում կարևոր զարգացումների նախօրեին կամ մեզ համար նշանակալի տոներից առաջ կտրուկ ապակայունացնել իրադրությունը սահմանի տարբեր հատվածներում:

թե ինչ է պահանջվում իրենից: Իսկ ահա միջին ուժգնության վախի դեպքում մարդն ունակ է դառնում համարժեքորեն ընկալել իրեն քարոզվող տեղեկությունը և քարոզչին ցանկալի որոշում կայացնել:

Այստեղ նշենք, որ հակառակորդի կողմից պատերազմով սպառնալու անընդհատությունն ու այդ սպառնալիքները չիրականացնելը, ադրբեջանական քարոզչության թեզերի տարածմանը զուգահեռ մեզանում այլընտրանքային տեղեկությունների տրամադրման անընդհատությունը, զուգահեռաբար նաև հակառակորդի սպառնալիքները չեզոքացնելուն ունակ հայկական ռազմական ներուժը պարբերաբար ցուցադրելը զրկում է ադրբեջանական քարոզչության ահաբեկման սցենարը բավարար արդյունավետությունից:

Նման իրավիճակում ելքը մեկն է. չտրվել շանտաժի և ապացուցել թշնամուն, որ մենք մեր ձեռքբերումների տերն ենք լինելու: Ծավալվում է նյարդերի պատերազմ, որտեղ հաղթելու է բարոյահոգեբանորեն առավել տոկունը: Մենք տոկուն չլինելու իրավունք չունենք: Շանտաժի լեզվով խոսող թշնամուն հարկավոր է զսպող ուժ հակադրել «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» տրամաբանությամբ, ինչը ճիշտ է նաև զուտ քարոզչական տեսակետից:

«Ազրեսիա». այս բնորոշումն է համարժեք կերպով արտահայտում պետական սահմանին առկա իրողությունները: Ինքնին փաստը, որ ադրբեջանական բանակը կրակ է բացում ՀՀ տարածքի ուղղությամբ արդեն իսկ բավարար է տեղի ունեցածն իբրև ազրեսիա բնորոշելու համար: Իսկ եթե հաշվի ենք առնում այն, որ թշնամու թիրախը Հայաստանի Հանրապետության անզեն քաղաքացիներն են, ապա «ազրեսիա» բնորոշումն այս դեպքում միանգամայն տեղին է: Հարկ է նշել, որ նման դեպքերում հայկական կողմն ունի իր պաշտպանության իրավունքի իրացման բավարար իրավական հիմք և կարող է ընտրել այդ իրավունքի իրացման ցանկացած սցենար, որ տվյալ դեպքում նպատակահարմար կհամարի: Ընդ որում՝ տվյալ դեպքում հայկական ուժերի պատասխանը չի կարելի դիտարկել իբրև սադրանք. բնավ: Հայոց զինուժը կատարել և կատարելու է երկրի խաղաղ բնակչությանը պաշտպանելու իր գործառույթը, և այդ առումով սա ո՛չ թե սադրանքին տրվել է, այլ ստեղծված իրավիճակին՝ թշնամու ազրեսիային, համարժեք պատասխան: Թշնամու ազրեսիան անպատասխան թողնել չի կարելի, և ուրեմն թշնամական կրակակետերը պետք է լռեցվեն:

Այսպիսով՝ ստեղծված իրավիճակում հայկա-

կան կողմի միակ հնարավոր արձագանքը *համարժեք տասասխանն է*: Իսկ ի՞նչ ասել է «համարժեք պատասխան»: Անմիջապես ընդգծենք. *Տվյալ դեղմում խոսքն իմողուլսիվ, տարզունակ վրեժխնդրության մասին չէ: Հեճևաբար՝ «համարժեք տասասխան» ասվածը չի կարելի հանգեցնել զուտ թեմանուն տասճառված մարդկային կորուսների ֆանակական կողմին, ինչը խնդրի տարզունակ ընկալման հեճևանք է*: Այո՛, թեմանուն պետք է պատճառվեն ցավոտ կորուստներ, սակայն վերջինս «համարժեք պատասխան» ասվածի մի կողմն է միայն և չի կարող լինել ինքնանպատակ, պահի հուզականությամբ դրդված: Մանրամասնենք:

Եվ այսպես՝ *«համարժեք տասասխանը» տվյալ դեղմում թեմանուն զտղելու, նրա նախահարձակ ազրեսիան կանխելու միակ հնարավոր և արդյունավետ մեխանիզմն է՝ զուտ ռազմական և ֆաղափական – ֆարոզչական նոտասակներ ենթադրող միջոցառումների ամբողջություն, բազմակողմանի մարտավարություն, որն իրենից ղեճ է ներկայացնի հրադադարի տայմաններում մեր երկրի տաճտանվելու իրավունքի իրացում*:

Հայկական կողմի «համարժեք պատասխան» ասվածն անընդհատ մի գործընթաց է, որի նպատակը պետք է լինի սահմանամերձ բնակավայրերի բնակչության, մարտական հերթապահություն իրականացնող զինվորական անձնակազմի ֆիզիկական անվտանգության, ինչպես նաև կոմունիկացիաների սահմանին հարող տեղամասերով անվտանգ և անխափան երթևեկության ապահովումը:

«Համարժեք պատասխանի» մարտավարության մեջ հարկ է առանձնացնել երկու ուղղություն՝ *ռազմական և ֆարոզչական – ֆաղափական*:

Ռազմական ուղղությունն իր հերթին նպատակահարմար է բաժանել երկու՝ *կանխարգելիչ* և *հակահարվածային* կողմերի: Մանրամասնենք:

Կանխարգելիչ կողմը ենթադրում է մշտական բնույթ կրող այնպիսի միջոցառումներ, որոնք նվազագույնի կհասցնեն թշնամու դիվերսիոն և դիպուկահարային ակտիվությունը, հետևաբար՝ կապահովեն նրա հանդեպ մարտավարական առավելություն պետական սահմանի այս կամ այն տեղամասում:

Պատասխան ճնշող կրակի անխուսափելիությունն ուժերի հավասարակշռություն կստեղծի սահմանի տվյալ տեղամասում, որով թշնամու նախահարձակ ակտիվությունը կզսպվի: Հակառակորդի ակտիվությունը կաշկանդող այդպիսի միջոցառումների թվին կարելի է դասել՝ ա) ճակատի որևէ տեղամաս առավելագույնս վերահսկելի դարձնելու, հնարավորինս մեծ տարածք մեր դիրքապահների կրակի տակ պահելու նպատակով հակառակորդի հանդեպ տիրապետող հենակետերի տեղադրումը, ինչը թույլ կտա տեղային առավելություն ձեռք բերել թշնամու հանդեպ՝ կաշկանդելով նրա կրակային ակտիվությունը՝ պետական սահմանի տվյալ տեղամասում, բ) տարաբնույթ օպերատիվ միջոցառումներ, օրինակ՝ սահմանի կոնկրետ տեղամասում թշնամու դիպուկահարային կամ դիվերսիոն ուժերը ոչնչացնելը, գ) պետական սահմանի ողջ երկայնքով ամրաշինական աշխատանքների իրականացում, այդ թվում՝ պետական սահմանի առանձին տեղամասերի և մարտական հենակետերի հակադիվերսիոն պաշտպանության համակարգերի կատարելագործում և այլն: Այդպիսի կանխարգելիչ միջոցառումների վառ օրինակ է Արցախ-Ադրբեջան պետական սահմանի երկայնքով ձգվող ամրաշինական համակարգը: Այդ սահ-

մանը խորը էշելոնացված պաշտպանական համակարգ է, որն ընդունված է կոչել նաև «Օհանյանի գիծ», և որտեղ ամրաշինական աշխատանքները երբեք չեն դադարում:

Մեկ այլ օրինակ՝ վերջին տարիներին պետական սահմանի ողջ երկայնքով ձևավորվել է մարտական հենակետերի հակադիվերսիոն պաշտպանության համակարգ՝ հագեցած բազմաթիվ ինքնատիպ և միևնույն ժամանակ պարզ լուծումներով, ինչի արդյունքում մեր մարտական հենակետերը հնարավորինս անմատչելի են դարձել թշնամու դիվերսիոն խմբերի համար, իսկ մեր զինվորները՝ մարտական հենակետում առավել հուսալի պաշտպանված: Մարտական հենակետերի հակադիվերսիոն պաշտպանության համակարգն արդեն այսօր վերածվել է հրադադարի՝ պասիվ պատերազմի պայմաններում թշնամու հանդեպ մարտավարական առավելության կարևոր գործոնի:

Հակահարվածային կողմը ենթադրում է թշնամու նախահարձակ ագրեսիվությունը զսպելուն ուղղված և իրադրական նպատակահարմարությամբ պայմանավորված այնպիսի պատասխան պատժիչ միջոցառումների ամբողջություն, ինչպիսիք են՝ ա) թշնամու ակտիվ կրակակետերի լռեցնելը, բ) դրանց անձնակազմի ոչնչացումը, գ) այդ կրակակետերի գրավումը, դ) հակադիպուկահարների հատուկ միջոցառումները, ե) մեր տարածք ներթափանցած դիվերսիոն խմբերի ոչնչացումը և այլն:

Ինչպես վերը նշվեց, «համարժեք պատասխանը» ունի ինչպես խաղաղ բնակչության անվտանգությունն ապահովելու, թշնամուն զսպելու զուտ ռազմական, այնպես էլ հեռահար՝ քաղաքական – քարոզչական ենթատեքստ: Վերջինիս էությունը հետևյալն է:

Տվյալ դեպքում սկզբունքորեն կարևոր է, որ-

պեսզի «ռազմական դիվանագիտության» դիմաց ադրբեջանական հասարակությունը թանկ գին վճարի, որպեսզի մեր համարժեք պատասխանի արդյունքում թշնամին կրի բազմապատիկ անգամ ավելի մեծաթիվ, հանրային ընդվզում առաջացնելու ունակ կորուստներ: Այլ կերպ ասած՝ նման դեպքերում **Հայոց բանակի համարժեք դասասխանի արդյունքը դեռ է լինի այն, որ ադրբեջանական հանրության լայն շրջաններն ալիևյան «ռազմական դիվանագիտությունը», այդ նախահարձակ ագրեսիվությունը գնահատեն իբրև արկածախնդրություն:** Ասվածը ենթադրում է, որ կանխարգելիչ և հատկապես հակահարվածային ցանկացած միջոցառում ծրագրելիս հարկ է ելնել թե՛ զուտ ռազմական, թե՛ քաղաքական – քարոզչական, այն է՝ հակառակորդին հնարավոր առավելագույն մարդկային կորուստներ պատճառելու նպատակահարմարությունից: Այլ կերպ՝ անհամաչափ ուժ կիրառելով է հնարավոր թշնամու հանդեպ բարոյահոգեբանական առավելությունը պահպանել: Սա է թշնամուն զսպելու միակ ելքն այն դեպքում, երբ ադրբեջանական նախահարձակ ագրեսիան զսպելու միջազգային իրավական, դիվանագիտական մեխանիզմները չեն աշխատում: Այո՛, Ադրբեջանում հանրային կարծիքը հաշվի առնելու մշակույթ գոյություն չունի: Այո՛, Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը առաջին գծում լարվածությունը պահպանելուց լիովին չի հրաժարվում անգամ կորուստների գնով: Այդուհանդերձ, պատասխան պատժիչ գործողություններ ձեռնարկելն ու հնարավորինս մեծաթիվ կորուստներ պատճառելը թշնամու նախահարձակ ագրեսիան զսպող միակ արդյունավետ միջոցն է: Ընդ որում՝ որքան անհամաչափ լինի հայկական զինուժի պատասխանը, այնքան ավելի տևական կլինի

հարաբերական անդորրի ժամանակահատվածը: Հանրահայտ է միաժամանակյա մեծաթիվ կորուստների բարոյալքող, երկրի հանրային կյանքն ապակայունացնող պոտենցիալը, ինչն անհնարին է անտեսել անգամ Ադրբեջանի պես ավտորիտար երկրում: Ասվածի ապացույցը Ադրբեջանի պաշտպանական գերատեսչության մեզ քաջ հայտնի պրակտիկան է. սեփական մեծաթիվ միաժամանակյա կորուստների մի մասը թաքցնել, մյուս մասը՝ հանրությանը ներկայացնել մաս-մաս, երեք-չորս օրվա ինտերվալով՝ միաժամանակ խեղաթյուրելով մերոնց կաղմից ոչնչացրած ասկյարների մեծ մասի մահվան իրական հանգամանքները՝ դրանց վերագրելով այլ պատճառներ՝ օձի խայթոց, կայծակի հարված, զետուև խեղդվել, զորամասի տանիքի փլուզում, ինքնասպանություն, զենքի հետ անզգույշ վարվել և այլն: Որպես կանոն, մարտական կորուստների մի փոքր մասն է միայն հաղորդվում որպես այդպիսին: Բնականաբար, դա արվում է Ադրբեջանում հակապատերազմական դիրքորոշումների ամրապնդման, Արցախն անդառնալիորեն կորցրած լինելու գաղափարի տարածման վախից: Միայն այդպես՝ համոզվելով, որ դիպուկահարային պատերազմը կարող է հակառակ արդյունքի բերել թշնամին, թող որ ժամանակավորապես, բայց զսպվում է: Պարզ է, որ հրադադարի պայմաններում լիովին բացառել թշնամու դիպուկահարային ակտիվությունն անհնարին է. տվյալ դեպքում խոսքը դրա ինտենսիվությունը շեշտակիորեն նվազեցնելու, դրան էպիզոդիկ բնույթ հաղորդելու մասին կարող է լինել: Քաղաքական ենթատեքստ ունեցող արկածախնդրություններից թշնամին միանգամից չի հրաժարվելու, հետևաբար հեռանկարում դրանք անխուսափելի են: Մենք այսուհետ նույնպես պետք է հոգեբանորեն պատ-

րաստ լինենք ադրբեջանական արկածախնդրություններին: Եվ այսպես այնքան ժամանակ, մինչև ադրբեջանական հանրության գիտակցության մեջ ամրապնդվի հետևյալ աներկբա ճշմարտությունը. ալիևյան արկածախնդրության գինը իրենց զավակների կյանքն է: Կրկնենք, Ադրբեջանի հետ «հրադադարային» հարաբերությունների փորձը հուշում է, որ թշնամին այնքան ավելի երկար չի դիմի նախահարձակ ագրեսիայի, որքան ավելի անհամաչափ լինի մեր պատասխանը: Հատկանշական է, որ ադրբեջանական կողմը դիմում է նոր ագրեսիայի ճիշտ այն ժամանակ, երբ նախորդ միաժամանակյա կորուստների հանրային վտանգավորության պոտենցիալը թուլացած է լինում: Այստեղ հարցն այն է, թե որ՞ն է այդ միաժամանակյա կորուստների հնարավոր վերին շեմը, որից այն կողմ ալիևյան կլանն այլևս չի դիմի նման քայլերի. տրամաբանությունը պարզ է՝ որքան ավելի մեծ կորուստներ, այնքան ավելի երկար լուռ կմնա թշնամին: Ըստ ամենայնի՝ այդ վերին շեմը որոշողը հայկական բանակն է: Հակառակ դեպքում ադրբեջանական ագրեսիան կլինի անընդհատ, անպատժելիությունը թշնամուն էլ ավելի լկտի և սանձարձակ կդառննի՝ հետևաբար մենք շատ ավելի մեծաթիվ կորուստներ կունենանք, ընդ որում՝ ոչ միայն զինվորականության, այլև սահմանամերձ գյուղերի բնակչության շրջանում: Ահա՛ կանխարգելիչ, թշնամուն բառի բուն իմաստով զսպող համարժեք պատասխանի բանաձևը: Այսպես է ձեռք բերվում խաղաղությունը, խաղաղություն, որը փխրուն է, հարաբերական, սակայն միակ հնարավորը ներկա աշխարհաքաղաքական իրողությունների պայմաններում:

Ի դեպ, ակնհայտ է, որ հայկական կողմի նման հակազդեցության արդյունքում Ադրբեջանում աս-

տիճանաբար տեղի է տալիս «հզոր ադրբեջանական բանակի» առասպելը, հանրային գիտակցության մեջ ավելի է ամրապնդվում կարճ և հաղթական պատերազմի անհնարին լինելու գաղափարը: Կասկածից վեր է նաև այն, որ ցավոտ պատասխանը ընկճող ազդեցություն է ունենում ընդհանուր առմամբ ադրբեջանական բանակի և հատկապես մարտական հերթապահություն իրականացնող ստորաբաժանումների անձնակազմի վրա. չէ՞ որ իր կորուստների իրական մասշտաբները պաշտոնական Բաքուն սեփական զինվորականությունից թաքցնել պարզապես չի կարող:

Իսկ ինչ վերաբերում է ադրբեջանական ագրեսիային հայաստանյան հանրության ռեակցիային, ապա այստեղ նման դեպքերում տիրապետողը՝ կտրուկ պատասխանի հասարակական պահանջ է: Այո՛, մենք ծանր ենք տանում մեր զինվորների մահը: Սակայն այդ ամենից հետո բարոյալքվելու փոխարեն մեզանում ավելի է սրվում ադրբեջանցի թուրքի հանդեպ թշնամանքը: Իսկ, ինչպես գիտենք, արտաքին թշնամու կերպարը նպաստում է հասարակության համախմբմանը: Այդ համախմբման արդյունքը լինում է թշնամուն խաղաղություն պարտադրելու նպատակով վճռական գործողություններ ձեռնարկելու հանրային պահանջի ձևավորումը:

Այս համատեքստում տեղին է անդրադառնալ մեզանում մերթ ընդ մերթ հնչող այն տեսակետին, թե հայկական կողմի համարժեք պատասխանի արդյունքում ռազմական գործողությունների մասշտաբները աստիճանաբար կծավալվեն և, ի վերջո հրադադարի հաճախակի խախտման դեպքերը սահուն կերպով կվերաճեն լայնամասշտաբ պատերազմի: Եվ ուրեմն՝ որքանո՞վ է հավանական պատերազմի ինքնաբուխ բռնկման հավանականությունը:

«Ապոնտան պատերազմի» սցենարը, ըստ իս, սխալ է մեթոդաբանորեն: Ժամանակակից պատերազմները վարվում են միանգամայն այլ տրամաբանությամբ: Նախահարձակ կողմը մոբիլիզացնելով իր բոլոր ռեսուրսները ձգտում է հնարավորինս շուտ ոչնչացնել թշնամու ռազմական ենթակառուցվածքները: Պատերազմը թանկ հաճույք է անգամ գերտերությունների համար: Տևական պատերազմը ահռելի մարդկային, նյութական, հոգեբանական ռեսուրս է պահանջում: Հետևաբար՝ կողմերը ձգտում են արագ հաղթանակի, որի համար անհրաժեշտ է ուժերի շեշտակի գերազանցություն: Ապոնտան պատերազմը թույլ չի տալիս ապահովել արագ հաղթանակ, այն ձգձգված է ի սկզբանե և հյուժուժ է կողմերի ռեսուրսները: Գնալ սպոնտան պատերազմի ուղիով՝ նշանակում է կորցնել նախաձեռնությունը թե՛ ռազմական, թե՛ հոգեբանական առումով: Բացի այդ, պատերազմը սկսվում է համապատասխան քաղաքական որոշման առկայության դեպքում: Ես չեմ կարծում, որ ռազմական գործողությունների սպոնտան բռնկումն է, որ հանգեցնելու է Բաքվում պատերազմի քաղաքական որոշման կայացմանը: Այդ որոշումը կարող է կայացվել միայն այն դեպքում, երբ թշնամին ձեռք բերի մեր հանդեպ ուժերի շեշտակի գերազանցություն, հետևաբար նաև ունենա երաշխավորված հաղթանակի հեռանկար, ինչն այսօր չկա:

Ստորև արժե անդրադառնալ նաև միջազգային լսարանի համար նախատեսված ադրբեջանական քարոզչական թեզերին:

2011-ին՝ բանակցային գործընթացի ակտիվ շրջանում, պաշտոնական Բաքուն առնվազն երկու անգամ շրջանառեց, այսպես կոչված մանկասպանության թեզը: Բաքվում փորձեցին միջազգային հանրությանը Հայաստանը ներկայացնել որպես

«մանկասպան» պետություն, որի զինծառայողները դիպուկահար կրակով երեխաներ են սպանում: Տվյալ դեպքում սակայն առկա էր նաև քաղաքական նկատառումը: Բանն այն է, որ ծավալապատական նկրտումներով տարված ալիևյան վերնախավի համար բանակցային գործընթացի տրամաբանությունն անընդունելի էր, հետևաբար՝ հարկավոր էր մի ինչ-որ «ծանրակշիռ» պատճառ այն ձախողելու, ինչպես նաև պետական սահմանին իրավիճակը կտրուկ ապակայունացնելու համար:

Այս ամենից զատ՝ մանկասպանության թեզն անհրաժեշտ էր նաև Ադրբեջանում հայատյացության քարոզչությանը նոր լիցք հաղորդելու համար:

Թեզերից հաջորդը, որ ինտենսիվորեն զարգացնում է ադրբեջանական քարոզչամեքենան արտաքին հարթակներում, Արցախում ՀՀ քաղաքացիների զինծառայություն անցնելը շահարկելն է, մասնավորապես՝ այդ հանգամանքը Ադրբեջանի տարածքների ռազմակալման ապացույց ներկայացնելը: Ի պատասխան հարկավոր է հակազդել իրավական առումով գրագետ. համաձայն ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական դոկտրինի՝ Հայաստանի Հանրապետությունը Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորն է, և բնականաբար իր մասնակցությունն է բերում Արցախի պաշտպանությանը:

Թեզերից մյուսը՝ **«ադրբեջանական հողերի վրա հայերի մեկից ավելի անգամ ինքնորոշվելու և անկախ ղեկավարություն ստեղծելու ոչ լեգիտիմ լինելն է»**: Այսպես, պաշտոնական Բաքուն միջազգային դիվանագիտական շրջանառության մեջ հետևողականորեն ներմուծում է թեզն առ այն, թե հայերն արդեն մեկ անգամ ինքնորոշվել են, որ այդ ինքնորոշման արդյունքը ներկայիս Հա-

յաստանի Հանրապետությունն է, որը ստեղծվել է պատմական ադրբեջանական հողերի, իսկ ավելի կոնկրետ Արևմտյան Ադրբեջանի տարածքի վրա, և որ ներկայիս Հայաստանի Հանրապետությունն իր մայրաքաղաք Երևանով հանդերձ ադրբեջանցիների նվերն է մեզ՝ հայերիս: Իբրև հետևություն ադրբեջանական քարոզչամեքենան միջազգային լսարանին մատուցում է հետևյալը՝ համաձայն հայերի տրամաբանության աշխարհի տարբեր ծագերում՝ ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Վրաստանում և այլուր ապրող հայերը նույնպես պետք է ինքնորոշվեն: Ջավեշտականն այն է, որ Բաքուն սույն թեզը հիմնավորվում է հայկական Սփյուռքի գոյությամբ, ինչը ներկայացնում են իբրև հայերի բնիկ չլինելու, աշխարհով մեկ ցաք ու ցրիվ եղած անհայրենիք ժողովուրդ լինելու ապացույց: Ի դեպ, սույն թեզի հետևողական տարածումը կոչված է նաև մոռացության տալ հայկական սփյուռքի՝ ցեղասպանության հետևանք լինելը: Ուշագրավ է այն հոգեբանական մանիպուլյացիայի տրամաբանությունը, որին դիմում է ադրբեջանական քարոզչամեքենան՝ զարգացնելով սույն թեզը: Բանն այն է, որ հայկական հոծ համայնքներ առկա են նաև այն երկրներում, որոնք ունեն տարածքային ամբողջականության պահպանման խնդիր: Ադրբեջանական ղեկավարությունը փորձում է շահարկել այս հանգամանքը՝ հայերին ներկայացնելով իբրև պոտենցիալ անջատողականներ: Արցախահայությանը բնորոշելով իբրև «ագրեսիվ սեպարատիստներ» ադրբեջանցիները ձգտում են ընդհանուր հակահայկական մթնոլորտ ձևավորել աշխարհում, այդ կերպ բացասական կարծիք ստեղծել Արցախի անկախության իրողության հանդեպ և ընդհակառակը՝ ավելի ընկալելի և ընդունելի դարձնել այդ անկախությունը ոչնչացնելու սե-

փական ցանկությունը:

Այսպիսով՝ սույն քարոզչական թեզի նպատակն է մեզ ներկայացնել իբրև մի անհայրենիք հանրույթ՝ այդ կերպ կասկածի տակ դնելով տարածաշրջանում հայերի բնիկ լինելու իրողությունը: Այն ակնհայտորեն նախատեսված է արտերկրացիների համար, որոնք անտեղյակ են հայ-ադրբեջանական հակամարտության պատմությանը: Իսկ այդպիսիք աշխարհում մեծամասնություն են կազմում: Մեզանում տարածված է այն տեսակետը, թե աշխարհը անտարբեր է պատմական արդարության հանդեպ, ուստի մեր արդար դատը միջազգային հանրությանն ընկալելի դարձնելու համար խնդիրը պետք է մատուցել մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր համատեքստում: Բնավ չվիճարկելով այս տեսակետի իրավացիությունը, այնուամենայնիվ, չի կարելի լիովին անտեսել նաև հայ-թուրքական և մասնավորապես Ադրբեջանի հետ առկա հակամարտության պատմության լայն լուսաբանման անհրաժեշտությունն առավել ևս, որ Ադրբեջանը ձգտում է միջազգային հանրության մոտ «հիմնավորել իր պատմական իրավունքները» ոչ միայն Արցախի, այլև ՀՀ տարածքի հանդեպ: Ընդ որում՝ այս քարոզչական թեզը բազմիցս հնչեցրել է անձամբ նախագահ Ի. Ալիևն արտասահմանյան լրատվամիջոցներին տրվող իր հարցազրույցներում:

2011-ին՝ բանակցային գործընթացում ակտիվ զարգացումների շրջանում, պաշտոնական Բաքուն շրջանառեց՝ «Լեռնային Ղարաբաղի «ադրբեջանական» և «հայկական» համայնքների երկխոսության» քաղաքական քարոզչական թեզը: Վերջինիս քարոզչական նպատակը՝ միջազգային հանրության մոտ այնպիսի տպավորություն ստեղծելն է, թե իբր «Ղարաբաղի ադրբեջանական հա-

մայնքը» Արցախի տարածքի հանդեպ ունի նույն-քան հիմնավոր հավակնություններ, որքան «հայկական համայնքը», իսկ քաղաքականը՝ ազգերի ինքնորոշման իրավունքի համատեքստում լեգիտիմիզացնել Արցախի հանդեպ Ադրբեջանի հավակնությունները: Բնականաբար «համայնքների երկխոսություն» կայացնելու համար ադրբեջանական կողմին անհրաժեշտ էին ազգությամբ հայեր: Եվ այդպիսիք գտնվեցին ի դեմս երկու էթնիկական մարզի՝ Կրիստապոլի և Կրիստապոլի Գեորգի Վանյանի և ծագումով Գանձակից Արթուր Բալան անուն ազգանունով ոմն մեկի, ում ադրբեջանական քարոզչամաքեքնան ներկայացրեց որպես «ադրբեջանական հայ» (азербайджанский армянин): Այս եզրույթը բնորոշում է Բաքվի համար հայի ընդունելի տեսակը: Այս պարագայում խոսքը թրքասեր և մասամբ թրքացած՝ սեփական ազգային ակունքներից օտարված էթնիկական մարզի՝ մասին է, որին բառի բուն իմաստով հայ կոչել չի կարելի:

2.3. Ադրբեջանական քարոզչության նվազագույն ծրագիրը

Քարոզչական ճակատում հանդես բերած հետևողական ակտիվությանը զուգահեռ, ինչպես վերը նշեցինք, Ադրբեջանն իսկապես պատրաստվում է նոր հարձակողական պատերազմի: Եվ ահա այդ մեծ պատերազմի քարոզչական նախապատրաստության նպատակն է հայաստանյան հանրույթի հանդեպ ձեռք բերել բարոյահոգեբանական գերազանցություն: Միայն վերջի-

Քարոզչական ճակատում հանդես բերած հետևողական ակտիվությանը զուգահեռ, Ադրբեջանն իսկապես պատրաստվում է նոր հարձակողական պատերազմի: Եվ ահա այդ մեծ պատերազմի քարոզչական նախապատրաստության նպատակն է՝ հայաստանյան հանրույթի հանդեպ ձեռք բերել բարոյահոգեբանական գերազանցություն:

նիս առկայության դեպքում այդ մեծ պատերազմը կդառնա հավանական: Այս դեպքում նույնպես քարոզչական աշխատանքը տարվում է երեք ուղղություններով:

Մասնավորապես՝ հայկական և հատկապես հայաստանյան լսարանի պարագայում ադրբեջանական քարոզչամեքենան իր առջև դրել է

Հայկական և հատկապես հայաստանյան լսարանի պարագայում ադրբեջանական քարոզչամեքենան իր առջև դրել է հնարավոր պատերազմում ադրբեջանական բանակի հաղթանակը դյուրին դարձնելու և Հայաստանը ռազմական առումով թուլացնելու նպատակը: Բանեցվում է հետևյալ ռազմավարությունը՝ թուլացնել ՀՀ և Արցախի պաշտպանունակությունը, խաթարել վերջինիս բարոյահոգեբանական հիմքերը, մասնավորապես՝ ՀՀ բնակչության շրջանում վարկաբեկելով հնարավոր պատերազմի դեպքում Արցախը պաշտպանելու գաղափարը, այն որպես անհրականանալի մի բան ներկայացնելով՝ թույլ չտալ Արցախի պաշտպանության գաղափարի շուրջ հայության համախմբումը, այսպիսով՝ հոգեբանորեն պարտության մատնել հայաստանյան հանրությունին, հայությանն առհասարակ մյուս մինչև պատերազմ սկսելը:

հնարավոր լիցենզիաներում ադրբեջանական բանակի հաղթանակը դյուրին դարձնելու և Հայաստանը ռազմական առումով թուլացնելու նպատակը: Բանեցվում է հետևյալ ռազմավարությունը՝ թուլացնել ՀՀ և Արցախի լիցենզիաներում, խաթարել վերջինիս բարոյահոգեբանական հիմքերը, մասնավորապես՝ ՀՀ բնակչության շրջանում վարկաբեկելով հնարավոր լիցենզիաներում Արցախը լիցենզիաներում գաղափարը, այն որպես անհրականանալի մի բան ներկայացնելով թույլ չտալ Արցախի լիցենզիաներում գաղափարի շուրջ հայության համախմբումը, այսպիսով՝ հոգեբանորեն լիցենզիաներում մատնել հայաստանյան հանրությունին, հայությանն առհասարակ մինչև լիցենզիաներում սկսելը:

Ադրբեջանական քարոզչության նվազագույն ծրագրի այս նպատակի իրականացմանն է ծառայում «Հայաստանի հանդեմ ռազմական գերազանցություն ունենալու» մարտավարական – քարոզչական թեզը, որը մեզ է մատուցվում ռազ-

մական բյուջեյի հարաճուն լինելու համատեքստում: Ավելին՝ ուռճացված ռազմական բյուջեն Բաքվի կողմից ներկայացվում է որպես մեր հանդեպ ռազմական գերազանցության հիմնական ապացույց: Բնականաբար՝ ռազմական կարիքներին հատկացվող մեծ գումարը դեռ չի նշանակում մեր հանդեպ ռազմական գերազանցություն: Պետք է հաշվի առնել սակայն, որ սույն թեզի թիրախը խնդրին անտեղյակ մեր հայրենակիցներն են:

Ջուզահեռաբար ադրբեջանական քարոզչամեքենան հետևողականորեն փորձում է հայաստանյան հանրության և հայոց բանակի միջև անջրպետ առաջացնել, հակաբանակային դիրքորոշումներ տարածել մեզանում, բարդություններ ստեղծել զորակոչի կազմակերպման գործում: Հայաստանահայության մոտ Հայոց բանակի հանդեպ անվստահություն սերմանելու նպատակով ադրբեջանական քարոզչությունը օգտագործում է մեր բանակում տեղ գտած ամենաչնչին միջադեպն անգամ: Հայոց բանակը վարկաբեկելու ադրբեջանական հոգեբանական դիվերսիան առաջին հերթին ուղղված է ժամկետային զինծառայողների ծնողներին, զորակոչային տարիքի երիտասարդությանը և վերջիններիս ծնողներին: Թշնամու հաշվարկը կառուցված է այն իրողության վրա, որ բնակչության այս հատվածին հետաքրքրում է բանակի մասին ամեն ինչ: Միանգամայն բնական է, որ յուրաքանչյուր ծնող, ով իր զավակին բանակ է ճանապարհում, անհանգստանում է նրա համար: Այդ անհանգստությունը լիովին փարատելը շատ դժվար է, քանզի «աչքից հեռու» լինելը մշտապես ակտիվ է պահում սեփական զավակի ապահովության հետ կապված տագնապը: Ասվածը հատկապես ակնհայտ է զորակոչին հաջորդող առաջին ամիսներին: Միանգամայն օբյեկտիվորեն մեր

բնակչության այս հատվածը բանակի մասին ցանկացած բացասական տեղեկություն շատ ցավոտ է ընդունում: Ադրբեջանական քարոզչամեքենան ձգտում է սրել ահա այս, միանգամայն բնական ծնողական անհանգստությունը:

Սեփական լսարանի պարագայում ակնառու է պաշտոնական Բաքվի հետևյալ նպատակը՝ *հոգեբանորեն նախապատրաստել բնակչությանը նոր տրաքերազմին:*

Սեփական լսարանի պարագայում ակնառու է պաշտոնական Բաքվի հետևյալ նպատակը՝ հոգեբանորեն նախապատրաստել բնակչությանը նոր պատերազմին:

Որպես այդ նպատակին հասնելու ռազմավարություն՝ ալիևյան վերնախավը ձգտում է սեփական հանրության ընկալումներում վառ պահել հայի՝ որպես ատելի թշնամու, կերպարն ու ամեն վայրկյան պատերազմի վերսկսման հնարավոր լինելու զգացողությունը:

Որպես այդ նպատակին հասնելու ռազմավարություն *ալիևյան վերնախավը ձգտում է սեփական հանրության ընկալումներում վառ պահել հայի՝ որպես ատելի թշնամու, կերպարն ու ամեն վայրկյան տրաքերազմի վերսկսման հնարավոր լինելու զգացողությունը:*

Այդ նպատակով զարգացվում է ատելի, բայց թույլ հակառակորդի դեմ արագ ու դյուրին հաղթանակ տանելու մարտավարական թեզը:

Տվյալ դեպքում իսկապես գործ ունենք հանրային գիտակցությունը մշակելու հետ: Մեր համոզմամբ

Ադրբեջանում հայատյացությունը դիտարկվում է իբրև հավանական պատերազմում հաղթելու *հիմնական հոգեբանական ռեսուրս:* Ընդ որում՝ ադրբեջանական կառավարող վերնախավին հայատյացությունն անհրաժեշտ է լինելու այդ հնարավոր պատերազմի ողջ ընթացքում: Բանն այն է, որ ռազմական հոգեբանները վաղուց նկատել են, որ հարձակողական պատերազմին անգամ բարոյահոգեբանորեն լավ նախապատրաստված հասարակության հայրենասիրական դիրքորոշումները միտված են աստիճանաբար թուլանալ

պատերազմի ձգձգվելուն զուգահեռ: Պատերազմի հետևանքով անխուսափելի սոցիալտնտեսական զրկանքների, մարդկային կորուստների թվի աճի ազդեցության տակ հարձակվող երկրի հասարակության հայրենասիրական դիրքորոշումները հետզհետե փոխարինվում են հակապատերազմական դիրքորոշումներով: Այս հանգամանքով է նաև պայմանավորված այն, որ ներկայումս ռազմական հակամարտության մեջ ներքաշված ցանկացած երկիր ձգտում է հաղթանակը ձեռք բերել օր առաջ՝ քանի դեռ սեփական հանրությունը չի համակվել հակապատերազմական դիրքորոշումներով: Նոր հարձակողական պատերազմի վերսկսումից որոշ ժամանակ անց մարդկային ահռելի կորուստները, կենսամակարդակի անկումը կոտրելու են աղրբեջանական հանրության մարտական ոգին: Կարծում ենք, ալիևյան վերնախավը հստակորեն գիտակցում է այդ հեռանկարը, և որպես վերջինս կանխելու հիմնական միջոց դիտարկում հայատյացությունը:

Վերը նշվածից զատ, հայատյացության քարոզչությունն ու ռազմամուլ հռետորաբանությունը նպատակ ունեն նաև Իլիհամ Ալիևի շուրջ ձևավորել հայրենասեր առաջնորդի կերպար, ինչը թույլ կտա քողարկել ալիևյան կլանի կողմից երկրի նավթային ռեսուրսները մոնոպոլիզացնելու հանգամանքը:

Միջազգային լսարանի պարագայում *աղրբեջանական ֆարոզամենենայի առջև դրված նոյաբանը հնարավոր ղախտերազմի լեգիտիմիզացիան է, միջազգային հանրության լայն շրջանների համար Արցախի դեմ նոր ագրեսիան ընկալելի և ընդունելի դարձնելը:*

Միջազգային լսարանի պարագայում աղրբեջանական քարոզչամեթոդային առջև դրված նպատակը հնարավոր պատերազմի լեգիտիմիզացիան է, միջազգային հանրության լայն շրջանների համար Արցախի դեմ նոր ագրեսիան ընկալելի և ընդունելի դարձնելը:

Պաշտոնական Բաքուն այդ նպատակին հասնելու համար բանեցնում է հետևյալ ռազմավարությունը՝ միջազգային տարբեր հարթակներում հետևողականորեն փորձում է վարկաբեկել արցախահայության ազատագրական պայքարը՝ այն ներկայացնելով որպես «ագրեսիվ անջատողականություն», իսկ Ադրբեջանին՝ որպես սեփական տարածքները «հայկական օկուպացիայից ազատագրող» կողմ:

Պաշտոնական Բաքուն այդ նպատակին հասնելու համար բանեցնում է հետևյալ ռազմավարությունը՝ միջազգային *սարբեր հարթակներում հետևողականորեն փորձում է վարկաբեկել արցախահայության ազատագրական պայքարը՝ այն ներկայացնելով որպես «ագրեսիվ անջատողականություն», իսկ Ադրբեջանին՝ որպես սեփական սարածինները «հայկական օկուպացիայից ազատագրող» կողմ:*

Միջազգային հարթակներում պաշտոնական Բաքուն զարգաց-

նում է «*հայկական ագրեսիայի զոհ լինելու*» մարտավարական թեզը՝ արցախյան պետականությունը որակելով որպես «անջատողական ռեժիմ», իսկ արցախահայությանը՝ «ագրեսիվ անջատողականներ»:

ԳԼՈՒԽ 3

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

3.1. Ինչպե՞ս պետք է հակազդել ադրբեջանական քարոզչությանը

Առավել քան ակնհայտ է, որ թշնամու հանդեպ մեր բարոյահոգեբանական գերազանցությունն այն հիմնական գործոններից մեկն է, որը կանխում է մեծ պատերազմի վերսկսումը: Հետևաբար մեր և

թշնամու միջև բարոյահոգեբանական հաշվեկշռի խախտումը՝ մասնավորապես ներքաղաքական անկայունությունը, հանրության պառակտումը՝ նրա տարբեր շերտերի միջև անհամդուրժողականության խորացման տեսքով, ադրբեջանական վտանգի հանդեպ մեր հանրության զգոնության բթացումը, նոր պատերազմին հոգեբանորեն անպատրաստ մնալը կշլատի հայության պաշտպանական ներուժը, կթուլացնի երկրի պաշտպանունակությունը: Ահա այդ դեպքում մենք կդառնանք բարոյահոգեբանորեն խոցելի, կվերածվենք թույլ և մատչելի թիրախի թշնամու համար, հետևաբար նաև էապես կմեծանա ռազմական գործողությունների վերսկսման հավանականությունը: Ուրեմն մեր երկրի հոգեբանական անվտանգության ապահովման արդյունքը պետք է լինի թշնամու հանդեպ բարոյահոգեբանական գերազանցության պահպանումը: Իսկ վերջինս ենթադրում է երկրում բարոյահոգեբանական կայունության և հանրային համախմբվածության ապահովում, հանրության

Թշնամու հանդեպ մեր բարոյա-հոգեբանական գերազանցությունն այն հիմնական գործոններից մեկն է, որը կանխում է մեծ պատերազմի վերսկսումը:

շրջանում ամեն վայրկյան թշնամական ագրեսիային դիմակայելու պատրաստականության և նրան սեփական ուժերով հաղթելու վստահության ձևավորում:

Ասվածի համատեքստում առաջին հերթին հարկավոր է արդյունավետորեն հակազդել թշնամու քարոզչությանը: Ըստ այդմ՝ հարկավոր է հստակեցնել այդ հակազդեցության ուղղությունները: Նպատակահարմար է առանձնացնել երկու այդպիսի ուղղություն:

Առաջին՝ ի հայտ բերել և չեզոքացնել հակառակորդի տեղեկատվական-հոգեբանական դիվերսիաները:

Երկրորդ՝ կանխարգելիչ ուղղություն. բացահայտել և վերացնել ՀՀ և Արցախի հանրության հոգեբանորեն խոցելի այն կողմերը, որոնք կարող է ի շահ իրեն օգտագործել ադրբեջանական քարոզչամեքենան:

Ադրբեջանի հետ հայոց երկու պետությունների հակամարտության համատեքստում հայկական կողմի ծավալած հակաքարոզչության նպատակը պետք է լինի թույլ չտալ, որպեսզի մեր հայրենակիցների վարքն ուղղորդվի, կառավարվի հակառակորդի կողմից, որպեսզի հայաստանյան հանրությունը հանդես բերի Հայաստանի ազգային – պետական շահերին համահունչ գործունեություն՝ միտված հայոց պետականության ամրապնդմանը, այլ ոչ թե թուլացմանը: Սեփական լսարանին ուղղված հայկական կողմի հակաքարոզչությունը չի ենթադրում բռնություն Հայաստանի քաղաքացու ազատ կամարտահայտության հանդեպ: Տվյալ դեպքում խոսքը հայրենիքն իբրև բացարձակ արժեք ընդունող ազգային-քաղաքացիական հասարակություն ձևավորելու մասին է:

Ի դեպ. թյուր տեսակետ կա, թե սեփական լսա-

րանին ուղղված քարոզչությունը բնորոշ է միայն ավտորիտար պետություններին: Մինչդեռ իրականում քարոզչությունը ժամանակակից հասարակությունների կյանքի անբաժան մասն է: Այս կամ այն դիրքորոշումը վերացնելու և նորը ձևավորելու կամ էլ եղածը փոփոխելու նպատակով քարոզչություն տարվում է ամենուր, նաև՝ ժողովրդավարական արևմուտքում, ազատականության խորհրդանիշ համարվող երկրներում:

Թյուր տեսակետ կա, թե սեփական լսարանին ուղղված քարոզչությունը բնորոշ է միայն ավտորիտար պետություններին: Մինչդեռ իրականում քարոզչությունը ժամանակակից հասարակությունների կյանքի անբաժան մասն է: Այս կամ այն դիրքորոշումը վերացնելու և նորը ձևավորելու կամ էլ եղածը փոփոխելու նպատակով քարոզչություն տարվում է ամենուր, նաև՝ ժողովրդավարական արևմուտքում, ազատականության խորհրդանիշ համարվող երկրներում:

3.1.1 Ադրբեջանական քարոզչության խոցելի կողմերն ու առավելությունները

Արդյունավե՞տ է արդյոք ադրբեջանական քարոզչության հայաստանյան ուղղության աշխատանքը. ձե՞ռք է բերել արդյոք ադրբեջանական քարոզչամեքենան իր առջև դրված նպատակը: Այս հարցերին պատասխանելու համար հարկավոր է պարզել, թե որո՞նք են այդ քարոզչության առավելություններն ու խոցելի կողմերը:

Բնականաբար չի կարելի ասել, թե հայաստանյան ուղղությամբ Բաքվի քարոզչամեքենայի ծավալած քարոզչությունը առհասարակ գերծ է որևէ առավելությունից: Տվյալ դեպքում առավելություն ասելով մենք նկատի ունենք ո՛չ միայն և ո՛չ այնքան մեր դեմ իրականացվող քարոզչության ռազմավարության, մարտավարական թեզերի արդյունավետությունը, որքան հայաստանյան հանրության

քարոյահոգեբանորեն խոցելի այն կողմերը, որոնք այս դեպքում ինքնաբերաբար վերածվում են հակառակորդի համար առավելության, քանզի դրանք Բաքվի քարոզչամեքենան փորձում է օգտագործել ի շահ իրեն: Ըստ այդմ, իբրև այդպիսին հարկ է նշել՝

1. *Հայաստանյան հանրության ժողովուրդը հրադադարով, խաղաղության երեւուն լինելով ղայմանավորված ղոտենցիալ սազնաղներ:* Բանն այն է, որ արտաքին քարոզչական ներգործության միջոցով այդ պոտենցիալ տազնապները սկզբունքորեն հնարավոր է արիեստականորեն է՛լ ավելի սրել. այն, ինչ տարիներ շարունակ փորձում է անել թշնամին:

2. *Երկրում առկա սոցիալ-սնեսական խնդիրներով ղայմանավորված դժգոհություններ, որոնցով համակված բնակչության մի հասված անսարբեր է դարձել երկրի անվսանգության խնդիրների հանդեղ:* Բնակչության այդ հատվածը մատչելի թիրախ է հակառակորդի քարոզչության համար: Հենց բնակչության այս հատվածի դժգոհությունն է հակառակորդը փորձում ուղղորդել Արցախի կերպարի վրա:

3. *Հայաստանի այլ սարածաժողովների հայության և արցախահայության միջև անհանդուրժողականության դիրհորոշումներ:* Վերջիններս հետևանք են Հայաստանի տնտեսական կյանքում արցախահայերի ունեցած դերակատարության, հանրալին կյանքում նրանց ունեցած «արտոնյալ» կարգավիճակի վերաբերյալ չափազանցված, երբեմն թյուր կենցաղային պատկերացումների: Ո՛ր թեև այդ դիրքորոշումներն այժմ համատարած և սուր արտահայտված չեն, բայց, ասել, թե այս խնդիրն այլևս արդիական չէ նույնպես չի կարելի: Ավելին. «հայաստանցի – դարաբաղցի» անհանդուրժողականությամբ պայմանավորված ներթնհկական

պառակտման պոտենցիալ վտանգը պահպանված է: Պառակտման ահա այդ պոտենցիալն էլ հենց ջանում է ակտուալիզացնել հակառակորդը՝ հետևողականորեն փորձելով հայության այս երկու հատվածների ներկայացուցիչների մի մասի մոտ առկա, ըստ էության, իրադրական բնույթ կրող անհանդուրժողականությունը վերածել զանգվածային կայուն ատելության: Այս հիրավի հոգեբանական դիվերսիայի հեռահար նպատակը Հայաստանի հանրության լայն շրջաններում հակաարցախյան դիրքորոշումների արմատավորումն է, ինչը կհեշտացնի Արցախի հանձնումը Ադրբեջանին, քանզի այդ պարագայում թշնամուն կատարվելիք միակողմանի զիջումները երկրում այլևս համատարած ըմբոստություն, դժգոհություն չեն առաջացնի:

4. Թուրքի (նաև՝ անդրկովկասցի թուրքերի) հանդեպ համարժեք, իրատեսական ընկալումների աղճատումը մեր հանրության մի մասի մոտ: Այդ առումով հատկապես վտանգավոր են հանդուրժողականության տարաբնույթ դրամաշնորհային ծրագրերը, որոնք ֆինանսավորվում են մի շարք արտասահմանյան ֆոնդերի կողմից: Բանն այն է, որ այդ ֆոնդերի զգալի մասն իրականում իրենց երկրների աշխարհաքաղաքական շահերն իրացնող այլընտրանքային կառույցներ են, որոնք իրենց այդ բուն առաքելությունը քողարկում են ժողովրդավարական արժեքների տարածման անվան տակ: Եվ բնավ պատահական չէ, որ այդ դրամաշնորհային

Հատկապես վտանգավոր են հանդուրժողականության տարաբնույթ դրամաշնորհային ծրագրերը, որոնք ֆինանսավորվում են մի շարք արտասահմանյան ֆոնդերի կողմից: Բանն այն է, որ այդ ֆոնդերի զգալի մասն իրականում իրենց երկրների աշխարհաքաղաքական շահերն իրացնող այլընտրանքային կառույցներ են, որոնք իրենց այդ բուն առաքելությունը քողարկում են ժողովրդավարական արժեքների տարածման անվան տակ: Եվ բնավ պատահական չէ, որ այդ դրամաշնորհային հանդուրժողականությունն իր մեջ պարունակում է միակողմանի զիջողականության գաղափար, ինչը խիստ վտանգավոր է մեզ համար:

հանդուրժողականությունն իր մեջ պարունակում է միակողմանի զիջողականության գաղափար, ինչը խիստ վտանգավոր է մեզ համար: Ադրբեջանական վայրագություններին, հախուռն ագրեսիվությամբ հազեցած կույր ռևանշիստական կոչերին ի պատասխան մեզանում հանդուրժողականություն քարոզելը նշանակում է ժխտել իրականությունը և բթացնել հայ հանրության զգոնությունը: Որոշ դեպքերում հանդուրժողականության անվան տակ այդ ծրագրերում անուղղակիորեն քարոզվում է Արցախը հանձնելու գաղափարը:

5. *Հայաստանյան հասարակության զգալի հասկածի մոտ անվտանգության մշակույթի բացակայությունը:* Անվտանգության մշակույթ ասվածը, ըստ էության, կենսակերպ է՝ հիմնված երկրի անվտանգությանն ակամա չվնասելու դիրքորոշման վրա: Հենց անվտանգության մշակույթի բացակայությամբ պետք է բացատրել բնակչության որոշ մասի կողմից մեր երկրի պաշտպանության, տեղեկատվական անվտանգության ոլորտներին առնչվող խնդիրների կարևոր լինելը չըմբռնելը, անտարբերությունը դրանց հանդեպ: Անվտանգության մշակույթի բացակայությունն է պատճառը, որ մեր հայրենակիցներից ոմանք ադրբեջանական աղբյուրները համարում են այլընտրանքային լրատվամիջոցներ, կամ երբ որոշ լրատվամիջոցներ նույնությամբ վերարտադրում են ադրբեջանական կայքերում տեղադրված տեղեկությունները:

6. *Սեփական ուժերի հանդեպ թերահավաստությունը:* Փոքր ազգի ներկայացուցիչ լինելու կոչումն արժանապատվորեն կրելու համար համարձակություն է հարկավոր: Բանն այն է, որ ռեսուրսների, հնարավորությունների սահմանափակ լինելու, թշնամիների առկայությունը գիտակցելու հանգամանքը մեր հայրենակիցներից ոմանց մոտ անընդ-

հատ տազնապների տեղիք է տալիս՝ առաջ բերելով անօգնականության, թույլ և անպաշտպան լինելու զգացում: Ահա այս մարդիկ առավել հակված են տրվել հակառակորդի քարոզչությանը: Այս մարդկանց ընկալունակությունն ադրբեջանական քարոզչական թեզերի հանդեպ պայմանավորված է իրենց անօգնականության զգացումը, տազնապները փարատելու ականա ձգտումով²²:

Իսկ որո՞նք են այն գործոնները, որոնք օբյեկտիվորեն բարդացնում են ադրբեջանական քարոզչական թեզերի տարածումը մեզանում: Իբրև այդպիսին հարկ է առանձնացնել հետևյալները.

1. *Հայաստանյան հանրության շրջանում Արցախը հանձնելու դիրքորոշումներ առաջացնելն ինքնին բարդ նդասակ է, քանզի հայության ընկալումներում Արցախը հայրենի է:* Իսկ հակաարցախյան կենցաղային հակասություններն ուռճացնելով վերածել Արցախը հանձնելու դիրքորոշման հնարավոր է միայն առանձին անհատների մոտ, նրանց՝ ովքեր օտարվել են սեփական ազգային հանրությանը²³:

²² Այս դեպքում հատկապես կարևոր է հայոց պետության իրական ռազմական ներուժի ցուցադրությունը, պաշտպանված լինելու ապացույցները կայուն պարբերականությամբ ի ցույց դնելը: Այս մարդիկ մեր հայրենակիցներն են, և, ինչպես ցույց է տալիս փորձը, եթե փաստարկված ապացուցում են, որ հայոց պետությունն ունի բավարար ռազմական ներուժ արցախյան հաղթանակի ձեռքբերումները պաշտպանելու, հակառակորդին խաղաղության հարկադրելու համար, նրանց մեծ մասը ժխտողաբար է տրամադրվում ադրբեջանական քարոզչական թեզերի հանդեպ, ըմբռնում դրանց կործանարար լինելը հայոց համար: Այլ կեր ասած՝ գրագետ հակաքարոզչության դեպքում մեր թերահավատ հայրենակիցների մեծ մասին կարելի է վերածել «ինքնավստահ հայրենասերների»: Այդ դեպքում նրանցից քչերը կվերածվեն ապազգային էթնիկական մարզինալների: Էթնիկական մարզինալության խնդրին մենք կանդորառնանք ստորև:

²³ Տվյալ դեպքում խոսքը, այսպես կոչված, էթնիկական մարզինալների մասին է: Ժամանակակից էթնոհոգեբանության

Համատարած արդյունքի մասին այստեղ խոսք չի-
նել չի կարող:

2. *Պատերազմի սղառնալիքների անընդհատու-
թյունը, որի հանդեպ մեզանում կարծես թե ձևավոր-
վել է դիմադրողականություն:* Պատերազմի անընդ-
մեջ սպառնալիքները պարզապես արժեզրկվում
են, երբ այդպիսիք կատարելուց հետո հակառա-
կորդը խոսքից գործի այդպես էլ չի անցնում՝ ակա-
նա մատնելով իր անպատրաստ լինելը և հրապա-
րակային հայտարարությունների սին լինելը: Ի
դեպ վերը նշվածը վստահաբար կարելի է որակել

ասպարեզում այդպես են անվանում այն անձանց, որոնց
էթնիկական ինքնագիտակցությունը թուլացել է, ովքեր օտար-
վել են սեփական էթնիկական հանրույթից, ժխտում են այն և
ձգտում նույնանալ այլ էթնիկական հանրույթի հետ, դառնալ
այդ նոր հանրույթի անդամը, նրա մասը: Նրանք սեփական
մշակույթը համարում են «հետամնաց», իսկ սեփական
էթնիկական խումբը «ցածրակարգ» և ամեն կերպ փորձում
են խզել կապերը նրա հետ: Էթնիկական մարզինալները բառի
բուն իմաստով չեն սիրում սեփական հանրույթը, անտարբեր են
նրա շահերի հանդեպ: Նրանք ոչ միայն սեփական հայրենիքի
հայրենասերները չեն, այլև սեփական հանրույթի հանդեպ
համակված են ագրեսիայով: Այս մարդիկ օտարամուլներ են:
Ընդ որում՝ նրանց այդ օտարամուլությունը պայմանավորված
է անձնային խորը թերարժեքությամբ, մասնավորապես՝ փոքր
ազգի ներկայացուցիչ լինելու հանգամանքի գիտակցմամբ
պայմանավորված անօգնականության, անապահովության
զգացմամբ:

Էթնիկական մարզինալների ողբերգությունն այն է, որ
այն հանրույթը, որին անդամակցելը նրանք համարում են
պատվաբեր, չի ընդունում նրանց, հեռացնում է իրենից: Իբրև
հետևանք նրանց այդպես էլ չի հաջողվում ընդունվել այդ խմբի
կողմից, դառնալ նրա լիիրավ անդամ: Հենց այդ պատճառով էլ
նրանք գտնվում են երկու տարբեր էթնիկական աշխարհների,
մշակույթների միջև, լուսանցքային՝ մարզինալ վիճակում՝
լիարժեքորեն չպատկանելով դրանցից և ո՛չ մեկին, և ո՛չ մեկի
կողմից չընկալվելով յուրային, լինելով օտար երկուսի համար:

Հեռացած լինելով սեփական ազգային արմատներից,
խորթացած՝ համազգային շահերից՝ էթնիկական մարզինալ-
ները վերածվում են մատչելի թիրախի ադրբեջանական
քարոզչամեթոդային համար:

նաև որպես պաշտոնական Բաքվի ներքին՝ սեփական լսարանին ուղղված քարոզչության խոցելի կողմ:

3. Ադրբեջանում *աճելության ֆարոզության, ինչդեռ նաև թեմանանֆի դրսևորումների գնալով ավելի ու ավելի սանձարձակ լինելը, որի ֆոնին Արցախը հանձնելու գաղափարը մեզանում ընկալվում է անընդունելի*: Անդրկովկասցի թուրքերի ատելությունն այնքան ակնհայտ է, իսկ այդ ատելությունն ավելի ամրապնդելու նպատակով տարվող ներքին քարոզչությունն այնքան բացահայտ, որ մեր հանրության մեծամասնության մոտ առաջանում է բնական պաշտպանական ռեակցիա՝ ի դեմս տարածք զիջելու գաղափարի անընդունելիության:

Այսպիսով, կարելի է վստահաբար ասել. ադրբեջանական քարոզչությանն առ այսօր չի հաջողվել ի կատար ածել իր առջև դրված նպատակը. ասել, թե հայաստանյան հասարակությունը համակված է հակաարցախյան դիրքորոշումներով և պատրաստ է հանձնել Արցախը, անշուշտ չի կարելի: Ընդհակառակը՝ վերջին շրջանում մեզանում նկատելի է «ոչ մի թիզ հող» հոգեբանորեն առողջ և կենսահաստատ հանրային դիրքորոշման զանգվածային դառնալու հարաճուն միտումը, ինչի արդյունքում այսօր մեզանում հող հանձնելու գաղափարը ժխտելի է և ընկալվում է որպես ծայրահեղություն:

Սակայն ադրբեջանական քարոզչությանը հաջողվել է ներդնել իր թեզերը մեր հանրության շրջանում՝ հասնելով այն բանին, որ դրանք մեզանում ինքնաբերաբար շրջանառվեն: Վերջինս տեղի է ունենում շնորհիվ այն բանի, որ որոշ լրատվամիջոցներ, հասարակական և քաղաքական գործիչներ մերթ ընդ մերթ, կամա թե ակամա վերարտադրում են այդ թեզերը: Վերը նշվածը կարելի է համարել

ադրբեջանական քարոզչության մարտավարական, ընթացիկ հաջողություն: Բանն այն է, որ եթե ադրբեջանական քարոզչության թեզերը Հայաստանում վերարտադրում են ազգությամբ հայերը, ապա խնդրին անտեղյակ մեր հայրենակիցների կողմից դրանք դառնում են առավել ընկալելի:

Հետևաբար՝ ադրբեջանական քարոզչությունից բխող վտանգը թերագնահատել չի կարելի: Վերջինիս հակազդելն անհրաժեշտություն է, առավել ևս հաշվի առնելով այն, որ հայաստանյան հանրության դեմ ուղղված Ադրբեջանի պետական քարոզչությունն առաջիկայում նույնպես կրելու է հետևողական և ինտենսիվ բնույթ:

3.2. Ադրբեջանական հանրության հոգեբանորեն խոցելի կողմերը

Մեր դեմ քարոզչություն ծավալող հակառակորդն ինքը գերծ չէ բարոյահոգեբանորեն խոցելի կողմերից: Վերջիններիս մենք ստորև կանդրադառնանք, սակայն մինչ այդ հարկ է շեշտել հետևյալը: Թեև Ադրբեջանում սոցիալ-տնտեսական զարգացման առումով պայմաններն առաջին հայացքից թվում են ավելի բարենպաստ, քանզի այդ երկիրը շրջափակված չէ, առկա է նավթազագային եկամուտների գործոնը, սակայն կոռուպցիան և կլանային համակարգը գրեթե զրոյացնում է Ադրբեջանի այդ բնական առավելությունը: Ի վերջո, Ադրբեջանում նույնպես կա աղքատություն, սոցիալական դժգոհություններ, արտագաղթ: Հետևաբար՝ բնավ չթերագնահատելով թշնամուն, փաստենք՝ ներկայիս Ադրբեջանը հաղթահարելի հակառակորդ է: Ավելին, նոր արկածախնդրության դիմելու դեպքում հայոց զինուժը չի բավարարվելու լոկ Արցախի ներկայիս տարածքի պաշտպանությամբ,

այլ տեղափոխելու է ռազմական գործողությունները թշնամու տարածք: Հենց այդ սցենարն է ընկած Արցախի Պաշտպանության բանակի վերջին տարիների զորավարությունների հիմքում:

Սակայն վերադառնալով թշնամու բարոյահոգեբանորեն խոցելի կողմերին՝ տեղին է կատարել հետևյալ հարցադրումը. արդյո՞ք ադրբեջանական հասարակությունը բարոյահոգեբանորեն պատրաստ է նոր հարձակողական պատերազմի, գիտակցում է արդյոք ադրբեջանական հասարակությունը ալիևյան ռազմամուլ հռետորաբանության իրական գինը, արդյոք հաշիվ տալի՞ս է իրեն Ադրբեջանի համար նոր պատերազմի ողբերգական հետևանքների մասին: Մի բան ակնհայտ է. պաշտոնական Բաքուն անում է ամեն ինչ, որպեսզի այդ գիտակցությունը վրա չհասնի:

Եվ այսպես. որո՞նք են մեր թշնամու բարոյահոգեբանորեն խոցելի կողմերը:

Վերը մենք անդրադարձանք ռազմական գերազանցության մասին ադրբեջանական քարոզչական թեզին՝ նախատեսված և՛ հայկական, և՛ սեփական լսարանի համար: Ինչպես արդեն նշել ենք, Բաքվում այս կերպ հույս ունեն ահաբեկել Հայաստանի հասարակությանը, ձևավորել հնարավոր պատերազմում մեր երկրի հաղթելու անհնարինության, մեր ուժերի չնչին լինելու մասին պատկերացումներ: Հենց այդ նպատակին են ծառայում նախագահ Ալիևի անթիվ հայտարարություններն առ այն, թե Ադրբեջանի ռազմական բյուջեն Հայաստանի պետական բյուջեից ավել է, թե իբր ժամանակն աշխատում է Ադրբեջանի օգտին: Ակնհայտ է սակայն, որ այս կերպ նախագահ Ալիևը ցանկանում է նաև վստահություն հաղորդել սեփական հանրությանը: Սակայն «Հայաստանի հանդեպ ռազմական գերազանցության» մասին քարոզչա-

կան թեզը պաշտոնական Բաքվի համար պոտենցիալ վտանգ է պարունակում: Մասնավորապես՝ այս համատեքստում հարկավոր է անդրադառնալ ռազմական քարոզչության ոլորտում ուսումնասիրված մի օրինաչափության: Մանրամասները:

Բանն այն է, որ, բացարձակացնելով ռազմական ծախսերն ավելացնելու դերը հաղթանակի ձեռքբերման գործում, ադրբեջանական ղեկավարությունը լռում է հարձակողական պատերազմի բազում օբյեկտիվ դժվարությունների, արհավիրքների մասին, որոնք արդեն հնարավոր պատերազմում կարող են ադրբեջանական հասարակության համար լինել անսպասելի և դառնալ անհաղթահարելի: Բանն այն է, որ հարձակողական պատերազմի զրկանքների, արհավիրքների մասին տեղյակ չլինելը, դրանց հոգեբանորեն պատրաստ չլինելը հեռացնում են ադրբեջանական հասարակությունը իրականությունից,

Բացարձակացնելով ռազմական ծախսերն ավելացնելու դերը հաղթանակի ձեռքբերման գործում, ադրբեջանական ղեկավարությունը լռում է հարձակողական պատերազմի բազում օբյեկտիվ դժվարությունների, արհավիրքների մասին, որոնք արդեն հնարավոր պատերազմում կարող են ադրբեջանական հասարակության համար լինել անսպասելի և դառնալ անհաղթահարելի:

և բարոյալքման վտանգ ստեղծում արդեն դրանց հետ բախվելիս: Մեր կարծիքով, այս պարագայում միանգամայն հավանական է «ցանկալի ասեկոսների» ֆենոմենի դրսևորումը:

«Ցանկալի ասեկոսե» հասկացողությունն, ինչպես արդեն նշել ենք, գիտական շրջանառություն է ներմուծել հայ հոգեբան Հակոբ Նազարեթյանը: Այդպիսին նա անվանում է այն ասեկոսները, որոնք արտահայտում են հասարակության ցանկությունները, նպատակները, հույսերը: Ըստ Հ. Նազարեթյանի՝ «ցանկալի ասեկոսները» կարող են ցանկալի իրականության պատրանք ստեղծել հասարակության մեջ և հուսահատության, բարոյալքման

հանգեցնել, երբ այդ հասարակական նպատակները չիրականանան, հույսերը չարդարացվեն²⁴: Թեև ռազմական գերազանցության շնորհիվ հաղթանակ տանելու դիրքորոշումներն Ադրբեջանում տարածվում են ոչ թե ասեկոսեների, այլ պետական կազմակերպված քարոզչության միջոցով, այնուամենայնիվ վերը նշված օրինաչափության հանդես գալու հավանականությունը դրանից չի նվազում: Այս ֆենոմենի դրսևորման վառ օրինակ է Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին՝ 1939-1940 թթ., ֆրանսիական բանակի անձնակազմի բարոյալքումը: Բանն այն է, որ մոտ մեկ տասնամյակ, ընդհուպ մինչև պատերազմի սկիզբը, Ֆրանսիայում բացարձակացվում էր «Մաժենոյի գծի» նշանակությունը, այն ներկայացվում էր և ընկալվում իբրև անճեղքելի և գերմանական վտանգին հանդիման՝ հուսալի, գրեթե անհաղթահարելի պատվար: Ինչպես հայտնի է, «Մաժենոյի գիծը» չկանխեց Ֆրանսիայի օկուպացիան, իսկ վերջինիս շրջանցումը գերմանացիների կողմից հանգեցրեց ֆրանսիական բանակի, հասարակության դիմադրական ոգու անկմանը: Այդ կապակցությամբ իր հուշերում ՌԲ Չերչիլը նշում է հետևյալը. «...Ինձ պակաս չզարմացրեց նաև ֆրանսիական դիմադրության արագ կրախը՝ ռազմաճակատի ճեղքումից անմիջապես հետո: Գերմանական ողջ շարժը իրականացվում էր գլխավոր ճանապարհներով, և ոչ մի տեղ նրանք չկանգնեցվեցին»²⁵: Ռազմական մեծ ծախսերի շնորհիվ արագ և հեշտ հաղթանակի հեռանկարը, որը հեռու է իրականությունից, միանգամայն հավանական է դարձնում «ցանկալի ասե-

²⁴ Назаретян А. П., Агрессивная толпа, массовая паника, слухи, Москва, 2003, стр. 95.

²⁵ Черчилль У., Вторая мировая война, т 2, Москва, 1998, стр.

կոսենների» սցենարն ինչպես ադրբեջանական բանակում, այնպես էլ հասարակության շրջանում:

Իսկ արդյո՞ք Հայաստանի հանդեպ ռազմական գերազանցություն ունենալու մասին պաշտոնական Բաքվի հավաստիացումները տվել են ցանկալի արդյունքը. ձևավորվե՞լ է արդյոք Ադրբեջանում Հայաստանին հաղթելու համոզվածություն: Մեղմ ասած՝ այս առումով Բաքվի քարոզչամեքենայի հաջողությունները համեստ են:

2011-ի հունիսի 26-ին Բաքվում անցկացվեց զորահանդես: Առհասարակ զորահանդեսը քաղաքական ենթատեքստ ունեցող միջոցառում է: Նրա նպատակն է երկրի տնտեսական ու ռազմական հզորության ցուցադրությունը: Բաքվի զորահանդեսը նպատակ ուներ կրկին անգամ ահաբեկել հայաստանյան հանրությունը, բացի այդ՝ այս կերպ փորձ էր արվում նաև ադրբեջանական հասարակության շրջանում ամրապնդել հնարավոր պատերազմում հաղթանակի հանդեպ հավատը: Հատկանշական է սակայն այդ զորահանդեսի հանդեպ ադրբեջանական «Թուրան» գործակալության արձագանքը. մեջբերենք. «Պոռոտախոսությունը երբեք չի եղել լուրջ հերամանատարների և ստրատեգների զենքը: Հայտարարությունները, թե «մենք պատրաստ ենք ռմբակոծել Հայաստանի տարածքում գտնվող ցանկացած օբյեկտ»՝ չզիտես ինչու հակառակորդի վրա չի ազդում, իսկ Ադրբեջանի քաղաքացիների շրջանում հարուցում է տրամաբանական հարց. Սաֆար Աբիև այդ դեպքում ինչու՞ չեն ռմբակոծում այդ օբյեկտները»²⁶:

Պաշտոնական Բաքվի ներքին քարոզչության խոցելի կողմերից է նաև այն, որ պաշտոնական Բաքուն ամեն կերպ փորձում է վարկաբեկել այն

²⁶ «Թուրան» գործակալություն, 28 հունիսի, 2011 թ.: <http://www.regnum.ru/news/fd-abroad/azeri/1419754.html#ixzz1QgrBJi8u>

ամենն ինչը վկայում է հայկական կողմի առավելությունների, մեր բանակի մարտունակության մասին: Այս առումով` Հայոց բանակի ցանկացած զորավարժություն, ցանկացած զորահանդես, ուժի ցուցադրություն շղագրգիռ ռեակցիա է առաջ բերում Բաքվում, քանզի հարկ է լինում շինծու փաստարկներ հորինել հիմնավորելու համար Հայաստանի իբր թույլ հակառակորդ լինելու թեզը: Այս մարտավարության «գլուխգործոցը» 2011-ի սեպտեմբերի 21-ի մեր զորահանդեսի վերաբերյալ նախագահ Ալիևի ռեակցիան էր, որն արժե մեջբերել բառացի. «Ես, երևի նաև դուք և ողջ հասարակությունն առաջին անգամ ականատեսը եղանք, որ ռազմական տեխնիկան ի վիճակի չէր շարժվել ինքնուրույն: Այն զորահանդեսին ցուցադրվում էր բեռնատար մեքենաների և քարշակների վրա: Դա կարող է պայմանավորված լինել մի քանի պատճառով: Կա՛մ այդ տեխնիկան սարքին չէր, կամ այնտեղ վառելիք չկա, կա՛մ էլ այդ երկու պատճառները միասին են հանդես եկել»²⁷: Բնականաբար ցանկացած քննադատական միտք ունեցող մարդու մոտ հայոց բանակի թույլ լինելը հիմնավորելու համար բերված նման «փաստարկները» ակնհայտորեն ճիշտ հակառակ հետևության կհանգեցնեն:

Ադրբեջանում հնարավոր պատերազմին բնակչության հոգեպես պատրաստ լինելու մասին շատ բան է ասում Բաքվի ներկայիս իշխանությանն ընդիմադիր գործիչ Ռասուլ Գուլիևի ահա այս հայտարարությունը. «Ի՞նչ է փոխվել այս 17 տարիների ընթացքում: Փոխվե՞լ է արդյոք մեր ժողովրդի բնավորությունը, ձևավորվե՞լ է արդյոք դիմադրության և ինքնապահպանման բնագույն: Հաղթահարվա՞ծ է արդյոք արկի առաջին իսկ պայթյունի

²⁷ <http://ru.president.az/articles/3397>

ծայնից հետո սեփական հողերը թողնել փախնելու սովորությունը, վախը, ո՛չ: Ես հիշում եմ, թե ինչպես 1994 թվականին Բայլական շրջանային քաղաքի կենտրոնում պատահաբար հայկական չպայթած արկ էր ընկել: Ո՛չ պայթյուն էր եղել, ո՛չ հրետակոծություն, ո՛չ հարձակում, սակայն բոլոր բնակիչները զանգվածաբար սկսեցին լքել իրենց տները, փախուստը խուճապային էր: Ես ստիպված էի շտապ այնտեղ մեկնել և ուժով ստիպել բնակիչներին վերադառնալ: Ասացե՛ք խնդրեմ, արկի, ռումբի, կրակոցի հանդեպ վախը, որ նստած է յուրաքանչյուր ադրբեջանցու մեջ, վերացե՞լ է: Իսկ հիմա պատկերացրեք, եթե Բաքվի վրա արկ ընկնի: Որևէ մեկը պատկերացնու՞մ է դրա հետևանքները...»²⁸:

Կարծում ենք՝ այս ամենից պետք է կատարենք հետևյալ հետևությունը. հայոց զինուժի մարտունակության հետևողական ցուցադրությամբ՝ զորահանդեսներով, զորավարություններով, հարկավոր է աստիճանաբար իրականության հարթություն տեղափոխել ադրբեջանական հանրությանը: Ավելին, հուսալի խաղաղության համար անհրաժեշտ է ադրբեջանական հասարակության շրջանում անհանդուրժողականություն, ժխտողական դիրքորոշումներ ձևավորել հարձակողական պատերազմի հանդեպ: Հարկավոր է ադրբեջանական հանրությանը և հատկապես անդրկովկասյան թուրքերին մատչելի և համոզիչ կերպով ներկայացնել Ադրբեջանի համար պատերազմի կործանարար հետևանքները: Իրականությունը պետք է հասուլինի մեր թշնամուն:

Այս համատեքստում հատկապես կարևոր է

²⁸ http://qafqazinfo.az/%E2%80%9CM%C6%8FN_AZ%C6%8FRBAYCANA_YAXINLA%C5%9EANDA,_B%C6%8FZIL%C6%8FRININ_YUXUSU_QA%C3%87IR%E2%80%9D_%E2%80%93_M%C3%9CSAHIB%C6%8F-2712-xeber.html

պատերազմի ողբերգական հետևանքների անհատականացումը: Ադրբեջանի յուրաքանչյուր քաղաքացի պետք է հասկանա, որ նոր պատերազմը անդրադառնալու է անձամբ իրեն, որ այդ պատերազմից տուժելու է անձամբ ինքը, որ պատերազմը բարդացնելու է իր կենցաղը: Սա կարևոր է, քանզի հարձակողական պատերազմի ողբերգական հետևանքների մասին ադրբեջանական պետական քարոզչությունը լռում է:

Կարծում ենք, որ Ադրբեջանի հասարակությանը պետք է հասու լինեն հնարավոր պատերազմի հետևյալ հետևանքները:

- Նախահարձակ լինելու դեպքում ադրբեջանական կողմի ահռելի կորուստներն անխուսափելի են: Արցախի վրա հարձակվող ադրբեջանական բանակը հանդիպելու է համառ դիմադրության և անողոք պարտիզանական պայքարի: Հարձակողական պատերազմի գինը լինելու է զոհված ադրբեջանցի զինվորների վիթխարի թիվը. այն ինչի մասին Իլհամ Ալիևն ու նրա համախոհները նախընտրում են լռել: Ադրբեջանցի յուրաքանչյուր երիտասարդ պետք է հասկանա. պատերազմի զոհերց մեկը կարող է լինել հենց ինքը: Ադրբեջանցի յուրաքանչյուր մայր պետք է գիտակցի, որ նախագահ Ալիևի սանձազերծած պատերազմը կարող է խլել իր որդու կյանքը: Հետևաբար՝ Արցախը ադրբեջանական հանրույթի համար մեծ գլխացավանք է:
- Հնարավոր պատերազմը լինելու է հասարակ ժողովրդի հաշվին. առաջին գծում կռվելու են հասարակ ժողովրդի զավակները: Մեծահարուստների, առավել ևս երկրի ղեկավարների զավակները շարունակելու են վայելել

խաղաղ կյանքը: Ադրբեջանական պետական ինստիտուտների և հատկապես բանակի կոռուպացվածությունը վերը նշվածը դարձնում է միանգամայն իրատեսական:

- Պատերազմի հետևանքով անխուսափելիորեն տեղի կունենա Ադրբեջանի բնակչության մի ստվար հատվածի կենսամակարդակի անկում:
- Պատերազմից առաջին հերթին կտուժի Ադրբեջանի սահմանամերձ բնակավայրերի բնակչությունը, քանի որ ռազմական գործողությունների արդյունքում նրանց բնակավայրերը կավերվեն, իսկ իրենք ստիված կլինեն լքել իրենց տները: Ստիպված լինելով լքել իրենց տները՝ նրանք կդառնան փախստական՝ զրկվելով ամեն ինչից՝ տնից, տնտեսությունից, ունեցվածքից:
- Իր իսկ կողմից սանձազերծած պատերազմում Ադրբեջանի հավանական պարտության հետևանքները ուղղակի կործանարար կլինեն ադրբեջանական պետականության համար. պարտության դեպքում Ադրբեջանի արևելքը կկտրվի արևմուտքից: Իրադարձությունների զարգացման այս սցենարը միանգամայն իրական է. ադրբեջանական հարձակման առաջին ալիքը կասեցնելու և հաջող հակահարձակման արդյունքում Ադրբեջանը կկորցնի իր տարածքի կեսը:
- Հավանական պատերազմը կարող է պառակտել ադրբեջանական հասարակությունը՝ սրելով նրա տարբեր շերտերի միջև առկա հակասությունները: Բանն այն է, որ այն տարածքը, որ այսօր կոչվում է Ադրբեջան, ունի խայտաբղետ էթնիկ պատկեր: Տասնամյակներ շարունակ Ադրբեջանում դաժան ճնշում-

ների ենթարկված լեզգիների, թալիշների, ավարների այլ բնիկ ազգերի համար նոր պատերազմը միանգամայն խորթ, օտար է լինելու: Ավելին, Ադրբեջանի հնարավոր պարտության դեպքում պարարտ հող կստեղծվի այդ բնիկ ազգերի ինքնագիտակցության զարթոնքի համար, ինչը կարող է հանգեցնել Ադրբեջանի մասնատմանը: Ութ թեև տասնամյակներ շարունակ տարվող բռնի ուժացման քաղաքականությունը տվել է որոշակի արդյունքներ, այդուհանդերձ խոսել այդ բնիկ ազգերի, հատկապես լեզգիների և թալիշների ինքնության լիակատար կորստի և անդրկովկասցի թուրքերի հետ նրանց լիակատար ձուլման մասին դեռ վաղաժամ է: Այստեղ հարկ է նշել նաև, որ արդեն այսօր հակասություններ կան նաև Ադրբեջանի տարբեր շրջանների թուրքերի միջև. հանգամանք, որը չի կարելի անտեսել:

- Ալիևյան կլանն ունի քրդական ծագում: Իր համար սոցիալական հենարան ստեղծելու նպատակով՝ վերջին տարիներին Ադրբեջանի արևմտյան շրջաններում իրականացվել է ինտենսիվ քրդաբնակեցում: Ալիևյան կլանին մոտ կանգնած քրդական ընտանիքները մոնոպոլիզացրել են Ադրբեջանի տնտեսության ամբողջ ոլորտներ: Պետական իշխանության համակարգի տարբեր մակարդակներում զգալի է քրդերի ներգրավվածությունը: Ավելին, ձևավորված է քրդերից կազմված առանձին ոստիկանական ստորաբաժանում՝ ալիևյան իշխանության դեմ հնարավոր հուզումները զսպելու նպատակով: Բնականաբար այս ամենն առաջացնում է անդրկովկասցի թուրքերի զայրույթը, ինչն

առավել ընդգծված կդառնա հնարավոր պատերազմում:

Սույն համատեքստում տեղին է անդրադառնալ այն հարցին, թե Ադրբեջանում իրավիճակի հնարավոր ապակայունացման դեպքում կնվազի՞, թե ընդհակառակը՝ կմեծանա պատերազմի հավանականությունը: Այս հարցադրումը մեզանում հաճախ է հնչում, ուստի իմաստ ունի անդրադառնալ վերջինիս:

Անշուշտ, միանգամայն տրամաբանական է ենթադրությունը, թե իրավիճակի կտրուկ ապակայունացման դեպքում իշխանությունը չկորցնելու նպատակով ալիևյան կլանը կարող է սանձազերծել մեծ պատերազմ: Այո՛, արտաքին վտանգի զգացողությունը, ըստ այդմ նաև ի դեմս հայերի՝ թշնամու կերպարն է՝ ավելի սրելով տեսականորեն հնարավոր է կոնսուլիդացնել ադրբեջանական հանրության ալիևյան կլանի իշխանության շուրջ: Այս երևույթը հոգեբանական գիտության մեջ ընդունված է բնորոշել որպես **«ազրեսիայի սեղավոխում ներքին միջավայրից արսափն միջավայր»**: Այո՛ տեսականորեն այս սցենարը կարող է ամրապնդել ալիևյան իշխանությունը: Սակայն հարկ է կատարել հետևյալ վերապահումը. միայն այն դեպքում, եթե այդ մեծ պատերազմը լինի երաշխավորված հաղթական, ընդ որում՝ այնպիսին, որ այդ հաղթանակը ձերբբերվի արագ և դյուրին: Ահա միայն այդպիսի՝ երաշխավորված հաղթանակով պատերազմը կարող է ամրապնդել ալիևյան կլանի դիրքերը: Բոլոր մյուս սցենարների դեպքում պատերազմը ո՛չ թե կփրկի ալիևյան կլանին, այլ ընդհակառակը՝ կարագացնի նրա կործանումը: Բանն այն է, որ պարտությունը հնարավոր պատերազմում, ինչպես նաև պատերազմի ձգձգվելը, երբ հաղթանակը ավելի ու ավելի անհավանական, մշուշոտ

է դառնում, զուգահեռաբար՝ կորուստների հարաճուն բնույթը, պատերազմով պայմանավորված սոցիալ-տնտեսական զրկանքները միայն կխթանեն հակապատերազմական դիրքորոշումները: Ահա այս՝ միանգամայն հավանական զարգացումների դեպքում այդ հակապատերազմական տրամադրությունները սահուն կվերաճեն հակաալիևյանի. հանրային ընդվզման թիրախն այս դեպքում անխուսափելիորեն կդառնա հենց գործող վարչակարգը:

Ինչպես վերը նշել ենք, հրադադարի պայմաններում հոգեբանորեն անբարենպաստ իրավիճակում է գտնվում նաև ադրբեջանական հանրությունը: Ավելին, պաշտոնական Բաքուն հարձակողական պատերազմում հաղթելու խնդիր է դնում սեփական հանրույթի առջև: Բայց հանրությանը հարձակողական պատերազմի բարոյահոգեբանորեն պատրաստելը հեշտ գործ չէ, առավել ևս, որ այդ պատերազմում հաղթելու հավանականությունը ոչ միայն երաշխավորված չէ, այլև գրեթե անհավանական է: Ադրբեջանում դեռ երկար պետք է ծանր ու թեթև անեն մինչև նոր ռազմական արկածախնդրության դիմելը: Այո՛, պաշտոնական Բաքուն անում է ամեն ինչ, որպեսզի Արցախը վերանվաճելու նպատակը անդրկովկասցի թուրքերի ընկալումներում մնա ակտուալ, որ առկա իրողությունների հետ ադրբեջանական հանրությունը չհամակերպվի, որ անդրկովկասցի թուրքի մոտ հաղթահարվի պարտվածի բարդույթը, որպեսզի նա համակվի հնարավոր պատերազմում հաղթելու վստահությամբ: Այդուհանդերձ, այսօր առավել քան ակնհայտ է, որ Ադրբեջանում հայոց պետությունների դեմ կռվելու համատարած բարոյահոգեբանական պատրաստականություն չկա: Այսօր Ադրբեջանում կա ախտաբանական ատելություն հայոց հանդեպ, բայց ո՛չ

ավելին: Հատկապես ընդգծենք, որ ատելությունը դեռ հարձակողական պատերազմին հոգեպես պատրաստ լինել չէ, ատելությունն այդ պատրաստականության նախադրյալներից է միայն: Ատելի թշնամուց ուժեղ լինելու համոզվածությունն է, որ ինքնավստահություն է հաղորդում հանրությանը: Իսկ այդ համոզվածությունն Ադրբեջանում չկա: Համենայն դեպս, մի բան հստակ է, որ չի կարելի ասել, թե Ալիևի կողմից պատերազմը վերսկսելու դեպքում Ադրբեջանում ոգևորության պոռթկումներ կլինեն, թե Ադրբեջանի տարածքային ամբողջականության համար կյանքը վտանգելու պատրաստ Ադրբեջանի քաղաքացիների թիվը կլինի մեծ՝ ընդունելով համատարած բնույթ: Բացի այդ՝ մեծ պատերազմ սկսում են ունենալով լրջագույն հանրային վստահություն: Մինչդեռ ակնհայտ է, որ ալիևյան կլանի հանրային վստահության աստիճանը թույլ չի տալիս գնալ նման քայլի: Հարկ է հաշվի առնել, որ այս դեպքում խոսքը հարձակողական պատերազմ սկսելու մասին է, պատերազմ, որը ենթադրում է հիրավի վիթխարի մարդկային կորուստներ: Իսկ այն նվազագույնը, որ հարկավոր է, որպեսզի հանրությունն ակտիվորեն ներգրավվի նման պատերազմում՝ իշխանության և հանրության միջև անջրպետի բացառումն է: Ադրբեջանում՝ ճիշտ հակառակը. այդ անջրպետը հիմա արդեն առկա է: Ի դեպ, մեծ է հավանականությունը, որ նման պայմաններում սանձազերծված պատերազմն Ադրբեջանում շատերն կընկալեն որպես ալիևյան կլանի պատերազմ: Պարզ է, որ այս դեպքում պոպուլյար պատերազմի մասին խոսք անգամ լինել չի կարող, առավել ևս եթե նկատի ունենանք, որ Ադրբեջանի բնակչության շրջանում զգալի թիվ են կազմում բնիկ եթնոսները, որոնք մեզ՝ հայերիս, աստիճանաբար դադարում են ընկալել որպես թշնամի: Ի

դեպ, առավել քան ակնհայտ է, որ ադրբեջանական ղեկավարությունն արդեն այսօր չի վստահում ադրբեջանական բանակի ծագումով ոչ թուրք զինծառայողներին և մտավախություն ունի, որ թե՛ հինա և թե՛ մեծ պատերազմի դեպքում բանակ զորակոչված բնիկ ազգերի ներկայացուցիչների կամավոր գերի հանձնվելը հայկական կողմին կարող է ընդունել զանգվածային բնույթ: Այդ հեռանկարը կանխելու նպատակով է, որ ադրբեջանական ղեկավարությունը սեփական ռազմագերիներին վերաբերվում է որպես դավաճանների: Հանրահայտ է. վերջին տարիներին ադրբեջանական կողմին վերադարձված բոլոր ռազմագերիները ենթարկվել են քրեական հետապնդման և ազատագրվել տևական ժամանակահատվածով:

Առավել քան ակնհայտ է, որ Ադրբեջանի ներկայիս բարոյահոգեբանական մթնոլորտի ֆոնին հարձակողական պատերազմ սանձազերծելու դեպքում ադրբեջանական հասարակության շրջանում հետզհետե տիրապետող կղառման հակապատերազմական դիրքորոշումները, զինծառայությունից խուսափելն աստիճանաբար կստանա մասսայական բնույթ, իսկ պատերազմական զրկանքների ուժգնացմանը զուգահեռ ալիևյան վերնախավի հանդեպ դժգոհությունները շեշտակիորեն կաճեն, է՛լ ավելի ընդգծված կղառմա սովորական քաղաքացիների և կառավարող վերնախավի միջև սոցիալական անհավասարությունը: Այս ամենի հետևանքով Ադրբեջանի ղեկավարության քաղաքական կուրսի վարկաբեկումը կլինի անխուսափելի: Այստեղ հարկ է նշել նաև, որ այժմ արդեն Ադրբեջանի հասարակության ակտիվ հատվածի ուշադրության կենտրոնում են զինված ուժերում տեղ գտած անարդարությունները: Փաստ է, որ Ադրբեջանի զինված ուժերի հանդեպ հանրային

վատահուրթուն չկա: Փաստ է նաև, որ ամենաթողության, քրեական բարքերի հետևանք հանդիսացող կորուստները վարկաբեկում են այդ բանակը սեփական հասարակության ընկալումներում:

Հնարավոր մեծ պատերազմում ադրբեջանական կողմի ո՛չ երաշխավորված հաղթանակի, և ո՛չ էլ առավել ևս արագ և դյուրին հաղթակի մասին խոսք անգամ լինել չի կարող: Մեր հանդեպ ռազմական գերազանցություն ձեռք բերելու ալիևյան փորձերն արդյունք չեն տվել: ՌԻստի՝ նման պայմաններում մեծ պատերազմ վերսկսելը նախագահ Ալիևի կողմից կլինի արկածախնդրություն: Այդ է պատճառը, որ նման սցենարի հավանականությունը փոքր է:

Իբրև ամփոփում նշենք, որ տվյալ դեպքում մեր խնդիրը բնավ հայաստանյան հանրությանը «հանգստացնելը» չէ: Առավել քան ակնհայտ է, որ պատերազմի հեռանկարն ամեն գնով ժխտելը խիստ վտանգավոր է մեզ համար: Պատերազմի տեսական հավանականություն կա միշտ: Բայց «համազգային բանակի» վերածվելու, երկրի մարդկային ռեսուրսները մոբիլիզացնելուն ուղղված քայլեր պետք է անել միայն այն դեպքում, երբ պատերազմի վտանգը պոտենցիալ բնույթից իսկապես դառնա իրական: Մինչդեռ այսօր գործ

Դատելով այն հանգամանքից, որ թշնամին չի վերսկսում լայնամասշտաբ ռազմական գործողություններն ալիևյան վերնախավը գիտակցում է նոր պատերազմի պոտենցիալ ռիսկերը, գիտակցում է, որ հաղթելու հավանականությունը չնչին է, և հենց այդ պատճառով էլ չի հարձակվում:

ունենք պատերազմի հենց պոտենցիալ վտանգի հետ: Ռազմական ներուժի հարաբերակցությունն այսօր ի օգուտ Բաքվի չէ: Դատելով այն հանգամանքից, որ թշնամին չի վերսկսում լայնամասշտաբ ռազմական գործողությունները, ալիևյան վերնախավը գիտակցում է նոր պատերազմի պոտենցիալ ռիսկերը, գիտակցում է, որ հաղ-

թելու հավանականությունը չնչին է, և հենց այդ պատճառով էլ չի հարձակվում:

Հարկ է հաշվի առնել սակայն, որ մեծ պատերազմը կդառնա իրականություն այն դեպքում, երբ հայկական կողմը թուլանա, վերածվի ագրեսիայի համար մատչելի թիրախի, այսինքն երբ ուժերի հարաբերակցությունը փոխվի ի օգուտ Ադրբեջանի, երբ թշնամին մեր հանդեպ ձեռք բերի շեշտակի ռազմական գերազանցություն: Այս համատեքստում՝ հայաստանյան հանրության բարոյահոգեբանական կայունությունն այն հիմնական գործոններից մեկն է, որը կանխում է լայնամասշտաբ ռազմական գործողությունների վերսկսումը: Յետևապես, հակամարտող կողմերի միջև բարոյահոգեբանական հարաբերակցության խախտումն ի վնաս մեզ, մասնավորապես՝ ներքաղաքական անկայունությունը, ադրբեջանական վտանգի հանդեպ ՀՀ և Արցախի հանրության զգոնության բթացումը, նոր պատերազմին մեր հանրության անպատրաստ մնալը, կջլատի հայության պաշտպանական ներուժը և խոցելի կդարձնի մեր երկիրը, հետևաբար՝ էապես կմեծացնի լայնամասշտաբ ռազմական գործողությունների վերսկսման հավանականությունը:

Այդուհանդերձ, առավել քան ակներև է՝ ինչպիսի իշխանություն էլ որ լինի Ադրբեջանում, այն չի վարանի պատերազմով զավթել Արցախը, եթե համոզված լինի, որ կարող է այդ անել: Այդ սցենարը կանխելու համար մենք պետք է ելնենք վատթարագույն սցենարից, այն է՝ Ադրբեջանի իշխանությունը վաղ թե ուշ նոր պատերազմ է սանձազեր-

Առավել քան ակներև է՝ ինչպիսի իշխանություն էլ որ լինի Ադրբեջանում, այն չի վարանի պատերազմով զավթել Արցախը, եթե համոզված լինի, որ կարող է այդ անել: Այդ սցենարը կանխելու համար մենք պետք է ելնենք վատթարագույն սցենարից, այն է՝ Ադրբեջանի իշխանությունը վաղ թե ուշ նոր պատերազմ է սանձազերծելու: Յետևաբար՝ պատերազմին պատրաստվելով է միայն հնարավոր այն կանխել:

ծելու: Հետևաբար՝ պատերազմին պատրաստվելով է միայն հնարավոր այն կանխել:

3.3. Հայաստանյան հանրության դեմ տարվող թշնամական քարոզչության հետևանքների չեզոքացման ուղիները

Մեր դեմ ուղղված թշնամու հոգեբանական դիվերսիաները չեզոքացնելու թերևս առաջին քայլը հանրությանն այդ մասին տեղեկացնելն է: Հայաստանյան հանրությունը պետք է տեղյակ լինի, որ թշնամական քարոզչության թիրախ է: Տեղեկացվածությունը մարդու մոտ առաջացնում է դիմադրություն ամեն տեսակ գաղափարական «ներարկումների» հանդեպ: Եվ այս առումով անելիք կա անընդհատ: Ընդ որում՝ ադրբեջանական քարոզչության աշխատանքի՝ թեզերի, դրանք տարածելու հնարքների վերաբերյալ տեղեկությունները, վերլուծական նյութերը պետք է հայաստանյան լրատվական դաշտում առկա լինեն անընդհատ՝ հակառակորդի քարոզչական ներգործությանը զուգահեռ: Այս կերպ հնարավոր կլինի նաև նվազագույնի հասցնել մեզանում հակառակորդի քարոզչական թեզերը վերարտադրող հանրային գործիչների թիվը:

Սակայն ադրբեջանական քարոզչական դիվերսիաները չեզոքացնելուն զուգահեռ հարկավոր է պատճառահետևանքայնորեն հիմնավորված կերպով հերքել թշնամու քարոզչական թեզերը: *Հետևողական հակաքարոզչությամբ կանխել բնակչության սոցիալ – սննեսական դժգոհություններն ու հրադադարով թայմանավորված սազնադներն Արցախի կերտարի վրա տրոեկսելու, Արցախի հետ կադելու ցանկացած փորձ:* Հարկավոր է հանրության շրջանում զարգացնել ադրբեջանական քարոզչական

թեզերը ժխտող հետևյալ հակաթեզերը:

Առաջին՝ *Արցախը ոչ միայն չի կարող լինել Հայաստանի սնեստական զարգացման խոչընդոտ, այլև կարող է խթանել մեր երկրի սնեստական զարգացմանը: «Հայաստանի սոցիալ – սնեստական հիմնախնդիրները ոչ միայն չեն լուծվի Արցախը հանձնելով, այլ էլ ավելի կբարդանան»:*

Սույն հակաթեզը հարկավոր է հիմնավորել հետևյալ փաստարկներով:

Թուրք ադրբեջանական տանդեմն Արցախը հռչակելով որպես Հայաստանի տնտեսական զարգացման խոչընդոտ, փորձում է մեր հանրության համար այդ թեզը հիմնավոր դարձնել՝ մատնանշելով մեր երկրի կոմունիկացիոն շրջափակման փաստը: Այն ինչ առաջարկում է թուրք-ադրբեջանական կողմը, կարելի է բանաձևել որպես «հող՝ ճանապարհները բացելու բարի կամքի դիմաց»: Իրականում այս տրամաբանությունը սնանկ է, քանզի մենք կորցնում ենք հայրենիք, փոխարենը ստանալով մեզ չշրջափակելու խոստում, լոկ խոստում, քանզի այդ դեպքում, անգամ Արցախը հետ ստանալուց հետո էլ, թուրք-ադրբեջանական տանդեմը շարունակում է պահպանել մեզ վրա ազդելու գործուն լծակ՝ ի դեմս ճանապարհների փակելու հնարավորության: Իսկ այդ հնարավորության առկայության դեպքում ոչ մի իրավապայմանագրային պարտավորություն չի կարող համարվել այնպիսի հուսալի երաշխիք, որն ունակ է բացառել թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից մեր երկրի կոմունիկացիոն շրջափակումը: Ի վերջո, չի կարելի մոռանալ, որ թե՛ Թուրքիան և թե՛ Ադրբեջանը բազմիցս անտեսել են սեփական շահերին հակասող իրենց պայմանագրային պարտավորվածություններն այն դեպքերում, երբ վստահ են եղել, որ նման քայլը կմնա անհետևանք: Մեր տարածաշրջ-

ջանում, որտեղ քաղաքական կոնյուկտուրան պայմանավորված է գերտերությունների բանեցրած երկակի չափանիշներով ո՞վ կարող է երաշխավորել Թուրքիայի կամ Ադրբեջանի հավատարմությունը սեփական պարտավորություններին: Եվ առհասարակ, ինչպե՞ս կարելի է սեփական երկրի ապագան կառուցել հակառակորդների բարի կամքի, կամ էլ այդ հակառակորդի վրա այլոց հայանպաստ պարտադրանքի հույսի հիման վրա: Առնվազն պետք է միամիտ լինել կարծելու համար, թե Արցախը կորցնելուց հետո շեշտակիորեն թուլացած հայոց պետականության վրա ազդելու հնարավորությունից թուրք-ադրբեջանական կողմը կիրաժարվի, առավել ևս, որ թուրքական ախորժակը բնավ չի սահմանափակվում լոկ Արցախով: Հետևաբար՝ թուրք-ադրբեջանական կողմը Արցախը ետ ստանալուց հետո նույնպես ցանկացած պահի կարող է փակել սահմանը մեր երկրից հերթական զիջումը կորզելու նպատակով: Եվ ուրեմն՝ Արցախի հանձնումը սկզբունքորեն չի կարող վերջ դնել մեր երկրի թուրք-ադրբեջանական կոմունիկացիոն շրջափակմանը: Չկա որևէ հիմնավոր փաստարկ, որով հնարավոր կլիներ հերքել վերը նշվածը:

Այստեղ սկզբունքորեն կարևոր է նշելը, որ մեր երկրի գերխնդիրը պետք է լինի այլընտրանքային ուղիներով չեզոքացնել թուրք-ադրբեջանական շրջափակման բացասական հետևանքները, ի սպառ վերացնել թուրքական կոմունիկացիաների նշանակությունը մեր երկրի զարգացման համար: Որպես այդպիսի այլընտրանք հանդես է գալիս իրանական ուղղությունը: Եվ բնավ պատահական չէ, որ մեր երկիրը ներկայումս Իրանի հետ զարգացնում է ռազմավարական կոմունիկացիոն ծրագրեր, ինչն առաջացնում է պաշտոնական Բաքվի անթաքույց դժգոհությունը: Եվ ահա այս համատեքստում

Արցախի նշանակությունն ուղղակի անփոխարինելի է: Բանն այն է, որ Արցախը մոտ հարյուր կիլոմետրով սահմանակից է Իրանի հետ, ինչը ապագայում կոմունիկացիոն ծրագրեր զարգացնելու և թուրքական կոմունիկացիոն շանտաժը հաղթահարելու լրացուցիչ հնարավորություն է ընձեռում: Հետևաբար՝ ո՛չ թե պետք է տրվել թուրքական շանտաժին և զրկվել Արցախից, որը մեր երկրի տնտեսական զարգացումը խթանելու ահռելի ռեսուրս ունի, այլ՝ զարգացնել այդ ռեսուրսը և վերացնել թուրքական շանտաժի պատճառը՝ մեր երկրի մասնակի կոմունիկացիոն կախվածությունը թշնամուց:

Երկրորդ հակաթեզը հետևյալն է՝ Արցախի պաշտպանությունը հայաստանյան հանրության հարկ է հրամցնել որպես համայն Հայաստանի անվտանգության գրավական, ըստ այդմ՝ *ազատագրված Արցախն ազգային արժեք է և համայն Հայաստանի անվտանգության և արժանադասիվ գոյության գրավական, հուսալի խաղաղության երաշխիք, և որ ամենակարևորն է, Արցախի կորուսքը հանգեցնելու է Սյունիքի կորստին:*

Սույն հակաթեզը հարկավոր է հիմնավորել ներքոնշյալ փաստարկներով:

Բանն այն է, որ հնարավոր պատերազմում հաղթելու դեպքում Ադրբեջանը բնավ չի բավարարվելու Արցախի նվաճմամբ, այլ ամեն գնով փորձելու է ցամաքային կապ ստեղծել անկլավային վիճակում գտնվող Նախիջևանի հետ, ինչն ադրբեջանական պետականության համար ունի կենսական նշանակություն: Այսօր ազատագրված Արցախի գոյությունն անիրականանալի է դարձնում անդրկովկասցի թուրքերի այդ նպատակը: Բայց Արցախի տարածքը հետ ստանալուց հետո Նախիջևանի անկլավային վիճակը վերացնելու թուրք-ադրբեջանական գերնպատակը կդառնա իրատեսա-

կան: Հետևաբար, եթե մենք տրվենք թուրքական մոլորությանն ու հանձնենք Արցախը, ապա ոչ թե կկանխենք պատերազմը, այլ ընդհակառակը՝ նոր պատերազմի հիմք կդնենք: Արցախը ստանալուց հետո թուրք-ադրբեջանական տանդեմն իր հայացքն ուղղելու է Սյունիքի վրա: Արցախի կորստից հետո Սյունիքի պաշտպանությունը կդառնա գրեթե անհնարին: Արցախը կամ նրա մի մասը հանձնելու հետևանքով ռազմական առումով շեշտակիորեն թուլացած Հայաստանից Սյունիքը խլելու և Նախիջևանի հետ ցամաքային կապ ստեղծելու նպատակով թուրք-ադրբեջանական տանդեմը ցանկացած պահի կարող է պատերազմ սկսել՝ հորինելով ինչ-ինչ պատրվակներ: Հատկապես ընդգծենք, որ Արցախի կամ նրա մի մասի հանձնումից հետո մեր տարածաշրջանում միշտ էլ կարող է ստեղծվել մի այնպիսի ռազմաքաղաքական իրավիճակ, որը նպաստավոր կլինի Հայաստանի դեմ թուրք-ադրբեջանական նոր ագրեսիայի համար: Բնավ պատահական չեն Ջանգեզուրի՝ պատմական ադրբեջանական տարածք լինելու մասին Իլիամ Ալիևի կողմից բազմիցս արված հայտարարությունները, ինչն ադրբեջանական հեռահար զավթողական նպատակների հերթական վկայությունն է: Կրկնենք՝ ադրբեջանական քաղաքական էլիտայի համար Սյունիքի զավթումն այսօր դեռ անիրականանալի երազանք է և այդպիսին կմնա միայն ազատագրված Արցախի գոյությամբ:

Սյունիքի հնարավոր կորստով հայոց պետականությունը կդադարի լինել կենսունակ, քանզի զրկվելով Իրանի հետ կապից՝ Հայաստանը կհայտնվի լիակատար կոմունիկացիոն կախվածության մեջ իր թշնամիներից, ինչն ուղղակի անհնարին կդարձնի մեր երկրի տնտեսական կայուն զարգացումը: Եվ ուրեմն՝ Արցախի կորուստը

նշանակում է հայոց պետականության կորուստ: Ուստի հայոց պետականության համար կործանարար այս հեռանկարը կանխելու համար հարկավոր է է՛լ ավելի ամրապնդել ազատագրված Արցախի պաշտպանունակությունը:

Հետևաբար՝ Արցախը ո՛չ թե Հայաստանի անվտանգության և տնտեսական զարգացման խոչընդոտ է, ինչպես մեզ փորձում են մոլորեցնել մեր թշնամիները, այլ՝ երաշխիք. պատերազմը հնարավոր է կանխել ոչ թե Ացախը հանձնելով, այլ՝ պաշտպանելով: Ազատագրված Արցախի գոյությունը պատերազմը կանխող գործոն է այն պարզ պատճառով, որ այն անհնարին է դարձնում Հայաստանի դեմ հաղթական պատերազմը:

Վերջում հարկ է ընդգծել, որ մեզանում սույն հակաթեզերը հարկավոր է զարգացնել անընդհատ, քանզի թշնամական քարոզչական ներգործությունը նույնպես լինելու է անընդհատ: Ընդ որում՝ կախված կոնկրետ իրավիճակի առանձնահատկություններից այս հակաթեզերը մեզանում նպատակահարմար է զարգացնել կա՛մ սիմետրիկորեն՝ հակառակորդի քարոզչական թեզերը հերքելուն զուգահեռ, կա՛մ ասիմետրիկորեն, այսինքն՝ ադրբեջանական քարոզչության կոնտեքստից անկախ:

Ազատագրված Արցախի գոյությունը պատերազմը կանխող գործոն է այն պարզ պատճառով, որ այն անհնարին է դարձնում Հայաստանի դեմ հաղթական պատերազմը:

3.4. Ինչպե՞ս կանխել հայաստանյան հանրության դեմ տարվող թշնամական քարոզչությունից բխող վտանգները

Թշնամական քարոզչությանը հակազդելու կարելիորագույն ուղղություններից մեկը մեր դեմ ուղղված քայքայիչ քարոզչական ներգործության վտանգավոր հետևանքները կանխելն է: Մասնավորապես անհրաժեշտ է բացահայտել և վերացնել ՀՀ և Արցախի հանրության հոգեբանորեն խոցելի այն կողմերը, որոնք կարող է ի վնաս մեզ օգտագործել թշնամու քարոզչամեքենան: Ստորև մենք կանդրադառնանք այդ կանխարգելիչ աշխատանքի մի շարք կողմերին:

Հրադադարի պայմաններում ապրող մեր երկրի պաշտպանունակության հիմնական գրավականներից է նրանում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի առկայությունը: Վերջինս ենթադրում է մեծ թվով հոգեպես կայուն, իրավիճակին համարժեք գործելակերպի ունակ և թշնամուն հաղթելու վճռական դիրքորոշում կրող քաղաքացիների առկայություն:

Հրադադարի պայմաններում ապրող մեր երկրի պաշտպանունակության հիմնական գրավականներից է նրանում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի առկայությունը: Վերջինս ենթադրում է մեծ թվով հոգեպես կայուն, իրավիճակին համարժեք գործելակերպի ունակ և թշնամուն հաղթելու վճռական դիրքորոշում կրող քաղաքացիների առկայություն: Ինչպիսի՞ն է այս տեսակետից ներկայիս հայ

հասարակությունը, ինչպիսի՞ սոցիալ-հոգեբանական գործընթացներ են նրանում տեղի ունենում, առո՞ղջ է արդյոք նրանում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը: Ստորև մենք անդրադառնալու ենք մեր երկրում վերջին տարիներից նկատվող այն սոցիալ-հոգեբանական զարգացումներին, որոնք էապես թուլացնում են Հայաստանի պաշտպանունակությունը և մասնավորապես՝ նպաստավոր ֆոն ստեղծում թշնամական քարոզչության համար:

3.4.1. Երկու խոսք փաղափական մշակույթի մասին

Հաճախ կարելի է լսել, որ մեզանում քաղաքական մշակույթը նոր-նոր է ձևավորվում: Հաշվի առնելով, այն որ մեր երկիրն ապրում է հրադադարի պայմաններում, որ մեր երկրի դեմ պաշտոնական Բաքուն տանում է ինտենսիվ և հետևողական քարոզչություն, ապա մեր քաղաքական մշակույթի փաղաղրիչներից մեկը պետք է լինի ներքաղաքական դիսկուրսում ադրբեջանական քարոզչական թեզերն ականա չվերարտադրելը, դրանք մրցակից քաղաքական թիմի դեմ չկիրառելը: Հետևաբար հարկավոր է մեզանում համատարած դարձնել ժխտողականությունը հայ հանրային գործչի կողմից ադրբեջանական քարոզչական թեզերը, կլիշեները վերարտադրելու հանդեպ, ինչը մեզանում պետք է համարվի անընդունելի, դատապարտելի:

Այս համատեքստում հարկ է անդրադառնալ նաև հետևյալ խնդրին: Հարկավոր է կանխել հայաստանյան հանրույթի շրջանում Հայոց բանակի մասին ադրբեջանական «աղբյուրներից» ստացվող տեղեկությունների հիման վրա պատկերացումների ձևավորումը: Հայաստանյան հանրույթի շրջանում հարկավոր է կայուն հետևողականությամբ թերահավատություն ձևավորել ադրբեջանական կայքերում Հայաստանին և Հայոց բանակին վերաբերող նյութերի հանդեպ: Հետևաբար, հարկավոր է համոզիչ փաստարկներով ապացուցել, որ այդ հրապարակումներն ի սկզբանե ունեն կանխակալ բնույթ, որ դրանցում ներկայացված «տեղեկությունները» սուտ են կամ լավագույն դեպքում՝ խիստ չափազանցված:

3.4.2. Ճգճի տարրերի օգտագործման անհրաժեշտությունը

Մեր երկրի հոգեբանական անվտանգության ապահովման կարևոր բաղադրիչներից է հակամարտության ինչպես օբյեկտիվ իրողությունները, այնպես էլ դրա հայանպաստ մեկնաբանությունը ճշգրիտ բնորոշող եզրույթների ներմուծումը տեղեկատվական-քարոզչական և դիվանագիտական-քաղաքական ասպարեզ: Բանն այն է, որ եզրույթները հանրային դիրքորոշումներ են ձևավորում: Կայուն պարբերականությամբ շրջանառվելով՝ եզրույթներն աստիճանաբար հանրային գիտակցության մեջ ամրապնդում են հակամարտության պատճառների, ընթացքի, կարգավորման սցենարների վերաբերյալ պատկերացումներ և վերաբերմունք: Այս ակնհայտ ճշմարտությունը Բաքվում ժամանակին հասկացան, և այս տարիներին ստեղծեցին արցախահայության ազատագրական պայքարը վարկաբեկելու, նրա բնույթը ձևախեղելու և այդ կերպ արցախահայության ինքնորոշման իրավունքի վերաբերյալ միջազգային հանրության շրջանում թյուր պատկերացում ձևավորելու նպատակ հետապնդող եզրույթների մի փունջ: Եվ ուրեմն՝ հարկավոր է հակամարտության հայանպաստ կարգավորման սցենարն արտահայտող եզրույթներ շրջանառել՝ ինչը թույլ կտա այդ սցենարը կյանքի կոչելու հաստատականություն ձևավորել մեզանում, կկանխվի թշնամու տեղեկատվական աճպարարություններին տրվելու, ինչպես նաև թշնամուն ձեռնտու վտանգավոր տարածքային գիշումների գաղափարի տարածման ռիսկը: Ասվածն առավել քան ակտուալ է, քանզի, ինչպես բազմիցս նշել ենք, թշնամին մեզանում հետևողականորեն փորձում է հասունացնել Արցախը գիշե-

լու գաղափարը:

Այսպես՝ տարիներ շարունակ մեզանում շրջանառվում է «հակամարտ զորքերի շփման գիծ» եզրույթը: Վերջինս կոչված է արտահայտել հրադադարի՝ լայնամասշտաբ ռազմական գործողությունների, բայց միաժամանակ նաև կայուն խաղաղության բացակայության, հետևաբար նաև՝ հակամարտության կարգավորված չլինելու հանգամանքը: Սակայն արդյո՞ք ողջ վերը նշվածը ճշգրիտ և որ մեզ համար ամենակարևորն է՝ հայանպաստ, այսինքն՝ օբյեկտիվորեն է արտահայտում «հակամարտ զորքերի շփման գիծ» եզրույթը: Պատասխանն ակնհայտ է՝ ոչ:

Այո՛, հակամարտությունը կարգավորված չէ: Սակայն կայացած է հայոց երկրորդ պետությունը՝ Արցախը: Յետևաբար՝ «հակամարտ զորքերի շփման գիծ» եզրույթը սկզբունքորեն սխալ է արտահայտում առկա իրողությունները: Քաղաքագետ Լևոն Մելիք – Շահնագարյանի կարծիքով՝ Արցախ-Ադրբեջան պետական սահմանն այս կերպ ներկայացվում է իբրև մի անկայուն, փոփոխելի և ժամանակավոր բաժանարար գիծ: Յամանիտ լինելով այս տեսակետին՝ հավելենք, որ Արցախի ներկա փաստացի տարածքի փոփոխելի լինելու ընկալման ամրապնդումը հայաստանաբնակ և Սփյուռքի հայության մոտ խիստ վտանգավոր է: Այս կերպ թյուր պատրանք է ստեղծվում, թե Արցախում ներդրումներ կատարելը, մշտական բնակություն հաստատելը մեծ ռիսկ է պարունակում, քանզի նրա տարածքները վիճելի են: Իսկ այս դիրքորոշումն Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման,

«Հակամարտ զորքերի շփման գիծ» եզրույթը սկզբունքորեն սխալ է արտահայտում առկա իրողությունները:

Արցախ-Ադրբեջան պետական սահմանն այս կերպ ներկայացվում է իբրև մի անկայուն, փոփոխելի և ժամանակավոր բաժանարար գիծ:

ժողովրդագրական խնդիրների լուծման լուրջ սպառնալիք է. հենց այն է, ինչ ցանկանում է թշնամին:

Արցախն Ադրբեջանի հետ ունի պետական սահման:

Այսպիսով՝ Արցախն Ադրբեջանի հետ ունի **դեֆակտո սահման**:

Պարզապես հրադադարի պայմաններում «*դեֆակտո սահման*» և «*ռազմաճակատ*» հասկացությունները նույնական են, ինչը սակայն բնավ չի նշանակում այդ պետական սահմանի փոփոխելիություն:

Առանց Արցախի ներկա տարածքի չկա հայկական ռազմաքաղաքական տարածք, չկա հայոց պետականություն իբրև աշխարհաքաղաքական իրողություն, չկա կենսունակ պետություն կերտելու հեռանկար:

Չարկ է հստակ գիտակցել, որ առանց Արցախի ներկա տարածքի չկա հայկական ռազմաքաղաքական տարածք, չկա հայոց պետականություն իբրև աշխարհաքաղաքական իրողություն, չկա կենսունակ պետություն կերտելու հեռանկար:

Հաջորդ նկատառումը. մեզանում՝ հայոց երկու պետությունների փոխհարաբերությունների տարբեր կողմերին անդրադառնալիս հաճախ սխալմամբ կիրառվում են «Հայաստան» և «Ղարաբաղ» տեղանունները: Տվյալ դեպքում հատկանշականն այն է, որ այդ տեղանունները, որպես կանոն, կիրառվում են փոխադարձ հակադրության մեջ: Գուցե առաջին հայացքից սա կարող է բնական թվալ, քանզի գործ ունենք հայոց հայրենիքի վրա ստեղծված երկու հայաբնակ և բառի բուն իմաստով հայկական պետությունների հետ: Ավելին՝ հարկ է նշել, որ մեր այն հայրենակիցները, ովքեր նման հակադրության համատեքստում են կիրառում «Հայաստան – Ղարաբաղ» տեղանունները, բնականաբար, որևէ կերպ կասկածի տակ չեն առնում «Ղարաբաղ» պետության հայկական լինելը: Այդուհանդերձ, այս տեղանունները հակադրության համատեքստում կիրառելը ոչ միայն հոգեբանորեն զրազետ չէ, այլև վտանգավոր է, և ահա թե ինչու:

«Հայաստան» տեղանունը հայ մարդու մոտ խորհրդանշում է իր հայրենիքը՝ այն էթնոգենետիկ տարածքը, որի վրա ձևավորվել է հայությունն իբրև հավաքականություն, իբրև էթնոս: Հայաստանն այն տարածքն է, որին իր էթնոգենետիկ ընթացքում հայ ազգը մշակութային դիմագիծ է հաղորդել՝ մնայուն արժեքներ ստեղծելով: Հայրենիքի տարածական պատկերը յուրաքանչյուր հայի էթնիկական ինքնագիտակցության համակարգի կարևոր բաղադրիչներից է: Հայրենիքի ընկալումը հայի՝ ինչպես ցանկացած նստակյաց էթնիկական հանրույթի ներկայացուցչի մոտ հստակորեն սահմանազատված է այլապատկան տարածքներից:

Հայրենիքի տարածական պատկերը յուրաքանչյուր հայի էթնիկական ինքնագիտակցության համակարգի կարևոր բաղադրիչներից է:

Եվ ուրեմն՝ հայի ինքնագիտակցության տեր, հետևաբար՝ իրեն հայ համարող մարդու համար Հայաստան-հայրենիքն իր ազգային-հավաքական «մենք»-ի տարածական դրսևորումն է: Հետևաբար՝ ազգի հավակնություններն ավարտվում են նրա հայրենիքի տարածական ընկալման սահմաններով:

Հայաստան տեղանունը հայի ընկալումներում ամբողջացնում է ողջ հայոց էթնոգենետիկ տարածքը՝ հայրենիքը: Հայաստան ասելով՝ հայ մարդը հասկանում է իր ողջ պատմական հայրենիքը՝ իր ամբողջականության մեջ, բնականաբար՝ Արցախը ներառյալ: Երբ մենք հակադրում ենք Արցախն Հայաստանին՝ նշելու համար երկու հայկական պետությունները մենք ականա առանձնացնում ենք Արցախը Մայր հայրենիքից՝ «Հայաստան» հավաքական տիրույթից: Այս տեսակետից խոցելի է հատկապես մատաղ սերունդը: Հենց մատաղ սերնդի մոտ կարող է ամրապնդվել Արցախի՝ իբրև Հայաստանից դուրս գտնվող տարածքի ընկալում: Այսինքն՝ գործ ունենք էթնիկական ինքնագիտակ-

ցության խորքային տրանսֆորմացիայի, ավելի ճիշտ՝ ձևախեղման վտանգի հետ, երբ կարող է աղճատվել հայրենիքի տարածական ընկալումը: Հենց դա է այն վտանգը, որը պետք է կանխել արդեն այսօր:

Բանն այն է, որ հայրենասիրությունն, ապա նաև հայրենիքը պաշտպանելու պատրաստակամությունը ձևավորվում է նախևառաջ հայրենաճանաչության հենքի, այսինքն՝ սեփական ազգային «մենք»-ի տարածական սահմանների հստակ գիտակցման վրա: Արցախը պաշտպանելու պատրաստակամություն կրելու համար յուրաքանչյուր հայ պատանի այն պետք է իրենը համարի, հոգեհարազատություն զգա հայոց հայրենիքի այդ հատվածի հանդեպ, նույնացնի իրեն այդ տարածաշրջանում բնակվող հայության հետ:

Այս համատեքստում հարկ է ընդգծել հետևյալը: Հայոց հայրենիքի տարածքի վրա ձևավորվել են երկու պետություններ՝ Հայաստանի Հանրապետությունն ու Արցախը: Սակայն Արցախի անկախությունը չի նշանակում օտարում հայրենիքից:

Հայոց երկրորդ պետության ստեղծումը, ինչպես հայտնի է, պայմանավորված է միջազգային իրավունքի նորմերի համատեքստում Արցախի հայապատկանությունն ապահովելու նկատառումներով:

Հայոց երկրորդ պետության ստեղծումը, ինչպես հայտնի է, պայմանավորված է միջազգային իրավունքի նորմերի համատեքստում Արցախի հայապատկանությունն ապահովելու նկատառումներով: Սակայն անկախությունը արցախահայության ինքնորոշման իրավունքի մարտավարական, ընթացիկ իրացումն է: Որևէ հայի մոտ չի կարող անգամ կասկած լինել, առ այն, որ ապագայում այդ իրավունքի իրացումը տրամաբանորեն ենթադրելու է վերամիավորում Մայր հայրենիքին: Իսկ մինչ այդ մենք պետք է ամեն կերպ ամրապնդենք Արցախի պետականությունը, քանզի

առանց Արցախի հայոց պետականություն լինել չի կարող:

Հետևաբար՝ հարկավոր է հրաժարվել «Ղարաբաղ – Հայաստան» արհեստական հակադրությունից: Զ՛ի կարելի Արցախը ներկայացնել իբրև Հայաստան հայրենիքից դուրս գտնվող առանձին միավոր: Արցախի անկախությունը չպետք է հանգեցնի հայոց հավաքական «մենք»-ի և արցախահայության խզմանը, հայոց «մենք»-ից Արցախի օտարմանը: Մեզանում Արցախի անկախությունը չպետք է ընկալվի իբրև անկախություն մայր հայրենիքից, իբրև Հայաստանի, հայության հետ կապ չունեցող օտար մի տարածք:

Հայաստան հայրենիքը մեկն է: Որքան էլ որ տարօրինակ թվա, այս պարզ ճշմարտությունը հանրային ընկալումներում կրկին ու կրկին ամրապնդելու կարիք կա: Հետևաբար՝ հայոց երկու պետությունների փոխհարաբերություններին անդրադառնալիս հարկավոր է կիրառել «Հայաստանի Հանրապետություն», «Արցախ» տեղանունները, որով հանրային ընկալումներում ամրապնդվում է «մեկ ազգ, մեկ հայրենիք՝ երկու պետություն» իրողությունը: Այս կերպ մենք ընդգծում ենք, որ խոսքը երկու տարբեր պետությունների մասին է, բայց ո՛չ երբեք տարբեր հայրենիքների, քանզի մեր օրերի հայապատկան Հայաստան հայրենիքը բաղկացած

Որևէ հայի մոտ չի կարող անգամ կասկած լինել, առ այն, որ ապագայում այդ իրավունքի իրացումը տրամաբանորեն ենթադրելու է վերամիավորում մայր հայրենիքին: Իսկ մինչ այդ մենք պետք է ամեն կերպ ամրապնդենք Արցախի պետականությունը, քանզի առանց Արցախի հայոց պետականություն լինել չի կարող:

Հայոց երկու պետությունների փոխհարաբերություններին անդրադառնալիս հարկավոր է կիրառել «Հայաստանի Հանրապետություն», «Արցախ» տեղանունները, որով հանրային ընկալումներում ամրապնդվում է «մեկ ազգ, մեկ հայրենիք՝ երկու պետություն» իրողությունը: Այս կերպ մենք ընդգծում ենք, որ խոսքը երկու տարբեր պետությունների մասին է, բայց ո՛չ երբեք տարբեր հայրենիքների, քանզի մեր օրերի հայապատկան Հայաստան հայրենիքը բաղկացած է երկու բաղադրիչներից՝ Հայաստանի Հանրապետությունից և Արցախից:

է երկու բաղադրիչներից՝ Հայաստանի Հանրապետությունից և Արցախից:

Հաջորդ նկատառումը, որը խիստ հրատապ է, Արցախի որոշ բնակավայրերի հայերեն անվանումների հանրայնացումն է: Ասվածի համատեքստում տեղին է կատարել հետևյալ հարցադրումը. օբյեկտիվորե՞ն են արդյոք ներկայացված ներկայիս արցախյան իրողությունները հայկական լրատվական դաշտում: Այսպիսի հարցադրումն առաջին հայացքից կարող է թվալ տարօրինակ, սակայն միայն առաջին հայացքից: Իրականում այստեղ խնդիր կա: Բանն այն է, որ հաճախ հայրենի լրատվամիջոցներով Արցախի որոշ բնակավայրեր իրենց ներկայիս հայերեն անվանումների փոխարեն, մեր հանրությանը ներկայացվում են նախկին՝ թուրքերեն անվանումներով: Ավելին՝ այս խնդրին երբեմն կարելի է հանդիպել անգամ պաշտոնական գրագրության մեջ: Եվ դա այն դեպքում, երբ այդ բնակավայրերը անվանափոխված են պաշտոնապես:

Արցախյան ազատամարտի արդյունքում ազատագրվեց հայոց հայրենիքի մի մասը, որի վրա վերջին տասնամյակներին խորհրդային Ադրբեջանի իշխանությունները հիմնել էին բազմաթիվ թրքանուն բնակավայրեր, որտեղ բնակեցրել էին անդրկովկասցի թուրքերի: Արցախյան շարժման սկզբին՝ 1988-ի դրությամբ խորհրդային Ադրբեջանի իշխանությունները ԼՂԻՄ-ի շուրջ ձևավորել էին թրքաբնակ բնակավայրերի կենդանի շղթա, որով բառիս բուն իմաստով օղակել էին հայկական ինքնավարությունը: Բնականաբար, այդ ամենն Արցախն աստիճանաբար հայաթափելուն նպատակաուղղված քաղաքականություն էր: Պատերազմի տարիներին այդ բնակավայրերը վերածվեցին ադրբեջանական զինուժի հենակետերի և պատերազմի տրամաբանության համաձայն՝

ուչնչացվեցին Արցախի ինքնապաշտպանության ուժերի կողմից, իսկ թուրք բնակչությունը՝ իր ղեկավարության ագրեսիվ արկածախնդրության ակտիվ մասնակիցը, պարտված ադրբեջանական ուժերի հետ միասին լքեց դրանք: Հատկապես շեշտենք այն, որ ներկայիս Արցախի տարածքում եթե անդրկովկասցի թուրքեր չկան, ապա դա հենց Ադրբեջան պետության մեղքն է, քանզի հենց նրա սանձազերծած ագրեսիայի պատճառով են նրանք ստիպված եղել լքել Արցախի տարածքը: Ընդ որում՝ այդ բնակչության մի մասը, մասնակից լինելով Արցախի դեմ ռազմական գործողություններին, շրջափակմանը, եղել է հակամարտության կողմ՝ այս կամ այն չափով:

Արդեն հետպատերազմյան շրջանում մի քանի տասնամյակի պատմություն ունեցող այդ բնակավայրերը ինտեգրվեցին Արցախ պետությանը: Այսօր նախկին ԼՂԻՄ-ից դուրս գտնվող հայկական տարածքները, որոնք ազատագրվել են Արցախյան ազատամարտի ընթացքում ներկայումս կազմում են Արցախի անբաժանելի մասը՝ համաձայն հայոց երկրորդ պետության սահմանադրության: Ըստ այդմ՝ Արցախի կառավարությունը մայր հայրենիքին այդ տարածքների վերաինտեգրմանը տվել է հետևյալ վարչատարածքային տեսքը. նախկին Ադրբեջանական ԽՍՀ Քելբաջարի շրջանը և ադրբեջանական զորքերի կողմից ներկայումս օկուպացված Շահումյանի շրջանը միավորվել են համանուն մեկ շրջանի մեջ: Իսկ որպեսզի լինենք առավել ճշգրիտ, ապա նախկին Խորհրդային Ադրբեջանի Քելբաջարի շրջանը ներկայումս կազմում է Արցախի Շահումյանի շրջանի հարավարևմտյան հատվածը: Շահումյանի շրջանի շրջկենտրոնը Քարվաճառն է: Ադրբեջանական ԽՍՀ նախկին Լաչինի, Կուբաթլուի, Ջանգելանի

շրջանները, ինտեգրվելով Արցախ պետությանը, ներկայումս միավորվել են մեկ վարչատարածքային միավորի մեջ և կազմում են Արցախի Քաշաթաղի շրջանը՝ Բերձոր շրջկենտրոնով: Ադրբեջանական ԽՍՀ նախկին Ջաբրայիլի շրջանը և Ֆիզուլիի շրջանի մի մասը միավորվել են Արցախի Հանրության շրջանին: Ֆիզուլիի շրջանի մյուս մասը միավորվել է Մարտունու շրջանին: Խորհրդային Ադրբեջանի նախկին Աղդամի շրջանը բաժանվել է Արցախի Մարտակերտի, Ասկերանի և Մարտունու շրջանների միջև, իսկ նախկին Աղդամին՝ Ակնային, տրվել է Ասկերան քաղաքի արվարձանի կարգավիճակ: Հիմնվելով հենց այդ հանգամանքի վրա՝ Արցախի կառավարության որոշմամբ նախկին թրքանուն բնակավայրերը վաղուց է, ինչ անվանափոխվել են և կամ վերականգնել իրենց նախկին անվանումները: Այստեղ տեղին է հիշեցնել, որ նախկին Աղդամը վերանվանվել է **Ակնա**, նախկին Ջաբրայիլը՝ **Մեխակավան**, նախկին Ջանգելանը՝ **Կովսական**, նախկին Կուբաթլուն՝ **Որոսան**, նախկին Լաչինը՝ **Քերձոր**, նախկին Քելբաջարը՝ **Քարվաճառ**:

Ահա այսպիսի վարչատարածքային կառուցվածքով է այսօր զարգանում Արցախ պետությունը:

Շրջանառության մեջ դնելով արցախյան բնակավայրերի հայերեն անվանումները թե՛ մեր երկրում, թե՛ երկրից դուրս, մենք է՛լ ավելի կամրապնդենք Արցախի հայապատկան լինելու անշրջելիությունը:

Այսպիսին են ներկայիս արցախյան իրողությունները: Ի դեպ, խնդիր ունի նաև քաղաքական ենթատեքստ: Շրջանառության մեջ դնելով արցախյան բնակավայրերի հայերեն անվանումները թե՛ մեր երկրում, թե՛ երկրից դուրս մենք է՛լ ավելի կամրապնդենք Արցախի հա-

յապատկան լինելու անշրջելիությունը:

Սակայն մեզանում հաճախ կիրառվում են այդ բնակավայրերի նախկին՝ թուրքերեն, անվանումները:

րը. հարց է ծագում՝ ինչու¹⁰: Անտեղյակության արդյունք է, թե՞ իռացիոնալ վախվորածության: Առավել քան ակնհայտ է, որ իրերի նման դրությունն ուղղակիորեն սպառնում է մեր երկրի հոգեբանական – տեղեկատվական անվտանգությանը:

Հարկ է հստակ գիտակցել. ազատագրված Արցախի որոշ բնակավայրերի նախկին թրքաճյուղներին կիրառությունը հայաստանյան հանրային գիտակցության մեջ օտարում է այդ բնակավայրերը «մեր»-ի, «հայկականի» տիրույթից: Տպավորություն է ստեղծվում, թե այդ բնակավայրերը հայոց հավաքական «մենք»-ի հետ կապ չունեն: Եթե այս կերպ շարունակվի, ապա հայաստանյան հանրային ընկալումներում այդ բնակավայրերը կարող են աստիճանաբար նույնանալ «օտարի» հոգեբանական տիրույթի հետ: Այսինքն՝ առկա է հայաստանյան հանրության մոտ Հայաստան հայրենիքի ամբողջական, օբյեկտիվ ընկալումների աղճատման վտանգ:

Առավել քան ակնհայտ է, որ հայապատկան և դարեր շարունակ հայաբնակ տարածքներում Հայաստան հայրենիքում, խորհրդային Ադրբեջանի կողմից մի քանի տասնամյակ առաջ հիմնած բնակավայրերը հայոց համար չեն կարող լինել օտար: Հարկ է հիշել նաև, որ նախկին ԼՂԻՄ-ին հարակից հայկական տարածքները բռնի կերպով հայաթափվել են 1918-1920 թվականներին, իսկ անդրկովկասցի թուրքերով ինտենսիվ բնակեցվել արդեն խորհրդային տարիներին:

Հարկ է հիշել. այսօր Արցախի բոլոր բնակավայրերը հայանուն են և հայաբնակ: Սակայն, որպեսզի այդպիսին մնան նաև հետայսու, հարկավոր է հայաստանաբնակ հայության հանրային գիտակցության մեջ ամրապնդել դրանց հայերեն անվանումները, եթե իհարկե ցանկանում ենք, որ Արցա-

խի հանդեպ յուրաքանչյուր հայ ունենա տիրոջ զգացողություն, այն ընկալի իբրև հող հայրենի: Ի դեպ, սա ընդամենը ժամանակի խնդիր է: Չէ՞ որ այսօր մեզանում արդեն ոչ ոք Ծաղկածորի փոխարեն չի ասում «Դարաչիչակ», «Վարդենիսի» փոխարեն՝ «Բասարզեչար»:

Եվ ուրեմն հարկ է բացառել այս բնակավայրերի նախկին թուրքերեն անվանումների կիրառությունը և՛ պաշտոնական գրագրության մեջ, և՛ լրագրության ոլորտում: Ավելին՝ հասարակական-պետական գործիչները, լրագրողները պետք է հանրայնացնեն այս բնակավայրերի հայերեն անվանումները: Ի վերջո՝ հարկավոր է հարգել Արցախի կառավարության որոշումները, որոնք հիմնված են արցախահայության հավաքական կամքի վրա: Տեղին է հիշեցնել, որ այդ՝ մայր հայրե-

Եվ քանի որ անդրկովկասցի թուրքերի վերադարձն Արցախ պարզապես նշանակում է նոր հակամարտություն, և այդ իսկ պատաճով ժխտելի է ի սկզբանե, իսկ հայ փախստականների վերադարձն Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքներ՝ պարզապես անհնարին, ապա՝ ադրբեջանահայության փոխհատուցման միակ հնարավոր ձևն Արցախի Հանրապետության ներկա տարածքում նրանց գոյությունն իբրև իրավաքաղաքական իրողություն լեգիտիմիզացնելն է:

նիքին վերախնտեգրված տարածքներում բնակություն են հաստատել Ադրբեջանից տեղահանված մեր հայրենակիցները: Եվ քանի որ անդրկովկասցի թուրքերի վերադարձն Արցախ պարզապես նշանակում է նոր հակամարտություն, և այդ իսկ պատաճով ժխտելի է ի սկզբանե, իսկ հայ փախստականների վերադարձն Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքներ՝ պարզապես անհնարին, ապա՝ ադրբեջանահայության փոխհատուցման միակ հնարավոր ձևն Արցախի Հանրապետության ներկա տարածքում նրանց գոյությունն իբրև իրավաքաղաքական

իրողություն լեգիտիմիզացնելն է:

Հաջորդ եզրույթը, որին կանդրադառնանք

ստորև, հետևյալն է՝ «Արցախի սահմանադրորեն անրագրված տարածքներ»: Տարիներ շարունակ մեզանում տիրում է կատարյալ տերմինաբանական շփոթ այն հարցի շուրջ, թե ինչպե՞ս անվանել նախկին ԼՂԻՄ-ից դուրս գտնվող և հայկական զինուժի կողմից վերահսկվող տարածքները: Այս առումով ադրբեջանական դիվանագիտությունը, լինելով առավել ակտիվ և նախաձեռնող, ստեղծեց «Օկուպացված տարածքներ» եզրույթը: Չավելշտականն այն է, որ վերջինս մերթնդներթ կիրառվում էր նաև հայաստանյան փորձագիտական և լրագրողական շրջաններում՝ «գրավված տարածքներ» ձևով: Ի հակադրություն վերջինիս՝ ներմուծվեց և աստիճանաբար իր ուղին հարթեց «ազատագրված տարածքներ» եզրույթը, որով ընդգծվում էր ոչ միայն նախկին ԼՂԻՄ սահմաններից դուրս գտնվող և ԼՂՀ Պաշտպանության բանակի կողմից վերահսկվող տարածքների պատմականորեն հայապատկան լինելը, այլև Արցախի ինքնապաշտպանության ուժերի կողմից այդ տարածքները վերահսկելու հանգամանքի համապատասխանությունը միջազգային իրավաքաղաքական իրողություններին:

Մեր հանդամամբ, սակայն, ոչ «ազատագրված տարածքներ» և ոչ էլ առավել ևս «ԼՂՀ շուրջ ձևավորված անվտանգության գոտի» եզրույթներն այլևս ճշգրիտ չեն արտահայտում արցախյան իրականությունն այն պարզ պատճառով, որ դրանք կրում են այդ տարածքներն Արցախին չպատկանելու, դրանց վիճահարույց լինելու ենթատեքստը: Մանրամասները:

Մենք հաղթել ենք մեզ պարտադրված պատերազմում և ագրեսիայի ենթարկված կողմից վերածվել ենք ագրեսորին պատժող, հաղթող կողմի, ինչը պետք է հստակորեն արտահայտված լինի Ադրբեջանի ագրեսիայի ձախողման արդյուն-

քում ձևավորված իրողություններն արտահայտող եզրույթներում: Կրկին ընդգծենք՝ նախկին ԼՂԻՍ սահմաններից դուրս գտնվող հայկական տարածքներն ադրբեջանական բանակի համար ծառայել են իբրև արցախահայության դեմ ագրեսիայի ռազմահենադաշտ և ազատագրվել են արցախահայությանը պարտադրված պատերազմում: Եվ ամենակարևորը. այդ տարածքները ներկայումս ԼՂՀ սահմանադրությամբ հռչակված են որպես նրա բաղկացուցիչ մաս: Հետևաբար՝ ներկայիս Արցախի Հանրապետությունը նախկին ԼՂԻՍ-ը չէ: Արցախն իբրև պետականություն կայանում է ոչ միայն նախկին ԼՂԻՍ սահմաններում, այլև դրանցից դուրս: Այն, ինչ մենք կոչում ենք «ազատագրված», իսկ թշնամին՝ «օկուպացված» տարածքներ, վաղուց է, ինչ ինտեգրված են Արցախին: Հետևաբար՝ ներկայիս Արցախը նույնական չէ ԼՂԻՍ-ի հետ, մերօրյա Արցախի սահմանները ԼՂԻՍ-ի սահմանները չեն, ներկայիս Արցախը չի սահմանափակվում ԼՂԻՍ տարածքով: Քանի որ այսօր այն տարածքները, որոնք որակվել են որպես «ազատագրված», «ԼՂԻՍ-ին հարակից» կամ «անվտանգության գոտի», իրականում Արցախի սահմանադրությամբ հռչակված են իբրև հայոց երկրորդ պետության անբաժանելի մաս և, ինչպես վերը նշեցինք, կազմում են Արցախի Հանրապետության հինգ վարչական միավորների՝ Շահումյանի, Քաշաթաղի, Հադրուբի, Ասկերանի և Մարտունու շրջանների մասը, անորոշության տեղ այլևս չկա: Այսպես կոչված «անվտանգության գոտու» կամ «ազատագրված տարածքների» իրավական պատկանելիությունն Արցախին այլևս անվիճարկելի է: Անտրամաբանական է ներկայիս Արցախի Հանրապետության տարածքը նախկին ԼՂԻՍ-ի տարածքի հետ նույնացնելը: Ներկա իրավաքաղաքական իրողություննե-

րի պայմաններում գոյություն ունի ազատագրված 11432 քառ. կմ հայկական տարածք, որի վրա տարիներ շարունակ կայացել է երկրորդ հայկական պետությունը:

Ընդ որում՝ Արցախի իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ խնդրի կարգավորումից հետո միջազգայնորեն ճանաչված Արցախը չի լինելու ԼՂԻՄ սահմաններում: Իսկ թե ինչպիսի՞ն կլինեն այդ սահմանները ենթադրյալ խաղաղության պայմանագրից հետո, այսօր ոչ ոք ասել չի կարող: Եվ եթե երբևէ գա այն օրը, երբ Ադրբեջանի քաղաքական վերնախավը համարձակություն ունենա հաշտվել անկախ Արցախի գոյության անխուսափելիության հետ, ապա այդ դեպքում միայն կարող է խոսք լինել Արցախի և Ադրբեջանի պետական սահմանների ճշգրտման մասին՝ բնականաբար Արցախի օկուպացված շրջանների վերադարձի համատեքստում:

Պետք է իրատես լինել. կարգավորում ասվածն այսօր այնքան անիրական է, այնքան հեռու, որ խոսել միջազգայնորեն ճանաչված Արցախի վերջնական սահմանների մասին պարզապես լուրջ չէ: Հատկապես ընդգծենք, որ ադրբեջանական քաղաքական դաշտում չկա գեթ մեկ քաղաքական գործիչ, որն ընդուներ ստեղծված իրողությունները: Այս առումով թե՛ ալիևյան վերնախավը, թե՛ ադրբեջանական ընդդիմությունը նույն ագրեսիվ մաքսիմալիստական դիրքորոշումների կրողն են, ինչը անհնարին է դարձնում խնդրի կարգավորումը տեսանելի հեռանկարում:

Հետևաբար՝ **չկան ազատագրված սարածֆներ**, կա **ազատագրված Արցախ** և վերջ: Ներկայիս

Ներկա իրավաքաղաքական իրողությունների պայմաններում գոյություն ունի ազատագրված 11432 քառ. կմ հայկական տարածք, որի վրա տարիներ շարունակ կայացել է երկրորդ հայկական պետությունը:

Չկան ազատագրված սարածֆներ, կա **ազատագրված Արցախ** և վերջ:

իրավաքաղաքական իրողությունների տեսակետից ազատագրված պետք է համարել թե՛ Քարվաճառը, թե՛ Շուշին, թե՛ Ստեփանակերտը, թե՛ Կովսականը (Ջանգելան) և թե՛ Արաքսի հովիտը: Հետևաբար, նշելու համար նախկին ԼՂԻՄ սահմաններից դուրս գտնվող Արցախի հատվածը՝ նպատակահարմար է կիրառել «Արցախի սահմանադրորեն ամրագրված տարածքներ» եզրույթը: «Արցախի սահմանադրորեն ամրագրված տարածքներ» կամ պարզապես համապատասխան վարչատարածքային միավորի անունը շեշտելն առավել ամբողջական է արտահայտում տարածաշրջանում ձևավորված աշխարհաքաղաքական իրողությունները, ի ցույց դնում իր ողջ՝ 11432 քառ. կմ տարածքի վրա Արցախի օրինական իշխանության կողմից արդյունավետ վերահսկողություն իրականացնելու հանգամանքը: Հարկ է հատուկ ընդգծել, որ արտաքին քաղաքական հարթակներից զատ այս եզրույթն անհրաժեշտ է հետևողականորեն տարածել նաև հայաստանյան հանրության շրջանում՝ հայության ընկալումներում ամրապնդելու համար Արցախի իրական տարածքի մասին պատկերացումը: Հետևաբար՝ հարկավոր է հարգել հայոց երկրորդ պետության սահմանադրությունը, արցախահայության հավաքական կամքը:

Այստեղ հարկ է նշել հետևյալը. բնական է, որ Արցախի սահմանադրորեն ամրագրված տարածքներին վերաբերող այս իրողություններն առաջմ ընդունելի չեն միջազգային կառույցների կողմից: Միջազգային կառույցների համար ընդունելի չէ նաև Արցախում ընթացող պետական շինարարության գործընթացը, առհասարակ Արցախը՝ իբրև անկախ պետություն, սակայն ի հեճուկս նման վերաբերումունքի՝ արցախյան պետականությունը հաստատուն քայլերով ամրապնդվում է: Առնվազն

զավեշտական է, որ արևմտյան ժողովրդավարության արժեհամակարգին խորթ զարգացումների արդյունքում սեփական իշխանության հարատևությունն ապահոված ալիևյան կլանի լեզիտիմությունն ընդունող միջազգային կառույցները չեն ճանաչում Արցախի խորհրդարանական ընտրությունները: Իր պետականության կազմակերպվածությամբ Ադրբեջանին, մեղմ ասած, ոչնչով չզիջող Արցախը պարզապես չի կարող երբևէ հայտնվել այդ երկրի կազմում: Աշխարհում դժվար է գտնել մի ժողովուրդ, որն իր պետականության վերելքի պայմաններում հրաժարվեր դրանից և կամավոր կերպով իրեն դներ թշնամուց ստրկական կախվածության մեջ: Հետևաբար՝ Արցախի սահմանադրորեն ամրագրված տարածքների վերաբերյալ միջազգային կառույցների ժխտողականությունը նույնպես չպետք է խոչընդոտի մեզ թե՛ ներքին և թե՛ արտաքին լսարաններում գործածության մեջ դնել իրականությունն օբյեկտիվորեն արտահայտող այս եզրույթը: Հատկապես ընդգծենք, որ վերջինս չի կարող բացասաբար ազդել բանակցային գործընթացի վրա այն պարզ պատճառով, որ դրա ներմուծմամբ ադրբեջանական կողմի դիրքորոշումներն առավել անզիջուն և կոշտ չեն դառնա, քան հիմա: Առավել ծայրահեղ և անզիջուն դառնալու տեղ դրանք պարզապես չունեն, քանզի ներկայիս ադրբեջանական հանրային ընկալումներում, հատկապես շեշտենք, ոչ միայն պաշտոնական, այլ հենց հանրային ընկալումներում «օկուպացված տարածքներ» եզրույթը վերաբերում է Արցախին ամբողջապես՝ նախկին ԼՂԻՄ-ի տարածքը ներառյալ:

Այս առումով պակաս կարևոր չէ նաև մեզանում Արցախի սահմանադրորեն ամրագրված տարածքը ճշգրիտ արտահայտող քարտեզների համա-

տարած շրջանառության մեջ դնելը: Երիտասարդ սերնդի մոտ հայրենաճանաչության, հայրենիքի տարածքի աղեկվատ ընկալման առումով սա շատ կարևոր և ուշացած քայլ էր, քանզի սիրել հայրենիքը, այն պաշտպանելու պատրաստակամություն ունենալ հնարավոր է միայն այն ճանաչելուց հետո, նրա տարածական պատկերը հստակորեն պատկերացնելուց հետո:

Այս համատեքստում հատկանշական է «ԼՂՀ օկուպացված տարածքներ» եզրույթը, որը հայկական դիվանագիտությունը, ի դեմս փոխարտգործնախարար Շ. Քոչարյանի, արդեն դրել է շրջանառության մեջ: Այն վերաբերում է դեռևս Ադրբեջանի օկուպացիայի տակ գտնվող Արցախի տարածքներին: Հարկավոր է առավելագույն հետևողականություն վերջինս տարբեր միջազգային կառույցներում կիրառության մեջ դնելու, և այն «Ադրբեջանի օկուպացված տարածքներ» եզրույթին հակադրելու նպատակով:

3.4.3. Հոգեբանորեն դասրաս դառել հայաստանյան հասարակությունը ադրբեջանական հավանական ազրեսիային

Թուրք-ադրբեջանական նոր ազրեսիան կանխելու միակ ուղին այդ ազրեսիային պատրաստ լինելն է, նաև՝ հոգեբանորեն պատրաստ լինելը: Հայությունը պետք է գիտակցի, որ ապրում է ընդամենը հրադադարի պայմաններում:

Թուրք-ադրբեջանական նոր ազրեսիան կանխելու միակ ուղին այդ ազրեսիային պատրաստ լինելն է, նաև՝ հոգեբանորեն պատրաստ լինելը: Հայությունը պետք է գիտակցի, որ ապրում է ընդամենը հրադադարի պայմաններում: Հավանական պատերազմին հայաստանյան հանրույթին հոգեպես նա-

խապատրաստելը Հայաստանի անվտանգության ապահովման առաջնահերթություններից է և պետք

է իրականացվի շարունակաբար:

Բանն այն է, որ պատերազմում հաղթելու արդյունքում մինչև վերջերս ադրբեջանական վտանգի հանդեպ մեր երկրի, հատկապես Երևանի բնակչության զգոնությունը բթացել էր: Հասարակության մի ստվար հատված անտարբերությամբ էր համակված պատերազմի վերսկսման հավանականության հանդեպ և այլևս չէր ընկալում այդ վտանգը որպես այդպիսին: Այս ամենը հուշում էր հասարակության մի մասի մոտ զգոնության թուլացման, ռազմական հնարավոր իրադրությանը հոգեպես անպատրաստ լինելու մասին, ինչը եապես սպառնում էր մեր երկրի պաշտպանունակությանը: Մինչդեռ անգամ այդ ժամանակ կասկածից վեր էր, որ տանուլ տվածը ռազմական ճանապարհով հետ վերադարձնելու ռևանշիստական նպատակները դեռ երկար չեն լքելու ադրբեջանական քաղաքական շրջանակներին, ուստի՝ Բաքվի ցանկացած ղեկավարություն միշտ պատրաստելու է բանակը, երկիրը պատերազմի: Այս իրողությունը մեր հայրենակիցներից շատերը պարզապես չէին ընկալում: Այս տարիներին մեր հասարակությունն աստիճանաբար հարմարվեց հրադադարի պայմաններում ապրելուն: Սակայն խնդիրն այն է, որ նմանօրինակ հարմարումը ստացել էր որոշակի ախտաբանական երանգ, քանզի այն արդյունք էր իրականության աղճատված ընկալման: Այստեղ գործ ունենք **իրականության ժխտում** կոչվող հոգեբանական պաշտպանական մեխանիզմի խմբային դրսևորման հետ, որը մեր հայրենակիցներից ոմանց մոտ ծայրահեղ, որոշ դեպքերում ախտաբանականի հասնող դրսևվորումներ էր ընդունել: Իրականության ժխտման էությունն այն է, որ մարդ կարծես չի նկատում, չի գիտակցում իրեն սպառնացող վտանգը, ինչի արդյունքում նրա հոգեկանը զերծ է մնում տազնապից:

Այս ամենը, ի վերջո, հանգեցնում է իրականությունից կտրվելուն, ստեղծված իրականությանը ոչ համարժեք գործողություններ ձեռնարկելուն: Իսկ ինչպես հայտնի է, թե՛ անհատական, թե՛ խմբային մակարդակներում հոգեկան լիարժեք առողջության չափանիշն իրականության համարժեք ընկալումն ու այնպիսի գործունեության ծավալումն է, որի արդյունքում առկա պրոբլեմը լուծվում է, վտանգը՝ վերանում: Ուստի՝ հասարակության մեջ իրականության ժխտմամբ առաջնորդվող մարդկանց ստվար խմբի առկայությունը հուշում է այդ հասարակության՝ հոգեպես անառողջ լինելու մասին: Մեր հայրենակիցներից շատերին թվում էր, թե եթե իրենք չցանկանան պատերազմ, այն չի լինի: Տվյալ դեպքում տպավորությունն այնպիսին էր, թե մենք, որ այդ հնարավոր պատերազմում հարձակման ենթարկվող և պաշտպանվող կողմն ենք լինելու, հակառակորդի փոխարեն վճռում ենք, որ նա մեզ վրա չհարձակվի:

Այդպես էր մի տևական ժամանակ: Վերջին տարիներին սակայն այս պատկերը փոխվեց: Բաքվից հնչող անընդմեջ սպառնալիքները, պետական սահմանին իրավիճակի հետևողական ապակայունացումը թիկունքի բնակչության ընկալումներում ակտուալիզացրեցին Ադրբեջանից բխող վտանգի գիտակցումը: Այդուհանդերձ, չի կարելի ասել, թե ողջ վերը նշված խնդիրներն այսօր այլևս չկան: Այս առումով անելիք կա անընդհատ: Հարկավոր է թույլ չտալ, որպեսզի հայաստանյան հանրության ընկալումներում թուրքական վտանգի զգացումը մեղմվի, այդ վտանգի հանդեպ զգոնությունը բթանա: Եվ ամենակարևորը՝ հարկավոր է ամրապնդել հաղթելու վստահությունը մեզանում՝ հաշվի առնելով ադրբեջանական քարոզչական ներգործության անընդհատ բնույթը:

Մեր երկրին սպառնացող արտաքին վտանգը կրուն և կրելու է անընդհատ բնույթ: Այս իրողության անխուսափելիության հստակ գիտակցումն է, որ պետք է ընկած լինի մեր պետականության, ողջ հանրային կյանքի կազմակերպման հիմքում: Պատերազմի վերսկսմանը հոգեբանորեն պատրաստ լինելը, թշնամուն դիմակայելու հայաստանյան հանրության պատրաստակամության հոգեվիճակն այն կանխելու, իսկ դեպքերի անցանկալի զարգացման դեպքում՝ հաղթանակի հիմնական հոգեբանական ռեսուրսներից է: Եվ ընդհակառակը. այդ պատրաստակամության բացակայությունը հայոց պետականությունը թուլացնող գործոն է, հետևաբար նաև պատերազմի վերսկսման պայմաններից մեկը, քանզի հարձակվում են խոցելի, ազդեցիկ համար մատչելի երկրի վրա: Հետևաբար՝ անհրաժեշտ է մեր հասարակության շրջանում ձևավորել հետևյալ դիրքորոշումները. առաջին՝ *ռազմական գործողությունների վերսկսումը մեծադեմ հավանական է, և երկրորդ՝ Ադրբեյջանից բխում է սղառնալիք, նրա թեմանական կեցվածքը կայուն է և սևական:* Այդ նպատակով հարկավոր է անընդհատ լուսաբանել պետական սահմանին առկա իրավիճակը՝ սահմանից այն կողմ բխող վտանգը՝ զուգահեռաբար, սակայն, ցուցադրելով այդ վտանգը չեզոքացնող ուժը՝ ի դեմս հայոց բանակի դիրքապահ ստորաբաժանումների:

Հարկավոր է հատկապես շեշտել, որ խոսքը մոտակա պատերազմի հավանականությամբ հասարակությանն անընդհատ, տևական լարված անորոշության մեջ պահելու մասին չէ, ինչը լուրջ սթրես է և իսկապես կարող է կազմալուծել մեր հասարակության բնականոն կենսագործունեությունը: Խնդիրը վտանգը սթափ գնահատել կարողանալու և դրան դիմակայելուն պատրաստ

լինելու մասին է: Ցանկացած պետության կենսունակության հոգեբանական գրավականներից մեկն այն արագությունն է, որով հասարակությունը համախմբվում, մոբիլիզացնում է արտաքին վտանգին դիմակայելու համար: Որքան արագ հնարավորինս մեծ թվով մարդիկ խաղաղ քաղաքացիական կենսակերպից անցնեն ռազմական կենսակերպի՝ համալրելով գործող բանակի շարքերը, այնքան ավելի մեծ կլինի թշնամու բլիցկրիգի ձախողման հավանականությունը: Ադրբեջանից բխող վտանգի առողջ զգացողության գիտակցումը պոտենցիալ վտանգի դեպքում հասարակության համախմբման կարևոր նախադրյալներից է: Վստահաբար կարելի է ասել. թշնամին չի դիմի արկածախնդրության, եթե համոզված լինի, որ հայությունը շատ արագ կբռնկնի:

Հարկ է նշել, որ հենց նման պատրաստակա-նության վիճակում է տասնամյակներ շարունակ ապրում, օրինակ, իսրայելյան հասարակությունը, որն իրեն ուժեղ է զգում ոչ թե պատերազմի հավանականությունը կուրորեն ժխտելով, այլ իր թշնամիների հանդեպ ռազմական, տնտեսական գերազանցություն ապահովելով: Իսրայելի պարագայում արտաքին վտանգը ոչ թե բարոյալքում է հասարակությանը, այլ էթնոսի ուժերը մոբիլիզացնելու և այն դեպի արդյունավետ պետական շինանարարություն ուղղորդելու լուրջ խթանի է վերածվում: Կայուն թշնամական միջավայրում Իսրայելի կենսունակության գրավականներից մեկն այն է, որ այս երկրի հասարակությունը ունակ է խաղաղ, ստեղծագործ կենսակերպից շատ արագ անցնել ռազմականացված կենսակերպի: Այդ է պատճառը, որ անհրաժեշտության դեպքում Իսրայելի Պաշտպանության բանակի շարքերը շատ արագ համալրվում են ռեզերվիստներով:

Ի դեպ, իսրայելցի մասնագետները ներմուծել են «երկրի բարոյահոգեբանական դիմադրողականություն» եզրույթը: Մեր նպատակն է հրադարհարի ժամանակաշրջանում առավելագույնս ամրապնդել այդ դիմադրողականությունը: Մասնավորապես՝ հնարավոր պատերազմի առաջին օրերին հակառակորդի հարվածը կասեցնելու, տարածքային կորուստները կանխելու գրավականը երկրի ռեսուրսների արագ մոբիլիզացիան է: Իսկ վերջինս հնարավոր է այն դեպքում, եթե հնարավորինս մեծ թվով Հայաստանի քաղաքացիներ հոգեբանորեն պատրաստ լինեն խաղաղ առօրյայից անցնել ռազմական կենսակերպի: Իսկ դրա համար բնակչությանը հարկավոր է հոգեբանորեն պատրաստել արդեն այսօր. հնարավոր պատերազմը մեր հանրության համար անակնկալ չպետք է լինի: Այդ նպատակով հատկապես կարևոր է հանրության մոտ ակտիվ պահել վտանգի առողջ, իրատեսական զգացումը՝ զուգահեռաբար ձևավորելով հակառակորդին ցանկացած պահի դիմակայելու պատրաստականության հոգեվիճակ: Նման պայմաններում պատերազմ թույլ չտալու համար հարկավոր է զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի համար հայրենիքի պաշտպանությանը հոգեբանորեն պատրաստ քաղաքացիների մեծածավալ ռեզերվ ձևավորել: Ընդ որում՝ այդ ռեզերվը հարկավոր է ձևավորել հիմա՝ հարաբերական խաղաղության պայմաններում: Իսկ վերջինս հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ մեր հասարակության շրջանում առկա լինի արտաքին ագրեսիայի դեպքում համախմբվելու պատրաստականություն: Նման պատրաստականություն ակնհայտորեն առկա է Արցախում. գուցե այն պատճառով, որ այստեղ առավել քան Հայաստանի որևէ այլ հատվածում գիտակցում են այդ արտա-

քին վտանգը: Սակայն Արցախը մեր Հայաստան հայրենիքի մի մասն է միայն: Երկրի արդյունավետ պաշտպանության համար այդ պատրաստակամությունը պետք է առկա լինի նաև Հայաստանի այլ հատվածների բնակչության մոտ: Մասնավորապես

Անհրաժեշտ է Հայաստանի ողջ տարածքում ձևավորել կռվի բռնվելուն հոգեպես պատրաստ կրիտիկական զանգված՝ այդ կերպ պինդ պահելով Հայոց բանակի թիկունքը:

Մենք դատապարտված ենք զարգանալ մշտական արտաքին վտանգի պայմաններում, քանզի թուրք - ադրբեջանական տանդեմից Հայաստանին սպառնացող վտանգը լինելու է անընդհատ, և որ ավելի որակյալ խաղաղություն մենք չենք ունենալու տեսանելի հեռանկարում:

Երկրի պաշտպանունակության ամրապնդման նպատակով ձեռնարկվող միջոցառումները կարևոր են և անայլընտրանքային:

անհրաժեշտ է *Հայաստանի ողջ տարածքում ձևավորել կռվի բռնվելուն հոգեպես պատրաստ կրիտիկական զանգված՝ այդ կերպ պինդ պահելով Հայոց բանակի թիկունքը:* Այդ նպատակով անհրաժեշտ է հրադարի պայմաններում հայաստանյան հանրային գիտակցության մեջ ամրապնդել հետևյալ աներկբա ճշմարտությունները.

ա) մենք դատապարտված ենք զարգանալ մշտական արտաքին վտանգի պայմաններում, քանզի թուրք-ադրբեջանական տանդեմից Հայաստանին սպառնացող վտանգը լինելու է անընդհատ, և որ ավելի որակյալ խաղաղություն մենք չենք ունենալու տեսանելի հեռանկարում,

բ) երկրի պաշտպանունակության ամրապնդման նպատակով ձեռնարկվող միջոցառումների կարևոր և անայլընտրանքային լինելը:

Վերը նշվածի գիտակցումը մեզանում ունի կենսական նշանակություն: Հարկավոր է հետևողական քարոզչությամբ հայաստանյան հանրության գիտակցության մեջ ամրապնդել այս՝ տրամաբանորեն միմյանց փոխլրացնող դիրքորոշումները: Մեր երկրի պաշտպանունակության

ամրապնդումը որոշակի տնտեսական ծանրաբեռնվածություն է ենթադրում, ինչի հետևանքով սոցիալ-տնտեսական որոշ բարդություններն անխուսափելի են: Մեզանում հարկավոր է ամրապնդել այդ բարդություններին դիմակայելու հոգեբանական պատրաստականությունը: Երկու հակամարտ կողմերը գտնվում են յուրահատուկ հոգեբանական դիմակայունության վիճակում: Այդ դիմակայունությունը տանուլ կտա նա, ում «նյարդերը տեղի կտան» առաջինը, ում զրկանքներին դիմակայելու հոգեբանական ռեսուրսը կլինի անբավարար: Տվյալ դեպքում անհրաժեշտ է ամրապնդել ապագայի վերաբերյալ մեր հանրության իրատեսական պատկերացումները: Ձգձգվող, ըստ էության անընդհատ հակամարտության պայմաններում սա անհրաժեշտ է հնարավոր սոցիալ-տնտեսական զրկանքների հանդեպ դիմակայունության հոգեբանական ռեսուրս ձևավորելու համար:

Եվս մեկ կարևոր հանգամանք. հավանական պատերազմի մասին հանրությունը պետք է հստակ պատկերացում ունենա: Խոսքն այն անհրաժեշտ գործողությունների սցենարի մասին է, որ պետք է իմանա Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի ռազմական գործողությունների հնարավոր վերսկսման դեպքում: Դա թույլ կտա պատերազմի առաջին օրերին կանխել խուճապը և ապահովել մարդկանց կազմակերպված գործունեությունը:

Մեկ այլ կարևոր հանգամանք. հարկավոր է պատրաստ լինել կանխելու, պատերազմի վերսկսման վերաբերյալ տարաբնույթ ասեկոսեները, որոնք կարող են խուճապի մատնել բնակչությանը: Հարկ է հաշվի առնել, որ հրադադարը ստեղծում է ասեկոսեների տարածման համար նպաստավոր պայմաններ: Վտանգավորն այն է, որ մեզանում բարոյալքող ասեկոսեները կարող

են տարածվել ոչ միայն միջանձնային հաղորդակցության միջոցով, այլ հայտնվել մամուլի էջերում, այս կամ այն կայքում: Մեզանում մամուլի հիրավի անսահմանափակ ազատության պայմաններում նման հեռանկարը բնավ բացառված չէ:

Այս համատեքստում տեղին է արժարժել հետևյալ խնդիրը: Վերը մենք արդեն անդրադարձել ենք մեր հասարակության մի մասի շրջանում թշնամուն հաջողությամբ դիմադրելու հավանականության հանդեպ **թերահավատությանը**, սեփական ուժերի հանդեպ միանգամայն իռացիոնալ անվստահությանը: Հատկանշականն այն է, որ արցախյան պատերազմի թե՛ նախօրեին, թե՛ սկզբում, թե՛ ընթացքում և անգամ նրա հաղթական ավարտից հետո մեզանում չէին դադարում նման դիրքորոշումներ կրողների պարտվողական դատողությունները: Ոմանք այդպես էլ չէին պատկերացնում, որ հայը կարող է հաղթել իրենից ավելի շատ ռեսուրսներ և բնակչություն ունեցող Ադրբեջանին: Չէ՞ որ առ այսօր էլ արցախյան հաղթանակը ոմանց կարծիքով արտաքին օգնության արդյունք է: Նման դիրքորոշումը մեր էթնիկական հոգեկերտվածքում դարերի ընթացքում արմատացած ու սերնդեսերունդ փոխանցվող էթնիկական թերարժեքության դրսևորում է, կազմավորում, որը զգալիորեն կաշկանդում է ազգի դիմադրողական ներուժը: Դրա հաղթահարումը տևական ժամանակ է պահանջում և հնարավոր է միայն այն դեպքում, եթե հայ էթնոսի կյանքում գրանցվեն ռազմական, արտաքին քաղաքական, գիտական, մշակութային, տնտեսական և այլ կարգի նվաճումներ: Այս տեսակետից արցախյան հաղթանակը մեր հասարակության համար ունեցավ յուրահատուկ թերապևտիկ ազդեցություն, հայ հանրության շրջանում ամրապնդեց հավատը սեփական ուժերի հանդեպ, սակայն, ցա-

վրջ՝ ոչ բոլորի մոտ: Հայաստանյան հանրությունն այսօր ապահովության, պաշտպանված լինելու հիմնարար զգացման կարիքն ունի: Հատկապես ընդգծենք, որ ապահովության հիմնարար զգացումը երկրում բարոյահոգեբանական կայունության նախադրյալն է, առանց որի հրադադարի պայմաններում անհնարին է ապահովել երկրի հոգեբանական-տեղեկատվական անվտանգությունը: Որքան ավելի ամրապնդվի հայաստանյան հանրության մոտ ապահովության, պաշտպանված լինելու հիմնարար զգացումը, այնքան ավելի կնվազի թշնամու քարոզչական մանիպուլյացիաներին տրվելու հավանականությունը: Ապահովության հիմնարար զգացումն ամրապնդել նշանակում է կանխել հանրության շրջանում անհիմն տագնապների տարածումը, ինչի վտանգը հրադադարի պայմաններում առկա է անընդհատ: Հարկ է հստակ գիտակցել, որ հանիրավի տագնապները, սեփական ուժերի հանդեպ անհիմն թերահավատությունը նպաստում են զիջումների գնալու անառողջ, ըստ էության ինքնակործան դիրքորոշումների ձևավորմանը: Իսկ այդ ապահովության զգացումը ձեռք է բերվում աստիճանաբար: Այս առումով շատ կարևոր է բանակի մարտունակությունն ապացուցող կոնկրետ օրինակներ ի ցույց դնելը: Ընդ որում՝ որքան ավելի առարկայականորեն ամրապնդված լինեն այդ հավաստիացումները, այնքան ավելի հիմնավոր և ապացուցելի կընկալվեն դրանք հանրության կողմից:

Այս առումով շատ կարևոր է Հայոց բանակի զորավարժությունների լուսաբանումը: Բանն այն է, որ զորավարժություններով կարելի է ընդհանուր պատկերացում կազմել երկրի ռազմական ներուժի իրական պատկերի մասին: Այսպես կամրապնդի մեր ժողովրդի հավատը Հայոց բանակի հանդեպ,

վատահուքությունն առ այն, որ մենք ուժեղ ենք, ունակ պաշտպանվելու թշնամուց: Առհասարակ բանակը, պետական սահմանին տարվող մարտական հերթապահությունը, թշնամու դիվերսիոն խմբերի ոչնչացման յուրաքանչյուր դեպք, սահմանամերձ գյուղի առօրյան, այստեղի խաղաղ կյանքը, Արցախյան իրողությունները պետք է լինեն մեր լրատվամիջոցների անընդհատ ուշադրության կենտրոնում: Շատ կարևոր է նաև զորահանդեսների անցկացումը: Ջորահանդեսն ուժի ցուցադրություն է, երկրի տնտեսական ներուժի, ռազմական հզորության արտահայտություն: Այն հզոր երկրի քաղաքացի լինելու, պաշտպանված լինելու զգացողություն է հաղորդում մարդկանց: Ջուզահեռաբար հարկավոր է նաև մեր հասարակության շրջանում ադրբեջանական զինուժի հանդեպ իրատեսական պատկերացումներ ձևավորել՝ զերծ սեփական հնարավորությունները թերագնահատելու կամ գերագնահատելու ծայրահեղություններից:

Սույն համատեքստում կարևորագույն խնդիր է նաև ***ներքնիկական դառնակման միտումների կանխումը***: Օրվա հրամայականն է՝ ամրապընդել ազգային միասնականությունը՝ ***մեկ ազգ, մեկ հայրենիք, երկու դեռականություն*** կարգախոսի շուրջ: Մասնավորապես՝ հետևողական քարոզչությամբ հարկավոր է առողջացնել Արցախի հանդեպ հայաստանյան հանրության զորոշ հատվածի դիրքորոշումները, վճռականորեն կանխել բնակչության սոցիալ-տնտեսական դժգոհություններն Արցախի հետ կապելու ցանկացած փորձ: Դիվանագիտական նկատառումներից ելնելով՝ Արցախի անկախ պետականության կարգավիճակով հանդես գալը պատճառ դարձավ հայաստանցի-ղարաբաղցի էթնիկական տրոհման ու դրանից բխող պառակտիչ դիրքորոշումների ձևավորման հա-

մար: Արդյունքում՝ թե՛ Արցախում, թե՛ Հայաստանի այլ հատվածներում ոմանք Արցախն իսկապես ընկալեցին որպես «անկախ», Հայաստանից դուրս մի պետական միավոր: Այստեղ վտանգավորն այն է, որ ինչպես Արցախի, այնպես էլ Հայաստանի այլ շրջանների բնակչության մի մասի մոտ կարող են տեղի ունենալ ազգային ինքնագիտակցության խորքային փոփոխություններ, երբ արցախցիների մոտ հայ ազգի հետ սեփական նույնացման աստիճանաբար փոխարինի «ղարաբաղցի» հանրույթին նույնացումը, այսինքն նոր՝ հայ էթնոսից դուրս գտնվող «ղարաբաղցու» խմբային ինքնագիտակցության ձևավորմանը, իսկ Հայաստանի տարբեր շրջաններում, ընդհակառակը, արցախահայերին աստիճանաբար ընկալեն հայ էթնիկական հանրույթից դուրս մի յուրահատուկ հանրույթ: Յետևաբար՝ հայաստանցի-ղարաբաղցի դիրքորոշումները պառակտող բնույթ ունեն և Հայաստանի պաշտպանունակության համար խիստ վտանգավոր են: Ուրեմն՝ հարկավոր է կանխել ներէթնիկական պառակտման միտումները՝ Արցախի հանդեպ հայաստանյան հանրույթի որոշ հատվածի դիրքորոշումներն առողջացնելով: Հայաստանցի-ղարաբաղցի պառակտումը պետք է հաղթահարել ներքին և արտաքին տարբերակված քարոզչությամբ՝ թե՛ ԶԳ-ում, թե՛ Արցախում քարոզելով «մեկ ազգ, մեկ հայրենիք՝ երկու պետություն» դիրքորոշումը, ամրապնդելով Հայաստանի տարբեր շրջանների բնակչության մոտ մեկ ընդհանրական՝ հայկական ինքնագիտակցությունը: Այս համատեքստում Արցախի պաշտպանությունը պետք է հրամցվի որպես Արցախի պաշտպանությունը համայն Հայաստանի պաշտպանվածության գրավական: Զուգահեռա-

Արցախի պաշտպանությունը պետք է հրամցվի որպես Արցախի պաշտպանությունը համայն Հայաստանի պաշտպանվածության գրավական:

բար հարկավոր է հանդգիչ կերպով ներկայացնել ՀՀ բնակչությանը, որ երկրի քաղաքական, տնտեսական ոլորտներում արցախցիների դերի մասին պատկերացումները չափազանցված են և միտումնավոր շահարկվում են մի շարք ուժերի կողմից:

3.4.4. Թուրքի հանդեպ իրատեսական մասկերացումների ամրադրումը

Երկրի հանրությունը հնարավոր պատերազմին հոգեբանորեն պատրաստելու կարևոր բաղադրիչներից է մեզանում թուրքերի հանդեպ իրատեսական պատկերացումների ամրապնդումը: Հարկավոր է անընդմեջ հանրային ընկալումներում թարմ պահել Թուրքիայից և Ադրբեջանից բխող սպառնալիքի աներկբայության գիտակցումը, հանդգնումքն առ այն, որ Թուրքիայի և Ադրբեջանի թշնամական կեցվածքը մեր հանդեպ կայուն է, ըստ այդմ՝ տևական, քանզի պայմանավորված է մեր՝ հայերիս և թուրքերի, այդ թվում և անդրկովկասցի թուրքերի էթնոքաղաքական շահերի հակադիր, իրարամերժ լինելով, ինչպես նաև մեր և նրանց միջև առկա քաղաքակրթական տարբերություններով: Տվյալ դեպքում խոսքն իրատեսական, առողջ *դաստիարակական* դիրքորոշման մասին է, որն արտահայտում է առկա իրողությունները:

Այստեղ հատկապես շեշտենք, որ ասվածը չի ենթադրում թուրքերի, այդ թվում նաև անդրկովկասցի թուրքի հանդեպ շինծու փաստարկներով արհեստականորեն տոտալ և իռացիոնալ անհանդուրժողականության սերմանում: Բնավ ո՛չ. խոսքն առողջ պաշտպանական դիրքորոշման մասին է, անդրկովկասցի թուրքերի հանրույթից բխող վտանգի հանդեպ զգոնությունը մշտադրոն պա-

հելու մասին, որն ընդամենը արտահայտում է առկա իրողությունը և թույլ է տալիս սթափ գնահատել վտանգը՝ պատրաստ պահելով դիմակայել դրան: Հարկ է հստակ գիտակցել, որ վերջին տարիներին Ադրբեջանում տարվող տոտալ հայատյացության քարոզչությունն անհետևանք մնալ չի կարող: Եվ ուրեմն՝ հարկավոր է հայության գիտակցության մեջ հետևողականորեն ակտիվացնել «թուրքը մնում է թուրք» ճշմարտությունը: Այդ կերպ է միայն հնարավոր սթափ գնահատել մեզ սպառնացող վտանգը և պատրաստ լինել դիմակայել դրան: Հակառակ պարագայում թուրքական ցանկացած վայրագություն մեզ համար կլինի անսպասելի, հետևաբար՝ կորուստներն էլ՝ մեծ:

ՀՀ և Արցախի հանրությանը հնարավոր պատերազմին հոգեպես պատրաստելու, հայության հոգեկերտվածքում թուրք-ադրբեջանական հանրույթի հանդեպ իրատեսական պատկերացման ամրապնդման, այդ երկրի հանրությունից բխող վտանգի զգացումը մշտաթուն պահելու նպատակով անհրաժեշտ է հասարակական մեծ հնչողություն հաղորդել ադրբեջանական ագրեսիայի յուրաքանչյուր դրսևորման: Այստեղ հարկ է մանրամասնել:

Տվյալ դեպքում խոսքն իրականության առանձին կողմերն անհարկի չափազանցնելով թշնամու կերպար ձևավորելու մասին չէ: Մեր հանդեպ անդրկովկասցի թուրքերի թշնամանքն իրողություն է. ավելին՝ ադրբեջանական հանրույթն ագրեսիայի տարատեսակ դրսևորումների կայուն պարբերականությամբ հուշում է մեզ իր թշնամի լինելու մասին: Այս դեպքում մենք պարզապես պարտավոր ենք մեր հասարակությանը տեղեկացնել այդ մասին, ի ցույց դնել իրականությունն այնպիսին, ինչպիսին որ այն կա: Անտեղյակությունը և

**Անտեղյակությունը և կամ
ինքնախաբեությունը կրեթի
զգոնության կորստի և հերթա-
կան ցեղասպանության:**

կամ ինքնախաբեությունը կրեթի զգոնության կորստի և հերթական ցեղասպանության: Հետևաբար՝ հայ հանրույթի զգոնությունը մշտաբար պահելու համար անհրաժեշտ է հետևողականորեն, շարունակաբար մանրամասնորեն լուսաբանել պատմության աղավաղման յուրաքանչյուր փորձ, ադրբեջանական պաշտոնյայի յուրաքանչյուր ագրեսիվ թշնամական հայտարարություն, հրադադարի խախտման յուրաքանչյուր դեպք, սահմանամերձ գյուղերի զնդակոծության յուրաքանչյուր փաստ, ավելին՝ հնարավորության դեպքում տեսագրել այդ զնդակոծությունը, դրա հետևանքները և ցուցադրել հեռուստատեսությամբ՝ զուգահեռաբար ներկայացնելով մեր զորքերի համարժեք պատասխանը: Ընդ որում՝ ադրբեջանական ագրեսիայի դրսևորումներին անհրաժեշտ է անդրադառնալ դրանց հերթական տարելիցների կապակցությամբ: Այսպես օրինակ՝ մեզանում քչերին է հայտնի, որ 1991 թ. հունվարի 22-ին Ադրբեջանի կառավարությունը որոշում է կայացրել ոչ միայն արգելել Արցախում հայ եկեղեցու գործունեությունը, այլև վերացնել Գանձասարի և Ամարասի վանքերը²⁹: Տեղին կլինի հայության հիշողության մեջ պարբերաբար թարմացնել այդ բարբարոսական մտադրության մասին, որն իրականություն չդարձավ մեր հաղթանակի շնորհիվ միայն: Հակառակ դեպքում Գանձասարն ու Ամարասը կկիսեին Ջուղայի խաչքարերի ճակատագիրը:

Պակաս ազդեցիկ չէ նաև ադրբեջանցի թուրքերի կամ նախկին կովկասի թաթարների վայագությունների մասին օտարերկրացիների, հատկապես

²⁹ **Նալչաջյան Ա.**, «Էթնիկական հոգեբանություն», Երևան, 2001, էջ 137:

անվանի անձանց վկայություններն ու բնորոշումները հաճախակի հիշատակելը: Դա է՛լ ավելի կշեշտի ադրբեջանական հանրության բխող վտանգի օբյեկտիվ բնույթը, թույլ կտա մեզանում ակտիվ պահել Ադրբեջանից բխող վտանգի գիտակցումը:

Ասվածի համատեքստում տեղին է անդրադառնալ պետական անվտանգությանը սպառնացող մի երևույթի ևս. խոսքն անդրկովկասցի թուրքերի հանդեպ հանդուրժողականության մակերեսային քարոզչության մասին է:

Բանն այն է, որ վերջին տարիներին մեզանում որոշ հասարակական կազմակերպությունների կողմից տարվում է ադրբեջանցի թուրքերի հանդեպ հանդուրժողականության քարոզչություն, որի համար վերջիններս դրամաշնորհներ են ստանում մի շարք արևմտյան հիմնադրամներից: Իրականում այդ դրամաշնորհային հանդուրժողականությունը պարունակում է միակողմանի զիջողականություն և հայրենասիրության, առողջ ազգայնականության վարկաբեկում, երբ վերջիններս որակվում են որպես ծայրահեղականություն: Ասվածի վառ օրինակն է տխրահռչակ Գեորգի Վանյանի նախածեռնությունը՝ երևանում ադրբեջանական ֆիլմեր ցուցադրելու վերաբերյալ, ֆիլմեր, որոնք ունեին ակնհայտ քաղաքական-քարոզչական ենթատեքստ: Վանյանի քարոզած հանդուրժողականությունն ընդամենը ադրբեջանական քարոզչության թեզերը տարածելու մի ձև է: Ընդ որում՝ այդ քարոզչության թիրախը ՀՀ և Արցախի մատաղ սերունդն է, որն անդրկովկասցի թուրքերի հետ համատեղ կյանքի փորձ չունի: Դժվար թե մեզանում գտնվի մեկը, ով չցանկանա խաղաղություն: Մինչդեռ այն հանդուրժողականությունը, որ մեզ է մատուցվում Բաքվի դրամաշնորհային կամակատարների կողմից, ենթադրում է Արցախի հանձնում, ինչը նշանակում է

հայաթափում, այլ ոչ թե խաղաղություն: Եվ դա այն դեպքում, երբ անդրկովկասցի թուրքերի հանրությը մեր հանդեպ բնավ հանդուրժող չէ, ավելին այդպիսին չի դառնա նաև տեսանելի հեռանկարում, երբ հայատյացություն քարոզվում է պաշտոնապես:

Ադրբեջանում տիրող հայատյացության մասին կարելի է պատկերացում կազմել 2005 թ. Հետաքննող Լրագրողների «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի կողմից հրապարակված «Армения и Азербайджан на перепутье “ни мира, ни войны”» ուսումնասիրությունից: Վերջինիս արժեքն այն է, որ այստեղ բերված են տվյալներ երկու հասարակությունների փոխադարձ հանդուրժողականության մակարդակի մասին: Այդ նպատակով կատարված հարցումներն անց են կացվել և՛ Ադրբեջանում, և՛ Հայաստանում: Յուրաքանչյուր երկրում հարցման է ենթարկվել 1000-ական մարդ: Այստեղ մենք կանդրադառնանք այդ արժեքավոր ուսումնասիրության մի փոքր հատվածին միայն:

Այսպես՝ պարզվել է, որ Ադրբեջանում հարցման 1000 մասնակիցների 93,5%-ը Հայաստանը համարում է թշնամի երկիր: Պարզվել է նաև, որ հարցման մասնակիցների 85,1%-ը հայերին արհամարհում է, 76,9%-ը հայերի հանդեպ համակված է զայրույթով, իսկ 41,6%-ը՝ անթաքույց ատելությանը³⁰: Հարկ է նշել, որ վերը նշված հետազոտությունն անց էր կացվել 2005 թ.-ին: Անցել է տասը տարի: Այդ տասը տարիների ընթացքում Ադրբեջանում կարծես թե ոչինչ չի փոխվել, հայատյացության քարոզչությունը շարունակվում է նույն թափով, իսկ դա նշանակում է, որ ադրբեջանական հասարակության մի ստվար հատվածի մոտ հայատյացության դիրքո-

³⁰ Армения и Азербайджан на перепутье “ни мира, ни войны”.- Ереван, Исследовательский центр “Регион” Журналистов-расследователей, 2005.

րոշումներն ավելի են արմատավորվել:

Այս տվյալները լրացուցիչ մեկնաբանության կարիք ունեն: Մասնավորապես՝ հատուկ ուշադրության է արժանի հարցման մասնակիցների 85,1%-ի կողմից հայերին արհամարհելու հանգամանքը:

Բանն այն է, որ հույզերի և մասնավորապես արհամարհանքի ուսումնասիրությունն ի հայտ է բերում հետևյալ օրինաչափությունը. «արհամարհանքն առաջանում է ոչ միայն միջանձնային շփումներում, ոչ միայն երկու մարդկանց միջև առկա հարաբերություններում, այլև մրցակցող թիմերի և նրանց երկրպագուների միջև: Արհամարհանքը կարող է լինել առանձին ընտանիքի, որոշակի շրջանի կամ քաղաքի բնակիչների, դասակարգի, էթնիկական խմբի կամ ամբողջ ռասայի բնութագիրը»³¹: Բացի այդ, ապացուցված է, որ արհամարհանքը «հաճախ առաջանում է ոչ թե առանձին, մեկուսացված, այլ կամ զայրույթի, կամ զզվանքի, կամ էլ երկուսի հետ միաժամանակ: Այս երեք հույզերի խումբն անվանում են թշնամական եռյակ»³²: Հետևաբար՝ վերը նշված հետազոտության արդյունքներն ակնհայտորեն վկայում են, որ ադրբեջանական հասարակության ճնշող մեծամասնությունը հայության հանդեպ համակված է թշնամանքով: Ի դեպ, ուշադրության է արժանի հույզերի հոգեբանության անվանի ամերիկյան հետազոտող Քերոլ Է. Իզարդի հետևյալ համոզմունքը, որ «բոլոր նախապաշարմունքները և, այսպես կոչված, «սառնասրտորեն» կատարված սպանություններն արհամարհանքի հետևանք են»³³:

³¹ Керрол Э. Изард, Психология эмоций, СПб, 1999, стр. 281.

³² Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան, 1997, 446 էջ:

³³ Керрол Э. Изард, Психология эмоций, СПб, 1999, стр. 290.

Քերոլ է. Իզարդի հետազոտություններով պարզվել է, որ արհամարհանքը սերտորեն կապված է գերազանցության զգացողության հետ: Բանն այն է, որ եթե մարդ արհամարհում է որևէ մեկին, ապա վերջինիս համարում է ցածրակարգ, մարդկային որակներից զուրկ մեկը, որին վնասելու մեջ դատապարտելի ոչինչ չի տեսնում: Արհամարհանքը դյուրացնում է բռնության գործադրումը, հոգեբանական տարածություն ստեղծում ագրեսորի և զոհի միջև՝ ազատելով ագրեսորին իր բռնարարքի համար բարոյական ապրումներից՝ առաջին հերթին մեղքի և ամոթի զգացումներից: Բնավ պատահական չէ, որ հիտլերյան քարոզչությունը հրեաներին, սլավոններին, գնչուներին հռչակում էր «ենթամարդիկ», ցածրակարգ ռասա՝ այդ կերպ նրանց հանդեպ գերմանական հասարակության և բանակի անձնակազմի մոտ խորը արհամարհանք առաջացնելով: Հետևաբար՝ պետք է հաշվի առնել, որ արհամարհանքը վայրագության հոգեբանական նախադրյալներից է: Հետևաբար՝ թշնամանք ասվածը, անկախ այն բանից, թե ում դեմ է այն ուղղված, հուզական բարդույթ է, զգացմունք, որի կառուցվածքային բաղադրիչներից մեկն արհամարհանքն է: Այլ կերպ ասած՝ որևէ մեկի հանդեպ վառ արտահայտված արհամարհանքը մատնում է նրա հանդեպ թշնամանքի առկայությունը:

Ողջ վերը նշվածից հետևությունը մեկն է, որ ադրբեջանական հանրույթի մի ստվար հատված առանց վարանելու պատրաստ է կրկնել Սումգայիթը, եթե իհարկե հայությունը թուլանա և կորցնի իր զզոնությունը: Հետևաբար՝ ինչպիսի՞ հանդուրժողականություն է մեզ հրամցնում այս դրամաշնորհային խաղաղասիրությունը. հանդուրժողականություն հայի տեսակի հանդեպ թշնամու վայրի անհանդուրժողականության ու ատելության, նրա

կողմից մեր իսկ հայրենիքում մեր ապրելու իրավունքը չընդունելու հանդեպ: Կրկնենք, անդրկովկասցի թուրքերը մեր հանդեպ, մեղմ ասած, հանդուրժող չեն, այդպիսին չեն դառնա մալապապայում: Նման պայմաններում միակողմանի հանդուրժողականությունը խիստ վտանգավոր է: Ադրբեջանական վայրագություններին, հախուռն ագրեսիվությամբ հագեցված կույր ռևանշիստական կոչերին ի պատասխան հանդուրժողականություն քարոզելը նշանակում է ժխտել իրականությունը և բթացնել հայ հանրության զգոնությունը: Վտանգն այն է, որ այս դեպքում անդրկովկասցի թուրքը հային ընկալում է իբրև թույլ գոհ: Ագրեսիայի ասպարեզում ժամանակակից հոգեբանության ձեռքբերումները փաստում են, որ գոհի խաղաղասիրական կեցվածքը ագրեսորի կողմից ընկալվում է իբրև թուլություն, հեզմանք է առաջացնում և ուժեղացնում է նրա ագրեսիվ մղումները, առավել ևս, եթե ագրեսորը չի զղջում իր կամ իր նախնիների կատարած բռնարարքների համար³⁴: Միակողմանի հանդուրժողականությունը վտանգավոր է և միայն բթացնում է հայ հանրության զգոնությունը: Հետևապես, հարկավոր է խոչընդոտել նման գիտականորեն սնանկ, մակերեսային հանդուրժողականության տարածմանը: Անշուշտ մենք չպետք է հայելային անդրադարձի տրամաբանությամբ կույր ատելության քարոզչություն ծավալենք թուրքերի հանդեպ: Ծայրահեղությունների տրվել չի կարելի. մենք պետք է պահպանենք մեր մարդկային դեմքը: Սակայն հայության դիրքորոշումները պետք է լինեն առավելագույնս իրատեսական: Մենք ապրում ենք թշնամու հարևանությամբ, որից վտանգ է բխում: Աչք փակել այդ վտան-

³⁴ **Налчаджян А.**, Этнопсихологическая самозащита и агрессия, Ереван, 2000, стр. 276, 278.

գի վրա և տրվել ինքնախաբեության նշանակում է դատապարտվել նորանոր ցեղասպանությունների: Ընդ որում՝ մենք այստեղ միտումնավոր ենք գործածում թշնամի բառը, քանզի միայն այդ բառն է ճշգրտորեն արտահայտում իրարամերժ շահեր հետապնդող երկու էթնիկ հանրույթների հարաբերությունների բնույթը:

Ադրբեջանական հանրույթի թշնամական լինելը, նրանից բխող վտանգը սթափ գիտակցելով հանդերձ հարկավոր է միաժամանակ պատրաստ լինել նրա հետ ինչ-ինչ հանգամանքներում հարաբերվել: Ասվածը մեկ նախադասությամբ հնչում է հետևյալ կերպ՝ պատրաստ լինել թշնամուց պաշտպանվելուն, պատրաստ լինել թշնամու հետ հարաբերվելուն:

Մեզանում պետք է տիրապետող լինի հետևյալ դիրքորոշումը. պատրաստ լինել անդրկովկասցի թուրքի հետ փոխշահավետ համագործակցության, հանդուրժել նրա ապրելու և պետություն կերտելու իրավունքը, սակայն ո՛չ ի հաշիվ մեր անվտանգության, ո՛չ մեր պատմական հայրենիքի տարածքի վրա, ո՛չ մեր քաղաքակրթությունը ոչնչացնելու և մշակութային կողոպուտի գնով՝ բացառելով տարածքային զիջումները:

Պետք է պատրաստ լինել անդրկովկասցի թուրքի հետ փոխշահավետ համագործակցության, հանդուրժել նրա ապրելու և պետություն կերտելու իրավունքը, սակայն ո՛չ ի հաշիվ մեր անվտանգության, ո՛չ մեր պատմական հայրենիքի տարածքի վրա, ո՛չ մեր քաղաքակրթությունը ոչնչացնելու և մշակութային կողոպուտի գնով՝ բացառելով տարածքային զիջումները:

Ի դեպ, հատկանշական մի փաստ: Ադրբեջանցիները հրաժարվում են համագործակցել միջազգային կառույցների հետ այն դեպքերում, երբ դա հակասում է իրենց պետական շահերին: Այսպես, ադրբեջանցի հոգեբան Ազադ Իսազադեի վկայությամբ, իրենք ժամանակին հրաժարվել են համագործակցել մի արտասահմանյան կազմակերպության հետ ադրբեջանցի «փախստա-

կան» երեխաների հոգեբանական վերականգնման շրջանակներում, քանի որ դրան զուգահեռ խնդիր էր դրված նաև վերացնել հայերի հանդեպ թշնամու կերպարը: Իսազադեն դա հիմնավորում է նրանով, որ դեռ պարզ չէ, թե ինչպիսի վերջ է սպասում արցախյան հիմնախնդրին: Ըստ նրա՝ եթե բանը հասնի պատերազմին, ապա այդ դեպքում հայերի հանդեպ թշնամու կերպարի բացակայությունը կնշանակի «ռիսկի ենթարկել մարդկանց (աղրբեջանցիների) և ս մեկ սերունդ»³⁵:

Պատկերացնելու համար, թե ինչ խորը արմատներ ունի հայատյացությունը թուրքական, նաև անդրկովկասցի թուրքերի հոգեկերտվածքում, հարկավոր է ուսումնասիրել հայերի վերաբերյալ նրանց ասացվածքները: Մեզանում թուրք հանրույթի հանդեպ իրատեսական պատկերացումներն ամրապնդելու, չխաբվելու, թուրքի իրական կերպարը մշտաթոն պահելու համար հարկավոր է պարբերաբար հիշատակել դրանք: Ստորև մենք կհամեմատենք թուրքերի մասին հայոց ասացվածքները հայերի մասին թուրքերի ասացվածքների հետ: Նշենք, որ նման համեմատական հետազոտության գիտագործնական արժեքն առեւելի է, քանզի թույլ է տալիս իրատեսական պատկերացում կազմել մեր և թուրքերի քաղաքակրթական անհամատեղելիության մասին:

Հարյուրամյակներով թուրքերի հետ հարաբերվելու կենսափորձը, թուրքի մասին պատկերացումները հայ էթնիկ հանրույթի հոգեկերտվածքում բյուրեղացել են նրանց մասին մի շարք առողջ դիրքորոշումներումներում, որոնք կենցաղում դրսևորվում են ասացվածքների տեսքով: Վերջիններս հա-

³⁵ Армения и Азербайджан на перепутье "ни мира, ни войны". – Ереван, Исследовательский центр "Регион" Журналистов-расследователей, 2005, стр. 62.

յության հոգեկերտվածքում ականա ակտիվանում են ադրբեջանական ագրեսիայի հերթական դրսեվորումից հետո: Հատկանշական հանգամանք, որ մեզանում թուրքերի հանդեպ առկա ասացվածքներում չկա ագրեսիվ անհանդուրժողական, նվաճողական բովանդակություն: Գիշտ հակառակը՝ այստեղ առկա է առողջ պաշտպանական դիրքորոշում:

Հայության շրջանում թուրքի հանդեպ տարածված ասացվածքներն իրենցից ներկայացնում են թուրքի հարևանությամբ *աղահով աղբելուն, մրաբռնության զոհի չվերածվելուն* ուղղված հայության **հարմարվողական ռազմավարություն**: «Թուրքը մնում է թուրք» վերջիններիս յուրահատուկ խտացումը պետք է համարել, որն իդեպ ոչ թե կարծրատիպ է, այլ ասացվածքի տեսք ստացած կենսափորձ, այսինքն՝ օբյեկտիվ իրականության արտացոլում հայոց հոգեկերտվածքում: Հետևապես, նրանց հաճախակի հիշատակումը հայաստանյան հանրության շրջանում ձևավորում է անդրկովկասցի թուրքի հանդեպ ոչ թե տոտալ ատելություն և անհանդուրժողականություն, այլ նրա պոտենցիալ բռնությանը հակազդելու առողջ պատրաստակամություն: Այսպես օրինակ, երբ մենք ասում ենք «թուրքը մնում է թուրք», ապա հասկանում ենք, որ թուրքն ամեն վայրկյան կարող է շինծու, կեղծ բարյացակամությունից անցնել բռնությունների և ընդամենը:

Մինչդեռ հայերի մասին թուրքերի, այդ թվում և ադրբեջանցի թուրքերի մոտ առկա ասացվածքները հազեցած են ագրեսիայով: Ըստ էության, դրանք ակնհայտ անհանդուրժողականություն, նախապաշարմունք սերմանող կարծրատիպեր են: Օրինակ՝ անդրկովկասցի թուրքերի մոտ տարածված է հետևյալ ասացվածքը՝ «Հասան-Հասան բոյասան, էրմենին քյոքը քյասասան»՝ «Հասան-Հասան մե-

ծացիր, հայի արմատը կտրիր»³⁶: Նույնակա՞ն է արդյոք իր բովանդակությամբ այս ասացվածքը մեզանում տարածված «թուրքը մնում է թուրք»-ի հետ: Իհարկե ո՛չ, քանզի այստեղ առկա է տոտալ անհանդուրժողականություն, ատելություն և իռացիոնալ ագրեսիա ծնող նախապաշարմունք:

Ահա այսպիսի ժողովրդական բանահյուսության առկայությունը հիմնավորում է այն աներկբա ճշմարտությունը, որ հայերի ու անդրկովկասցի թուրքերի համակեցությունն անհամատեղելի է միևնույն պետության շրջանակներում: Ընդ որում՝ այս ասացվածքն իր բնույթով եզակի չէ: Անդրկովկասցի թուրքերի ժողովրդական բանահյուսությունը ներծծված է հայատյացությամբ, որ դժվար է բացատրել զուտ էթնոքաղաքական շահերի բախման ռացիոնալ բացատրությամբ, հայատյացություն, որ թերևս ունի զուտ հոգեբանական ծագում՝ ամենայն հավանականությամբ՝ կապված էթնիկական թերարժեքության բարդույթի հետ: Նման ժողովրդական բանահյուսությունն է պարբերական դարձրել հայոց հանդեպ բռնությունը ժամանակից Ադրբեջանի գոյության տարբեր ժամանակահատվածներում, բռնություն, որը հենց նման ասացվածքների շնորհիվ ի սկզբանե ստացել է զանգվածային բնույթ: Նման ասացվածքներն են հոգեբանորեն նախապատրաստում հայերի հանդեպ բռնությունը, դյուրացնում և հավանական դարձնում այն ցանկացած պահի՝ ձերբազատելով անդրկովկասցի թուրքին կատարածի համար բարոյական ապրումներից: Այս ասացվածքով անդրկովկասցի թուրքերի սերունդներ են ձևավորվել և նորանորներն են ձևավորվում: Այս ասացվածք-

³⁶ **Ղարախանյան Լ.**, *Էթնիկական ստրեոտիպերի դաժժամական ֆունկցիան, թեկնածուական ասեմախոսություն, Երևան, 2009:*

ների միջոցով էլ ատելությունը հայոց հանդեպ փոխանցվում է սերնդեսերունդ: Հենց այս ասացվածքների պատճառով էլ թուրքը մնում է թուրք:

Ժողովրդական բանահյուսությունն ազգի հոգեկերտվածքի հայելին է: Ասացվածքները ժողովրդական բանահյուսության մասն են կազմում: Ժամանակակաից հոգեբանական գիտության դիրքերից՝ ասացվածքը սոցիալական դիրքորոշման տեսակ է: Իսկ սոցիալական դիրքորոշում ասելով հարկ է հասկանալ այնպիսի հոգեբանական կազմավորում, որը բնորոշ է տվյալ հանրույթի անդամների մեծամասնությանը. կազմավորում, որը նախորդում է գործունեությանը, պայմանավորում, ուղղորդում նրա ընթացքը, իմաստավորում է այն: Ասացվածքներում կարելի է տեսնել ազգի իղծերը, նպատակները: Կարծրատիպը, էթնիկական դիրքորոշում է, որ իր հերթին սոցիալական դիրքորոշման տեսակ է: Ինչպես բոլոր մյուս դիրքորոշումները, այնպես էլ ասացվածքները մոտիվացնում և կանխորոշում են ազգի մեծ մասի գործունեությունը: Հարկ է նկատի ունենալ, որ ասացվածքը, իբրև սոցիալական դիրքորոշման տեսակ, միաժամանակ նաև էթնիկական սոցիալականացման միջոց է. ասացվածքն աշխարհայացք, համոզմունքներ է ձևավորում: Հենց դրանում է ասացվածքի սոցիալականացնող, դաստիարակող գործառույթը: Եվ ուրեմն, իմանալ տվյալ էթնոսի ժողովրդական բանահյուսությունը, ասացվածքները նշանակում է կանխատեսել այդ էթնոսի ներկայացուցիչների հնարավոր վարքը տարաբնույթ պրոբլեմային իրավիճակներում:

Վերը նշված ասացվածքն ազդեցիկ սոցիալական դիրքորոշում է և վառ կերպով արտահայտվում է անդրկովկասցի թուրքերի վերաբերմունքը հայոց հանդեպ: Այն իր բնույթով շովինիստական է,

իր ելքամբ՝ ագրեսիայի դրսևորման նախապատրաստական փուլ: Այն ծնուն է հայատյացություն, մարդատյացություն, արթնացնում է թուրքի վայրի բնագղները: Հատկանշականն այն է, որ վերը նշված ասացվածքը հստակորեն ուղղորդված է անդրկովկասցի թուրքերի մատաղ սերնդին: Մինչդեռ ամերիկյան սոցիալական հոգեբանների և պերսոնոլոգների հետազոտությունները ցույց են տալիս, որ մարդկանց մեծամասնությունը նախապաշարմունքները պատրաստի ձևով յուրացնում է մանուկ հասակում՝ այդպիսով չունենալով ստացված տեղեկությանը քննադատաբար մոտենալու հնարավորություն: Հետագայում, մանավանդ ինչից տասնմեկ տարեկանում, մեծահասակների ազդեցության տակ այդ նախապաշարմունքներն էլ ավելի են կարծրանում, ինչի արդյունքում դրանք արդեն հետագայում փոփոխելը դառնում է գրեթե անհնարին³⁷: Ինչպես հայտնի է կարծրատիպերն ու նախապաշարմունքները տվյալ հանրույթի ինքնագիտակցության մի մասն են³⁸: Այդ է պատճառը, որ հակահայկական կարծրատիպացված ագրեսիվ ասացվածքները կայուն են, այնքան կայուն, որ չվերացան անգամ յոթանասունամյա խորհրդային իշխանության կողմից պարտադրված եղբայրության ընթացքում: Ավելորդ է ասելը, որ վերջին տարիների հայատյացության քարոզչության արդյունքում դրանք էլ ավելի ամրապնդված կլինեն ադրբեջանական հանրույթի մոտ: Պատահական չէ, որ վերը հիշատակված «Ռեզիդ» կենտրոնի հետազոտության համաձայն՝ Ադրբեջանում հայության հանդեպ ատելությանը առաջին հերթին

³⁷ **Лурье С. В.**, Историческая этнология, Москва, 1998.

³⁸ **Солдатова Г. У.**, Психология межэтнической напряженности, Москва, 1998, стр. 66.

աչքի է ընկնում երիտասարդությունը³⁹: Եվ արժե՞ արդյոք զարմանալ, որ Ադրբեջան պետական կազմավորումում Ռամիլ Սաֆարովներ են ծնվում, որ հենց Ռամիլ Սաֆարովներն են ընկալվում որպես հերոս: Այդտեղ Սաֆարովները պահանջված են:

Ի դեպ, Սաֆարովի վերաբերյալ Ալիևյան կլանը նախընտրական շրջանում, այն էլ հարաճուն ճգնաժամի պայմաններում պարզապես չէր հերոսացնի Ռամիլ Սաֆարովի կերպարը, թույլ չէր տա իր տարբեր տրամաչափի չինովնիկներին հնչեցնել հայկական քաղաքացիական ինքնաթիռները կործանելու սպառնալիքներ, եթե այդ քայլերն անընդունելի, մերժելի լինեին անդրկովկասցի թուրքերի հանրության համար: Ալիևյան կլանը գիտակցում է, որ այդ քայլերն անդրկովկասցի թուրքերի շրջանում պոպուլյար են: Ալիևը վստահ է, որ քաղաքական առումով իր այդ քայլն իրեն դիվիդենտներ կբերի, վստահ է նաև, որ թերևս բացի մեծ պատերազմ սանձազերծելուց աշխարհի «մեծամեծերն» իր ցանկացած հակահայկական քայլ ներելու են, այդ իսկ պատճառով դիմել և դիմելու է նման քայլերի: Ի դեպ, սա այն եզակի դեպքն է, որ ընդդիմություն – իշխանություն հակասություն չկա, քանզի անդրկովկասցի թուրքերի հանրությունն ապրում է ահա այսպիսի խեղված արժեքային համակարգով, երբ ինքնին հայ սպանելն ընկալվում է որպես սխրանք: Անկասկած Սաֆարովի կերպարն օգտագործվելու է մեր հանդեպ ատելությունն էլ ավելի սրելու, հնարավոր պատերազմում անդրկովկասցի թուրքերին վճռական գործողությունների պատրաստելու համատեքստում:

Ռամիլ Սաֆարովի հերոսացմամբ թուրքերը

³⁹ Армения и Азербайджан на перепутье “ни мира, ни войны”.- Ереван, Исследовательский центр “Регион” Журналистов-расследователей, 2005.

կրկին անգամ ի ցույց են դնում էթնիկական անհամատեղելիության հանգամանքը, հիմնավորում այն, որ միևնույն պետության կազմում հայի ու թուրքի համակեցություն ապահովել անհնարին է: Իսկ ահա անխուսափելի հարևանության խաղաղ լինելու գրավականը մեկն է՝ անդրկովկասցի թուրքերի ընկալումներում պետք է հստակ լինի՝ իրենց հայատյացությանը հագուրդ տալու յուրաքանչյուր փորձ կունենա աղետալի հետևանքներ:

Այսպիսով՝ չի կարելի տրվել պատրանքի, թե հայատյացությունը միայն ալիևյան իշխանության մենաշնորհն է: Պատրանքների տեղ պարզապես չկա: Հնարավոր իշխանափոխությունն Ադրբեջանում այդ առումով ոչինչ չի փոխի: Բաքվի պաշտոնական դիրքորոշումը կմնա նույնը: Այդպես է, քանզի Ադրբեջանում պարզապես չկա մի այնպիսի քաղաքական ուժ, այնպիսի հանրային գործիչ, ում դիրքորոշումները սկզբունքորեն տարբերվեն ալիևյան կլանի դիրքորոշումից: Ագրեսիվ ծավալապաշտությունն ու հայատյացությունը բնորոշ են Ադրբեջանի քաղաքական դաշտի անխտիր բոլոր դերակատարներին: Տարօրինակ այստեղ ոչինչ չկա, քանզի այդ դիրքորոշումները բնորոշ են անդրկովկասցի թուրքերի ողջ հանրության: Այն հասարակությունը, որի ֆուկլորը հագեցած է ատելությամբ, պարզապես չի կարող իշխանության բերել այնպիսի քաղաքական ուժ, որը զերծ լինի հայատյացության ախտից: Աքրամ Ալլիսլիներն այսպիսի հասարակությունում եզակի բացառություններ են: Հետևաբար՝ չկա նաև որևէ հիմք կարծելու, թե Ադրբեջանի «ժողովրդավարացման» արդյունքում արցախյան կարգավորման գործընթացները կարագանան: Ուստի՝ ինչ իշխանություն էլ որ լինի Բաքվում, ով էլ որ փոխարինի Ալիևին, չի վարանի հագուրդ տալ իր հայատյացությանը,

եթե զգա, որ ունի այդ հնարավորությունը: Ուստի՝ մենք դատապարտված ենք հարաճուն տեմպերով բազմապատկել մեր պաշտպանական ներուժը, քանզի դա Արցախի ներկա պետական սահմանի կոնֆիգուրացիայի հետ միասին այն կայուն երաշխիքն է, որն անհնարին է դարձնում ադրբեջանական ագրեսիան անկախ այն հանգամանքից, թե ինչ իշխանություն կլինի Ադրբեջանում: Հակամարտությունը մեր և անդրկովկասցի թուրքերի միջև չի կարգավորվում հենց այն պատճառով, որ հայաստյացությունը նրանց արժեքային համակարգի մի մասն է և փոխանցվում է անդրկովկասցի թուրքերի հերթական սերնդին էթնիկական սոցիալականացման մեխանիզմների միջոցով: Ադրբեջանն անդրկովկասցի թուրքերի պետությունն է, որի թշնամական կեցվածքը մեր հանդեպ իրականությունն է, իրականություն՝ երկարաձգված ժամանակի մեջ: Այս անժխտելի իրողության գիտակցումը հայության հավաքական հոգեկերտվածքում պետք է միշտ վառ մնա:

Ի դեպ, այս համատեքստում շատ կարևոր է հանրային գիտակցությունում ամրապնդել Արցախյան կարգավորման միակ անայլընտրանքային տարբերակը. Արցախը պետք է մնա հայապատկան և առնվազն ներկայիս սահմաններում, և որ հակամարտությունն Ադրբեջանի հետ ունի անընդհատ բնույթ: Հայաստանյան լսարանի համար պետք է աներկբա լինի, որ ադրբեջանցի թուրքերի կայսրական նկրտումները տեղի չեն տվել, որ կարգավորում ասելով նրանք հասկանում են վերադարձ 1988 թ.

Արցախը պետք է մնա հայապատկան և առնվազն ներկայիս սահմաններում: Հակամարտությունն Ադրբեջանի հետ ունի անընդհատ բնույթ:

իրողություններին: Հատկապես ընդգծենք, անզիջում մաքսիմալիստական դիրքորոշումները միշտ բնորոշ են եղել ադրբեջանական հանրույթի ճնշող

մեծամասնությանը. ալիևյան քարոզչությունն ընդամենը սրել է դրանք: Պետք է իրատես լինել. ադրբեջանական հանրույթի դիրքորոշումների խորքային տրանսֆորմացիայի որևէ նախադրյալ այսօր չկա:

Նման պայմաններում էական է դառնում հայկական կողմի սկզբունքային և վճռական կեցվածքի անհրաժեշտությունը: Որպեսզի անդրկովկասցի թուրքերի մաքսիմալիստական դիրքորոշումները տեղի տան, նրանք նախևառաջ պետք է համակերպվեն Արցախի վերագաղութացման անհնարինության հետ: Սա ենթադրում է տևական հակամարտություն, և մենք պետք է պատրաստ լինենք այդ տևական հակամարտությանը: Միայն մեր բարոյահոգեբանական տոկոսնությունն է, որ վաղ թե ուշ ստիպելու է թուրքերին համակերպվել առկա իրողություններին: Սա տևական ժամանակ պահանջող գործընթաց է: Փաստ է, որ անկախացած ազգերը, որոնք ինքնակազմակերպվել և ձևավորել են պետական ինստիտուտներ, երբևէ կամավոր չեն հրաժարվել իրենց այդ ձեռքբերումներից, իսկ նախկին գաղութարարները դժվարությամբ, սակայն ի վերջո հրաժարվել են այդ ըմբոստացած ազգերին գաղութացնելու փորձերից՝ ճանաչելով նրանց անկախությունը: Այդպիսին է պատմության տրամաբանությունը, և Արցախը բացառություն չի՝ նել չի կարող: Ի դեպ, համակերպումն առկա իրողություններին անդրկովկասցի թուրքերի շրջանում կարծես թե աստիճանաբար հասունանում է: Ահա թե ինչ է ասում մեր կողմից արդեն հիշատակված Ռ. Գուլիևը. «Հայերը երբեք չեն ստորագրի այնպիսի մի փաստաթուղթ, որում հաստատված չլինի Ղարաբաղի անկախությունը... Անգամ եթե պատկերացնենք, որ Հայաստանի ինչ-որ նախագահ կստորագրի ինչ-որ փաստաթուղթ՝ դեմ գնալով

ժողովրդի կամքին, ապա այն երբեք չի հաստատի խորհրդարանը, ժողովուրդը կհեռացնի նման առաջնորդին»⁴⁰: Բաքվում վաղ թե ուշ պետք է ի վերջո համակերպվեն, որ Արցախն իր ներկա տարածքով այլևս երբեք իրենցը չի լինելու: Բացի այդ համակերպումից որևէ այլ լուծում չկա: Այլ տարբերակ չկա:

Առաջին հայացքից ողջ վերը նշվածը կարող է անելանելիության տպավորություն թողնել ընթերցողի մոտ: Կայուն և կանխատեսելի խաղաղության հեռանկարը ցանկացած բանական մարդու ցանկությունն է: Սակայն հայոց համար չկա ավելի վտանգավոր բան քան ինքնախաբեությունը: Ինքնախաբեությունը կարող է բերել ազգային աղետի. այն մեկ անգամ արդեն բերել է ազգային աղետի: Ազգային աղետների ժամանակները հայոց համար վերջապես պետք է դառնան անցյալ, անդառնալի անցյալ: Իսկ դրա համար հարկավոր է իրերը կոչել իրենց անուններով, իրականությունն ընկալել այնպիսին, ինչպիսին այն կա: Իրականության համարժեք ընկալումն է միայն գրավականը նոր՝ հայոց համար առավել ցանկալի իրականություն կերտելու համար: Շատ կարևոր է հանրային գիտակցության մեջ ամրապնդել հետևյալ գաղափարը, որ եթե Ադրբեջանի ղեկավարությունն իր ժողովրդին ձգտում է պատրաստել նվաճողական պատերազմի, ապա մեր առջև ծառայած է անհամեմատ ավելի հեշտ խնդիր՝ ամրապնդել հաղթանակը: Հետևաբար՝ ի սկզբանե մենք թշնամու հանդեպ ունենք բարոյահոգեբանական առավելություն:

Անդրկովկասցի թուրքերի հարևանությամբ

⁴⁰ http://qafqazinfo.az/%E2%80%9CM%C6%8FN_AZ%C6%8FRBAYCANA_YAXINLA%C5%9EANDA,_B%C6%8FZIL%C6%8FRININ_YUXUSU_QA%C3%871R%E2%80%9D_%E2%80%93_M%C3%9CSAHIB%C6%8F-2712-xeber.html

մենք ստիպված ենք ապրել, ապրել՝ զսպելով այդ հանրության թշնամանքի պոռթկումները, միաժամանակ պատրաստ լինելով խաղաղ հարաբերվել, ապրել՝ խաղաղություն պարտադրելով, ապրել՝ ուժ հակադրելով: Հայոց պետությունները պետք է պաշտպանված լինեն նման հարևանությունից հուսալիորեն պաշտպանված պետական սահմանով:

Գրականություն

1. Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը: «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2009: <http://noravank.am/arm/books/detail.php?ID=3159>
2. Նալչաջյան Ա. Ա., Հոգեբանական բառարան, Երևան, Լույս, 1984:
3. Նալչաջյան Ա., Էթնիկական հոգեբանություն, Երևան, «Ջանգալ 97», «Հոգեբան», 2001:
4. Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան, «Հոգեբան», 1997:
5. Նալչաջյան Ա. Ա., Սոցիալական հոգեբանություն, Երևան, «Ջանգալ 97», 2004:
6. Ղարախանյան Լ., Էթնիկական ստերեոտիպերի պաշտպանական ֆունկցիան, թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2010:
7. Ջամալյան Դ., Ռազմական հոգեբանության հիմունքներ, Երևան, «Լինգվա», 2009, մաս 1, 2:
8. Ջամալյան Դ., ՀՀ հոգեբանական անվտանգության խնդիրները հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում, ՎԼՈՒՄԻՍ. ազգային անվտանգություն, «Նորավանք» գիտակրթական համալիր, 2010, թիվ 1, էջ 12 – 19:
9. Վրթանեսյան Կ., Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական թեզերը, Գլոբուս. ազգային անվտանգություն, «Նորավանք» գիտակրթական համալիր, թիվ 2, (6) 2009, էջ 35-47:
10. Адибебян А., Элибегова А., Армянофобия в Азербайджане, Ер., “Центр общественных связей и информации” при Аппарате президента Армении, 2013.
11. Адорно Т., Исследование авторитарной личности. М., Академия исследований культуры, 2001.
12. Армения, не побежденная судьбой, сост.: Е. Хачатрян, Ер.: авт. изд., 2013.
13. Армения и Азербайджан на перепутье “ни мира, ни войны”.- Ереван, Исследовательский центр “Регион” Журналистов-расследователей, 2005.
14. Аронсон Э., Общественное животное. М., Аспект Пресс, 1998.
15. Асмолов А. Г., Личность как предмет психологического исследования. М., 1984.
16. Берковиц Л., Агрессия: причины, последствия и контроль. СПб., “Прайм-ЕВРОЗНАК”, “Издательский дом НЕВА”, 2001.

17. Бэрон Р., Ричардсон Д., Агрессия. СПб, Питер, 2001.
18. Военный энциклопедический словарь. т. 1,2, М., Научное издательство “Большая Российская Энциклопедия”, 2001.
19. Военная психология. Под редакцией А. Г. Маклакова, М., Питер, 2005.
20. Военная психология, М., ВОЕНИЗДАТ, 1967.
21. Военная психиатрия, СПб., ВМедА, ЭЛБИ-СПБ, 2001.
22. Военно-инженерная психология, М., ВОЕНИЗДАТ, 1970.
23. Волкогонов Д. А., Психологическая война, М., ВОЕНИЗДАТ, 1983.
24. Гришина Н. В., Психология конфликта, СПб., Питер, 2003.
25. Изард К. Э., Психология эмоций, СПб., Питер, 1999.
26. Караяни А. Г., Сыромятников И. В., Прикладная военная психология, СПб., Питер, 2006.
27. Коробейников М. П., Современный бой и проблемы психологии, М., ВОЕНИЗДАТ, 1972.
28. Коупленд Н., Психология и солдат, М., ВОЕНИЗДАТ, 1960.
29. Крысько В. Г., Секреты психологической войны. (Цели, задачи, методы, формы, опыт), Минск, ХАРВЕСТ, 1999.
30. Кун Д., Все тайны поведения человека, М., “Прайм-ЕВРОЗНАК”, “Издательский дом НЕВА”, 2005.
31. Лобов В., Военная хитрость, М., “Логос”, 2001.
32. Лурье С. В., Историческая этнология, Москва, АСПЕКТ ПРЕСС, 1998.
33. Майерс Д., Социальная психология, СПб., Питер, 1999.
34. Макнаб К. Психологическая подготовка подразделений специального назначения, М., ФАИР-ПРЕСС, 2002.
35. Маркс Д., ЦРУ и контроль над разумом. (Тайная история науки управления поведением человека.), М., “МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ”, 2003.
36. Мацумото Д., Психология и культура, СПб., “Прайм-ЕВРОЗНАК”, “Издательский дом НЕВА”, 2002.
37. Мокшанцев Р. И., Психология переговоров, М., ИНФРА-М-Сибирское соглашения, 2002.
38. Назаретян А. П., Агрессивная толпа, массовая паника, слухи, СПб., Питер, 2003.
39. Налчаджян А. А., Психологическая адаптация: механизмы и стратегии, М., ЭКСМО, 2010.

40. Налчаджян А. А., Этнопсихологическая самозащита и агрессия, Ереван, "ОГЕБАН", 2000.
41. Налчаджян А. А., Этническая характерология, Ереван, "ОГЕБАН", 2001.
42. Налчаджян А. А., Атрибуция, диссонанс и социальное познание, М., "КОГИТО-ЦЕНТР", 2006.
43. Налчаджян А. А., Агрессивность человека, М., СПб., Питер, 2007.
44. Почепцов Г. Г., Информационные войны, М., "Рефл-Бук", "Ваклер", 2000.
45. Почепцов Г. Г., Паблик рилейшнз для профессионалов, М., "Рефл-Бук", "Ваклер", 2000.
46. Почепцов Г. Г., Психологические войны, М., "Рефл-Бук", "Ваклер", 2000.
47. Психологическая диагностика, под редакцией Акимова М. К. и Гуревича К. М. М., Питер, 2003.
48. Психология масс. Хрестоматия, сост. Райгородский Д. Я., Самара, "БАХРАХ", 1998.
49. Сенявская Е. С., Психология войны в XX веке, М., "РОССПЭН", 1999.
50. Сидорина С. Ю., Полянников Т. Л., Национализм. Теории и политическая история, Москва, Издательский дом ГУ ВШЭ, 2006.
51. Современная военная психология: Хрестоматия, сост. А. А. Урбанович, Минск, ХАРВЕСТ, 2003.
52. Солдатова Г. У., Психология межэтнической напряженности, М., Смысл, 1998.
53. Стефаненко Т., Этнопсихология, Москва: "Академический проект", 1999 г.
54. Стратегия развития. О некоторых проблемах национальной безопасности, Ереван, НОФ "Нораванк", 2010
55. Тарас А. Е., Заруцкий Ф. Д., Подготовка разведчика, М., ХАРВЕСТ, 2002.
56. Шерковин Ю. А., Психологические проблемы массовых информационных процессов, М., "Мысль", 1973.
57. Hovland C., Lumsdaine A. and Sheffield F., Experiments on Mass Communication Princeton, 1949.
58. Park R., Race and Culture. Glencoe (Ill): Free Press, 1950.
59. Shibutani T. and K. M. Kwan, Ethnic stratification: A Comparative Approach. New York: Macmillan Co., 1965.

60. Sampson E., Social Psychology and Contemporary Society. N. Y. , 1971.
61. Stonequist E. V. ,The Marginal Man, N. Y., “Scribner’s”, 1937.
62. Worchel S. a. o., Understanding Social Psychology. 4th Ed., New York, 1988, pp. 688.

Բովանդակություն

Հեղինակի կողմից..... 3

Գլուխ 1

Ի՞նչ է հոգեբանական անվտանգությունը 5

1.1. Պատկերացում հոգեբանական անվտանգության մասին..... 5

1.2. Քարոզչության հոգեբանական նկարագիրը 12

Գլուխ 2

Ադրբեջանական քարոզչությունն ընդդեմ Հայաստանի... 23

2.1. Ադրբեջանական քարոզչության ընդհանուր բնութագիրը 23

 2.1.1. Հրադադարի ռազմագիտական և սոցիալ-հոգեբանական նկարագիրը 31

2. 2. Ադրբեջանական քարոզչության առավելագույն ծրագիրը..... 47

 2.2.1. «Համարժեք պատասխանի» մարտավարությունը 58

2.3. Ադրբեջանական քարոզչության նվազագույն ծրագիրը..... 71

Գլուխ 3

Նկատառումներ Հայաստանի հոգեբանական անվտանգության ապահովման վերաբերյալ 77

3.1. Ինչպե՞ս պետք է հակազդել ադրբեջանական քարոզչությանը..... 77

 3.1.1. Ադրբեջանական քարոզչության խոցելի կողմերն ու առավելությունները 79

3.2. Ադրբեջանական հանրության հոգեբանորեն խոցելի կողմերը..... 86

3.3. Հայաստանյան հանրության դեմ տարվող թշնամական քարոզչության հետևանքների չեզոքացման ուղիները 102

3.4. Ինչպե՞ս կանխել հայաստանյան հանրության
դեմ տարվող թշնամական քարոզչությունից բխող
վտանգները..... 108

 3.4.1. Երկու խոսք քաղաքական մշակույթի մասին..... 109

 3.4.2. Ճշգրիտ եզրույթների օգտագործման
անհրաժեշտությունը..... 110

 3.4.3. Հոգեբանորեն պատրաստ պահել
 հայաստանյան հասարակությունը ադրբեջանական
 հավանական ագրեսիային 126

 3.4.4. Թուրքերի հանդեպ իրատեսական
 պատկերացումների ամրապնդումը 138

Գրականություն..... 158

Ջամայան
Դավիթ Վրույրի

Հայ - ադրբեջանական հակամարտության
քարոզչական նկարագիրը

Հայաստանի Հանրապետության և Արցախի
հոգեբանական անվսանգության խնդիրները
հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում

Շապիկի ձևավորումը՝ Ա. Աղաբաբյանի
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Հրատ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 10,25:
Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1